ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ»

2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ելնելով առկա մարտահրավերներից և արդեն իսկ արձանագրված ձեռքբերումներից՝ «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Ծրագիր), որպես վերջնական նպատակ, սահմանվել է ազգային և համամարդկային արժեքների վրա հիմնված, Հայաստանի Հանրապետության զարգացմանը միտված արդյունավետ և միջազգայնորեն մրցունակ կրթական համակարգի ձևավորումը, որը յուրաքանչյուրին կյանքի բոլոր փուլերում հնարավորություն կտա ստանալու իր կարիքներին և ընդունակություններին համապատասխան որակյալ կրթություն, և կհանրահռչակվի կրթությունը որպես հանրային բարիք՝ ապահովելով կրթության բոլոր շահակիցների մրցունակ մասնագիտական պատրաստվածությունը, ձևավորելով ակտիվ քաղաքացիական դիրքորոշումը և մասնակցային ժողովրդավարության վրա հենվող հանրային համերաշխությունը:

Ծրագրի վերջնական նպատակի իրականացման համար մինչև 2030 թվականը սահմանված ռազմավարական ուղղությունները երեքն են՝ համընդհանուր ներառական սովորողակենտրոն և մասնակցային կրթական միջավայրի ստեղծում, կրթության արդյունավետության բարձրացում, կրթական ծառայությունների և արտադրանքի միջազգայնացում ու արտահանում: Ծրագրի 2025 թվականի սույն հաշվետվությունը ներկայացված է նշված երեք ռազմավարական ուղղությունների շրջանակում իրականացված միջոցառումների տրամաբանությամբ՝ դրանք խմբավորելով ըստ ոլորտային նպատակների: Մինչև 2030 թվականն ակնկալվող վերջնարդյունքների առաջընթացն ըստ առանձին ցուցանիշների ներկայացված է սույն հաշվետվությանը կից Հավելվածում:

Միաժամանակ, կրթության համակարգի ձեռքբերումների առումով, 2026 թվականի ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլոբալ կրթության մոնիտորինգի զեկույցում արձանագրվել է Հայաստանի կրթական համակարգի էական առաջընթացը միանգամից երեք՝ ներառականության, պարտադիր կրթությունից դուրս մնացող երեխաներին ուղղված քաղաքականության և մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտի զարգացման ուղղություններով:

Զեկույցի «Հավասարություն» բաժնում որպես առանձին ուսումնասիրություն և հաջողված փորձ՝ ներկայացված է Հայաստանի համընդհանուր ներառական կրթության համակարգը: Մասնավորապես՝ հատուկ դպրոցներ հաճախող և հաշմանդամություն ունեցող երեխաների մասնաբաժինը 2015 թվականին 37.5%-ից նվազել է՝ 2023 թվականին կազմելով 6.5%, ինչը նշանակում է, որ այս երեխաների գերակշիռ մասը սովորում է հանրակրթական դպրոցներում: Հայաստանում այս ցուցանիշի փոփոխությունը վերջին ութ տարում ամենամեծն է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական Ասիայի տարածաշրջաններում՝ հաշվի առնելով, որ այդ տարածաշրջանների երկրների մեծ մասը ևս այս ոլորտում բարեփոխումներ է իրականացրել: Հայաստանը ներկայացված է որպես նշված տարածաշրջանի հատուկ դպրոցներում հաշմանդամություն ունեցող երեխաների մինչև 10% ընդգրկվածություն (որքան ցածր է այս ցուցանիշի արժեքը, այնքան ավելի ներառական է կրթական համակարգը) ունեցող երկիր՝ Վրաստանի, Լիտվայի և Մոլդովայի հետ:

2015-2023 թվականներին Հայաստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող) երեխաների թիվը հատուկ դպրոցներում 75%-ով նվազել է, փոխարենը նրանց թիվը կրկնապատկվել է հանրակրթական դպրոցներում: Այսպիսով, 2025 թվականի տարեվերջի դրությամբ 9700-ից ավելի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ սովորում են հանրակրթական դպրոցներում և միայն շուրջ 460 երեխա՝ հատուկ հանրակրթական դպրոցներում:

Զեկույցում անդրադարձ է կատարված նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացի շարունակական բարելավմանը և ծնողների շրջանում իրազեկվածության բարձրացմանը, ինչի արդյունքում 2011 թվականից ի վեր գնահատված երեխաների թիվն աճել է 30%-ով:

Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների ցուցանիշը ևս ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի զեկույցում. այս մասով ևս Հայաստանն առաջընթաց է գրանցել: Այսպիսով, 2015 թվականի համեմատ՝ 2024 թվականին պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների մասնաբաժինը տարրական կրթության մակարդակում 8%-ից իջել է 4%-ի, հիմնական կրթության մակարդակում՝ 8%-ից 6%-ի, իսկ ավագ մակարդակում՝ 24%-ից 11%-ի: Առաջընթաց է արձանագրվել նաև հանրակրթության ավագ մակարդակում ավարտելիության գենդերային ցուցիչի մասով, որը 2015 թվականի 5.1 միավորից դարձել է 4.7 միավոր, ինչը նշանակում է, որ աղջիկների և տղաների միջև տարբերությունը որոշակիորեն նվազել է՝ վկայելով գենդերային անհավասարության աստիճանական կրճատման մասին:

Զեկույցում Հայաստանը ներկայացված է նաև որպես մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում ներգրավված սովորողների մասնաբաժնի աճ գրանցած երկիր 2000-2024 թվականներին: Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում այս ցուցանիշով, բացի Հայաստանից, առաջատար են նաև Տաջիկստանը, Ուկրաինան, Ղրղզստանը և Մոլդովան:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նպատակ 1. Նախադպրոցական կրթության ոլորտում բովանդակության, մասնագիտական կարողությունների և որակի շարունակական զարգացում ու հզորացում

- *Նախադպրոցական հաստատությունների մանկավարժների վերապատրաստման կրթական ծրագրերի համապատասխանեցում նախադպրոցական կրթության բովանդակության պահանջներին*

ՀՀ կառավարության 2025 թվականի նոյեմբերի 14-ի N 1594-Ն որոշմամբ փոփոխություններ ու լրացումներ են կատարվել նախադպրոցական կրթության պետական չափորոշչում: Մանկավարժական աշխատողների պարտադիր վերապատրաստման բովանդակությունը ևս վերանայվել է՝ համապատասխանեցնելով նախադպրոցական կրթության բովանդակությանը:

• *Նախադպրոցական հաստատությունների աշխատակազմի պարբերական վերապատրաստումների կազմակերպում՝ մեդիա գործիքների ու SS կիրառմամբ, այդ թվում՝ ծնողավարման դասընթացների, մանկավարժության և կառավարման նորարարական մոտեցումների կիրառման ուղղությամբ*

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի մայիսի 31-ի N790-Ա/2 հրամանով փոփոխություն էր կատարվել նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների վերապատրաստման չափորոշչում և օրինակելի ծրագրում՝ ներառելով մեդիա գործիքների ու SS կիրառմամբ, այդ թվում՝ ծնողավարման դասընթացների, մանկավարժության և կառավարման նորարարական մոտեցումների կիրառման ուղղությամբ թեմաներ:

Միաժամանակ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի հուլիսի 25-ի N 27-Ն հրամանով հաստատված «Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենների և մանկավարժական աշխատողների վերապատրաստող կազմակերպության ընտրության և վերապատրաստման կարգի» համաձայն՝ ամեն տարի իրականացվում են նախադպրոցական մանկավարժների վերապատրաստման դասընթացներ:

2022 թվականից ներդրված պարտադիր վերապատրաստման ծրագրին ընդհանուր առմամբ մասնակցել է շուրջ 5 600 նախադպրոցական մանկավարժ, որոնցից 1 100-ը՝ 2025 թվականին: Բացի այդ, վերապատրաստվողների շրջանակը ընդլայնվել է՝ 2025 թվականին վերապատրաստվել են նաև շուրջ 750 մանկավարժի օգնականներ:

Նաև նախադպրոցական կրթության չափորոշչի ներդրման շրջանակում ընդհանուր առմամբ վերապատրաստվել է նախադպրոցական ուսումնական հաստատության շուրջ 1 800 մանկավարժական աշխատող, որոնցից 200-ը՝ տնօրեն:

Վերապատրաստվածների համամասնությունը շուրջ 75% է: Վերապատրաստված մանկավարժների կողմից իրականացվում են ծնողավարման դասընթացներ ու խորհրդատվություններ:

Ծնողավարման դասընթացներ իրականացնող նախադպրոցական ուսումնական հաստատությունների մասնաբաժինը հասցված է շուրջ 40 %-ի:

• *Նախադպրոցական հաստատությունների ղեկավարման իրավունքի նպատակով հավաստագրման մեխանիզմի գործարկում*

«Նախադպրոցական կրթության մասին» օրենքի պահանջի համաձայն՝ 2024 թվականի հունիսի 1-ից անժամկետ պայմանագրով պաշտոնավարող համայնքային ենթակայությամբ գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրեններին ներկայացված էր հավաստագրման պահանջ: Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավարման իրավունքի նպատակով հավաստագրման մեխանիզմը գործարկված է:

2025 թվականի տարեվերջի դրությամբ հավաստագրված տնօրեն ունեցող նախադպրոցական ուսումնական հաստատությունների մասնաբաժինը հասցված է շուրջ 90%-ի:

• *Նախադպրոցական հաստատություններում մասնագիտական կադրերի առկայության ապահովում՝ տրանսպորտային ծախսերի փոխհատուցման միջոցով*

«Համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների տրանսպորտային ծառայությունների դիմաց

փոխհատուցման կարգը» հաստատվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 12-ի N 80-Ն հրամանով:

Կարգի կիրարկումը տեղափոխվել է 2027 թվական, պայմանավորված բյուջեում նախատեսված ֆինանսական միջոցների վերանայման պահանջով:

- *Մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված համակարգի ներդրում՝ նախադպրոցական հաստատությունների մանկավարժներին տարակարգի շնորհման գործընթացի միջոցով*

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի մարտի 2-ի N16-Ն հրամանով հաստատված՝ «Համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման և տարակարգ ստացած մանկավարժական աշխատողներին պետական բյուջեի միջոցների հաշվին հավելավճար տրամադրելու կարգի» համաձայն, տարակարգ ստացել է 79 մանկավարժական աշխատող (որոնցից 53-ը՝ 2025 թվականին):

Վերջիններս պետական բյուջեի միջոցներից ստանում են «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքի 1-ին հոդվածով սահմանված՝ 30 և 40 տոկոսի չափով հավելավճար: Տարակարգի շնորհման ցածր ցուցանիշը պայմանավորված է դիմելիությամբ, սակայն ներկայում իրականացվող ծրագրերը, ինչպես նաև մանկավարժների և տնօրենների վերապատրաստումներն առավել ակտիվացնում են ոլորտը:

- *Նախադպրոցական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի շարունակական վերանայում՝ ուղղորդելով դեպի ուսումնառության վերջնարդյունքները*

ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N 744-Ն որոշմամբ հաստատվել էր «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը»: Վերջինիս ներդրման նպատակով, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի նոյեմբերի 16-ի հրամաններով հաստատվել են նախադպրոցական կրթական համալիր ծրագրեր՝ տարիքային բոլոր խմբերի համար, որոնք հետագայում վերանայվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի սեպտեմբերի 19-ի հրամաններով:

2025 թվականի տարեվերջի դրությամբ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը ամբողջական ներդրվել է հանրապետության բոլոր մանկապարտեզներում և նախակրթարաններում:

Գործել է մենթոր մանկապարտեզների ցանց, որն աշխատանքներ է իրականացրել շուրջ 3900 մանկավարժական աշխատողների հետ՝ չափորոշչի ներդրմանն ուղղված վերապատրաստումների և շարունակական մեթոդական աջակցության ձևաչափերով:

Նպատակ 2. Նախադպրոցական կրթության կառավարման և ֆինանսավորման ծախսարդյունավետության ապահովում՝ այդ թվում մասնավոր ոլորտի ծառայությունների զարգացման միջոցով

- *Պետական բյուջեից համայնքային մանկապարտեզներում կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԶԱՊԿՈՒ) երեխաների համար պայմանների ապահովման ֆինանսավորում*

ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի N1169-Ն որոշմամբ հաստատված՝ «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի

հաշվարկով ֆինանսավորման, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանելու մասին կարգի» համաձայն, պետական բյուջեի միջոցների հաշվին կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար հաստատության մեկ սանի հաշվարկով ֆինանսավորումը իրականացվում է 2022 թվականի սեպտեմբերի 1-ից:

Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրումը նախադպրոցական կրթության ոլորտում մեկնարկել է 2022 թվականին՝ 3 մարզերում, իսկ 2023 թվականից այն ներդրվել է հանրապետության ողջ տարածքում: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն իրականացվում է ողջ ուսումնական տարվա ընթացքում: Համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացի շրջանակներում՝ 2025 թվականին իրականացվել է 548 նախադպրոցական տարիքի երեխայի՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում: Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ է ստացել 1719 սան: Նշված երեխաների նախադպրոցական անվճար կրթությունը 100%-ով ապահովվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Ինչպես նաև կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նախադպրոցական կրթության ֆինանսավորման նկատմամբ գործում է 1-4% բարձրացված չափաքանակ:

- *Պետական բյուջեից համայնքային մանկապարտեզներում սոցիալապես անապահով ընտանիքների, ինչպես նաև շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամվող երեխաների կրթության ֆինանսավորում*

Համաձայն ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի N 1169-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» N 90-Ն որոշման, ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված սոցիալապես անապահով ճանաչված ընտանիքների երեխաների՝ պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար նախադպրոցական կրթությունը կկազմակերպվի 2026 թվականի սեպտեմբերի մեկից:

- *Նախադպրոցական կրթության ծառայությունների զարգացած ցանցի ներդրում՝ մասնավորի հետ համագործակցությամբ*

Շարունակվել է նախադպրոցական ուսումնական հաստատությունների և նախադպրոցական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (այսուհետ՝ հաստատություն) լիցենզավորման գործընթացը, որը նախադպրոցական կրթության որակի վերահսկողության երաշխիք է:

2025թ. ընթացքում լիցենզավորվել է 48 հաստատություն:

2025 թվականի տարեվերջի դրությամբ ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում լիցենզավորված ոչ պետական հաստատությունների թիվը 249 է, ինչը քաղաքային բնակավայրերում գործող համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների թվի շուրջ 60 տոկոսն է:

Լիցենզավորված ոչ պետական հաստատություններում ընդգրկված սաների թիվը շուրջ 10 800 է: Քաղաքային բնակավայրերում նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների 22,3%-ն ընդգրկված է մասնավոր մանկապարտեզներում:

• *Նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական ամբողջական համակարգի գործարկում*

Նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական ամբողջական համակարգը գործարկված է 2023-2024 ուսումնական տարվանից, տվյալները պարբերաբար հավաքագրվում և վերլուծվում են համակարգի բոլոր հաստատությունների համար:

Նպատակ 3. 0-5 տարեկան երեխաների բոլոր խմբերի համար նախադպրոցական ծառայությունների ծածկույթի ամբողջական ապահովում գյուղական և քաղաքային համայնքներում

• *Նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների քարտեզագրում, ըստ քարտեզագրման արդյունքների հիմնանորոգում և վերակառուցում՝ ստեղծելով տարբեր կրթական կարիքներ ունեցող երեխաների պահանջներին համապատասխանող և անվտանգ միջավայր*

500 մանկապարտեզների և նախակրթարանների կառուցման, վերակառուցման և վերանորոգման/հիմնանորոգման ծրագրի շրջանակում ներառված են 505 մանկապարտեզներ և նախակրթարաններ: Ընդհանուր առմամբ 2021-2025թթ. ընթացքում կառուցվել, վերակառուցվել, հիմնանորոգվել/վերանորոգվել են շուրջ 280 մանկապարտեզներ և նախակրթարաններ:

• *Նախադպրոցական ծառայություններ չունեցող համայնքներում, ներառյալ ազգային փոքրամասնությունների կոմպակտ բնակության վայրերում, նախադպրոցական հաստատությունների, այդ թվում՝ այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդրում*

Իրականացվել է նախադպրոցական ծառայություններ չունեցող բնակավայրերի նոր քարտեզագրում, որի արդյունքում հստակեցվել է նախադպրոցական ծառայություններ չունեցող բնակավայրերը թիվը: Նախադպրոցական ծառայություններ չունեցող բնակավայրերը թիվը հասցված է 87-ի, որտեղ աշխատանքներ են իրականացվում այլընտրանքային նախադպրոցական ծառայություն ներդնելու ուղղությամբ: Միաժամանակ նոր կառուցված նախադպրոցական հաստատությունների թիվը հասցված է 46-ի, իսկ նոր ներդրված այլընտրանքային ծառայությունների և/կամ համայնքների թիվը հասցված է 26-ի: Բոլոր նորակառույց և վերանորոգված մանկապարտեզները հագեցվում են ժամանակակից պահանջներին համապատասխանող նոր գույքով:

• *Նախադպրոցական հաստատություններում աղետների դիմակայունության և ճգնաժամային իրավիճակներին արձագանքելու պայմանների ապահովում և կարողությունների զարգացում*

Երևան քաղաքում և հանրապետության 10 մարզերում գործող նախադպրոցական հաստատությունների մասնաբաժինը, որտեղ մշակված և հաստատված են աղետների ռիսկերի կառավարման պլանները, 2025թ. հասցված է շուրջ 90%-ի:

• *Նախադպրոցական հաստատություններում զարգացնող միջավայրի ապահովում՝ ուսումնական գույքի, դիդակտիկ նյութերի, զարգացնող խաղերի շարունակական արդիականացման միջոցով*

ՀՀ կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 3-ի N 1581-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող մանկապարտեզ և նախակրթարան» ծրագրում ընդգրկված մանկապարտեզների և նախակրթարանների ցանկը:
Հաստատված ցանկից 2025 թվականի տարեվերջի դրությամբ կառուցվել, վերակառուցվել, հիմնանորոգվել/վերանորոգվել, գույքով և զարգացնող միջավայրով ապահովվել է 280-ը, ինչը ցանկում ընդգրկված հաստատությունների շուրջ 56%-ն է:

- *Պետական բյուջեից համայնքային մանկապարտեզներում 0-2 տարեկան երեխաների խմբերի ֆինանսավորում՝ ապահովելով բոլոր խոշորացված համայնքներում մսուրի ծառայությունների հասանելիություն*

ՀՀ ԿԳՄՍ նախարարի համապատասխան հրամաններով հաստատվել են Վաղ մանկության տարիքի 1-ին (ծննդից մինչև 1 տարեկան) և Վաղ մանկության տարիքի 2-րդ (1-2 տարեկան) խմբերի կրթական ծրագրերը:

Ինչպես նաև ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 4-ի N 1759-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի «Պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների վարձատրության խմբերի դասակարգման չափանիշները սահմանելու մասին» N 1759-Ն որոշման մեջ:

Վերոնշյալ փոփոխությամբ, մասնավորապես, ավելացվել են մսուրային խմբերում դաստիարակի, դաստիարակի օգնականի և բուժքրոջ հաստիքային միավորները:

Կարևորելով նշված տարիքային խմբերի երեխաների խնամքի և սննդի կազմակերպման, ինչպես նաև զարգացման տարիքային առանձնահատկությունները՝ «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի համակարգմամբ կազմակերպվել են տվյալ խմբերի դաստիարակների, օգնականների և հաստատության բուժքրոջ կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումներ:

2025 թվականի տարեվերջի դրությամբ Երևանի երկու մանկապարտեզներում արդեն իսկ գործում են 1 տարեկանից սկսած նախադպրոցական ծառայություններ: 2026 թվականի սկզբից 1 տարեկաններին կընդունեն ևս 8 մանկապարտեզներում, այդ թվում՝ Վանաձորում, Հրազդանում, Գյումրիում: Երևանում կգործի նաև մեկ խումբ՝ 6-12 ամսական երեխաների համար: Աշխատանքներ են տարվել ներդրվող համայնքների հաստատություններում ըստ անհրաժեշտության ֆիզիկական պայմանների բարելավման և գույքով հագեցնելու ուղղությամբ:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նպատակ 1. Հանրակրթության ոլորտում բովանդակության, մասնագիտական կարողությունների և որակի շարունակական զարգացում և հզորացում, ուսուցչի մասնագիտության գրավչության բարձրացում

- *Հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի շարունակաբար վերանայում՝ ուղղորդելով դեպի ուսումնառության վերջնարդյունքները,*

ուսուցչի և դպրոցի ինքնավարության և մասնակցայնության մեծացումը և ստեղծարարության խթանումը

2025-2026 ուսումնական տարում ՀՀ բոլոր ուսումնական հաստատությունների 1-11-րդ դասարաններում (բացառությամբ 12-րդի), իսկ Տավուշի մարզի ուսումնական հաստատությունների բոլոր դասարաններում ներդրվել է նոր չաափորոշիչը: Չափորոշչի ներդրման ժամանակահատվածում տարբեր կառույցներից և շահառու խմբերից ստացված առաջարկությունների հիման վրա, անհրաժեշտություն է առաջացել խմբագրել ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշմամբ հաստատված հանրակրթության նոր չափորոշիչը՝ հանրակրթական դպրոցներին ուսումնական գործընթացի պլանավորման և իրականացման շրջանակում առավել մեծ ճկունության հնարավորություն ընձեռելով: Փոփոխության արդյունքում հանրակրթության պետական չափորոշիչն ու չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը շարադրվել է նոր խմբագրությամբ: Հիշյալ նախագիծը ներկայացվել է շահակից մարմիններին, դրվել է հանրային քննարկման՝ e-draft.am հարթակում:

Չափորոշչի հաստատումից հետո, ՀՀ ԿԳՄՍ նախարարի համապատասխան հրամաններով կհաստատվեն վերանայված առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը: Միևնույն ժամանակ կրեդիտային համակարգի ներդրման շրջանակներում մասնավորի հետ համագործակցությամբ ներդրված «Արհեստական բանականության» (ԱԲ) դասընթացը ներկայացվել է միջազգային հարթակներում և ճանաչվել հաջողված: ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համագործակցությամբ՝ այն համադրվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի ԱԲ ուղղությամբ աշակերտների ու ուսուցիչների կարողունակությունների շրջանակի սկզբունքներին՝ Հայաստանին դարձնելով այս շրջանակը փորձարկող առաջին երկիրը:

Ինչպես նաև «Արհեստական բանականություն (ԱԲ) սերունդ» դպրոցական ծրագիրը ճանաչվել է ASU+GSV միջազգային կրթական մրցույթի լավագույն 10 նորարարություններից մեկը և 2026 թվականի ապրիլի 12-15-ին ներկայացված կլինի Սան Դիեգոյում կայանալիք ASU+GSV գագաթնաժողովում: Ծրագրի դպրոցների ցանցը՝ ի դեմս Վաղարշապատի թիվ 5 ավագ դպրոցի, ընդգրկվել է մրցույթի «Ազդեցություն» կատեգորիայի լավագույն 5-ում՝ ի թիվս այն նախաձեռնությունների, որոնք, միավորելով կրթությունն ու տեխնոլոգիան, վերափոխում են ոչ միայն դպրոցը, այլև՝ ողջ հանրակրթական համակարգը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2025 թվականի ապրիլի 11-ի N849-Ա/2 հրամանով ընդլայնվել է ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկը՝ 15-ից հասցնելով 26-ի, ընդգրկելով ՀՀ բոլոր մարզերը: Ծրագրի մասնակից մարզային դպրոցի աշակերտը, մասնակցելով ԱԲ միջազգային օլիմպիադային, նվաճել է բրոնզե մեդալ: 2025-2026 ուսումնական տարում ծրագրում ընդգրկված է շուրջ 800 սովորող:Մինչև 2026 թվականը նախատեսվում է ծրագիրը հասանելի դարձնել հանրակրթական դպրոցների աշակերտների ավելի քան 80%-ի համար:

- *Հանրակրթական դասագրքերի վերահրատարակում՝ վերանայված առարկայական չափորոշիչներին, ծրագրերին և սահմանված ստանդարտներին համապատասխան*

Հանրակրթության պետական չափորոշչի փուլային ներդրմամբ պայմանավորված, վերանայված առարկայական չափորոշիչներին, ծրագրերին և սահմանված ստանդարտներին համապատասխան ստեղծված ու վերահրատարակված

հանրակրթական առարկաների դասագրքեր ներդնելու նպատակով, հայտարարվել էին 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների դասագրքերի ստեղծման դրամաշնորհային մրցույթներ: Մրցույթների մասնակիցների հայտերը բացվել են 2025 թվականի փետրվարի 3-ին, 5-ին, 13-ին, մայիսի 2-ին և հոկտեմբերի 1-ին: Արդյունքում 65 անուն /94 օրինակ/ դասագիրք երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի համապատասխան հրամաններով:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից 2025 թվականի դասագրքերի ստեղծման դրամաշնորհային մրցույթին 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների չներկայացրած դասագրքերի համար հայտարարվել են դասագրքերի ստեղծման նոր դրամաշնորհային մրցույթներ, որոնք կամփոփվեն 2026 թվականին՝

«Հայաստանի պատմություն 10», «Քիմիա 10», «Կենսաբանություն 10», «Հայաստանի պատմություն 11», «Քիմիա 11», «Կենսաբանություն 11», «Հանրահաշիվ 11», «Բնագիտություն 11», «Ռուսաց լեզու 11», «Հայաստանի պատմություն 12», «Քիմիա 12», «Կենսաբանություն 12»:

«Ֆրանսերեն» առարկայի 5-12-րդ դասարանների դասագրքեր ստեղծելու համար ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը համագործակցում է ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատան հետ:

2023-2025 թվականներին ընդհանուր առմամբ ստեղծվել է 158 անուն դասագիրք:

Մրցակցային ընթացակարգերի արդյունքում մեկ դասագրքի արժեքը միջինում նվազել է 23-26%-ով:

- *Ուսուցիչների մասնագիտական առաջխաղացման, ներառյալ ատեստավորման, հնարավորությունների ընդլայնում՝ փոխկապակցելով այն աշխատանքի արժանապատիվ վարձատրության մեխանիզմների և մասնագիտական չափանիշների հետ*

ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների համաձայն՝ կամավոր ատեստավորման արդյունքում 70-79, 80-89, 90-100% արդյունք ցուցաբերած ուսուցիչները համարվում են ատեստավորված, հավելավճարը հատկացվում է համապատասխան %-ի չափով, փոխվում է նաև դրույքաչափը՝ սահմանվելով 200.000 դրամ՝ մեկ դրույք զբաղվածության համար, որի նկատմամբ կիրառվում է համապատասխան չափով հավելավճարը: Կամավոր ատեստավորման գործընթացում ուսուցիչների համար բարելավող նորմեր նախատեսող կարգավորումների շրջանակներում 60-69% արդյունք ցուցաբերած ուսուցիչները ունեն դրույքաչափի փոփոխություն՝ առանց հավելավճարի հատկացման:

2025 թվականի դրությամբ կամավոր ատեստավորումը հաջողությամբ հաղթահարել և այժմ ատեստավորված է 9 602 անձ կամ ամեն 3-րդ ուսուցիչը: 2025 թվականին ուսուցիչների կամավոր ատեստավորմանը մասնակցել է 7 228 անձ, որոնցից 4 982-ը հաղթահարել է 60% շեմը: Միևնույն ժամանակ ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշման հավելվածը լրամշակվել է: Շարունակվում է հավելավճարի տրամադրումը՝ նախորդ տարիներին կամավոր ատեստավորումը հաղթահարած ուսուցիչներին:

2023 թվականին ուսուցիչների տարակարգի տրամադրման նոր կարգով տարակարգ է ստացել 101, 2024 թվականին՝ 285 ուսուցիչ, իսկ 2025 թվականին՝ 831 ուսուցիչ՝ ունենալով 10-50% հավելավճար: Նրանցից 135–ը ստացել է 4–րդ աստիճանի տարակարգ, որի դեպքում հավելավճարի չափը կազմում է 50%:

Արդյունքում բարձրացել է բազմաթիվ ուսուցիչների վարձատրությունը՝ 300-400 հազար ՀՀ դրամ աշխատավարձ ստանում է 2 952 ուսուցիչ, 400-500 հազար ՀՀ դրամ՝ 1 362 ուսուցիչ, 500-600 հազար ՀՀ դրամ՝ 220 ուսուցիչ, 600 – 700 հազար ՀՀ դրամ՝ 70 ուսուցիչ, և 700 հազար ՀՀ դրամ և ավելի՝ 13 ուսուցիչ:

- *Հանրակրթական ուսումնական հաստատությունների աշխատակազմի պարբերական վերապատրաստումների իրականացում, այդ թվում՝ մանկավարժության և կառավարման նորարարական մոտեցումների, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ*

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի մարտի 5-ի N 24-Ն հրամանով հաստատված կարգի պահանջների համաձայն, երաշխավորված կազմակերպություններն իրենց կազմած ժամանակացույցով իրականացրել են վերապատրաստման գործընթացը: Ներկայում ուսուցիչների ընդհանուր թվի 20%-ի հերթական վերապատրաստման և ատեստավորման գործընթացն իրականացվում է ուսուցչի մասնագիտական կարիքի գնահատման արդյունքների հիման վրա, համաձայն որի՝ 2025թ. գնահատվել են ատեստավորման ենթակա 2899 ուսուցչի մասնագիտական զարգացման կարիք՝ համապատասխան վերապատրաստումները մեկնարկելու համար, որոնցից 3 տարվա շրջափուլով վերապատրաստման ենթակա է 2466 ուսուցիչ, 5 տարվա շրջափուլով՝ 433 ուսուցիչ: Եվս 665 ուսուցչի մոտ գնահատվել է առարկայական գիտելիքի իմացության կարիք, որոնք վերապատրաստվել և մասնակցել են կամավոր ատեստավորմանը:

- *Գյուղական մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցների և ԲՏՃՄ առարկաների ուսուցիչների հավելյալ խրախուսման մեխանիզմների ներդրում*

Գյուղական մինչև 100 սովորող ունեցող դպրոցների և ԲՏՃՄ առարկաների դասավանդող ուսուցիչների պահանջարկի լրացման արդյունավետ գործիքակազմը ներդրված է: Խրախուսման մեխանիզմի ներդրումը մեծացրել է հանրակրթական ուսումնական հաստատություններում ԲՏՃՄ առարկաների դասավանդման գրավչությունը և կրճատել գյուղական մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցներում ուսուցիչների պակասը:

Բնագիտական և ՏՏ ոլորտների առարկաներ դասավանդող 9 200 ուսուցիչ կամ ուսուցիչների շուրջ 30%-ն ստանում է 25% հավելավճար: Գյուղական մինչև 100 սովորող ունեցող դպրոցների ուսուցիչների խրախուսման ծրագիրն ունի շահառու 3 120 ուսուցիչ, որոնք անկախ իրենց դասավանդած դասաժամերից ստանում են մինչև մեկ դրույք ուսուցչական աշխատավարձ:

2024-2025թթ. դպրոց են մուտք գործել ավելի քան 4 000 նոր ուսուցիչներ, որոնց կեսից ավելին աշխատում են գյուղական բնակավայրերում: 80%-ը մինչև 45 տարեկան անձինք են:

Վերոնշյալ երկու ծրագրերի նպատակն է՝ խրախուսել ուսուցիչների մուտքը հատկապես գյուղական բնակավայրերի փոքր համակազմ ունեցող ուսումնական հաստատություններ՝ համալրելով թափուր հաստիքները և բարձրացնելով աշխատանքի գրավչությունը դպրոցում՝ ապահովելով սովորողների կրթության իրավունքը:

- *Մանկավարժի որակավորման ճկուն մեխանիզմների մշակում և ներդրում, այդ թվում՝ երկակի որակավորմամբ մանկավարժների պատրաստում*

2024 թվականի հոկտեմբերի 24-ին ընդունված «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N ՀՕ-387-Ն օրենքով ամրագրվել են գործընթացը կարգավորող լիազորող նորմեր, մասնավորապես Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները բավարարող անձով չհամալրվելու դեպքում ուսուցչի տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին կարող է դիմել նաև՝

1) տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող և տվյալ մասնագիտական կրթական ծրագրով կամ առանձին մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 30 կրեդիտ հավաքած անձը,

2) բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա (ԲՏՃՄ) առարկաների մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող անձը աշխատանքի ընդունվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով առնվազն 30 կրեդիտ հավաքելու պայմանով»:

Պահանջվող 30 կրեդիտ շնորհող դասընթացը կարող է կազմակերպել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կազմակերպությունը կամ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կրթական ծրագրով (մոդուլով): ՀՀ-ում 30 կրեդիտ ստացած և հանրակրթական ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչների թիվը 2025 թվականի տարեվերջին շուրջ 400 է:

Ինչպես նաև ներդրվել ու իրականացվում է երկակի որակավորում շնորհող /բակալավրի աստիճանում/՝ Մաթեմատիկա-ֆիզիկա, Մաթեմատիկա-ինֆորմատիկա, Կենսաբանություն-քիմիա, Աշխարհագրություն-բնագիտություն, Անգլերեն-գերմաներեն, Անգլերեն-ֆրանսերեն, Անգլերեն-ռուսերեն մասնագիտություններով ընդունելություն՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում և Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանում: ՀՀ կառավարության 2025 թվականի նոյեմբերի 27-ի N 1686-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով (առկա, հեռակա) 2026-2027 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը:

- *Ուսուցիչների նպատակային ուսուցման, ինչպես նաև հեռավոր համայնքներ գործուղման ծրագրերի և ընթացակարգերի վերանայում*

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասը լրացվել է նոր դրույթով, որի արդյունքում առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը նույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները բավարարող անձով չհամալրվելու դեպքում, ուսուցչի տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին կարող է դիմել նաև ուսուցչի որակավորում շնորհող բարձրագույն ուսումնական հաստատության առնվազն բակալավրի կրթական ծրագրով ուսումնառող ավարտական կուրսի ուսանողը՝ գյուղական բնակավայրի ուսումնական

հաստատությունում աշխատելու նպատակով, որի համար աշխատանքային պայմանագրով նախատեսված ժամանակահատվածը կհաշվարկվի որպես աշխատանքային ստաժ:

Ինչպես նաև ՀՀ կառավարության 2025 թվականի օգոստոսի 28-ի N 1242-Ն որոշմամբ հաստատվել է «Հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը»: Համաձայն նշված կարգի՝ տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցում է տրվում ՀՀ մարզերում տեղակայված հաստատությունների՝

այն ուսուցիչներին, որոնք հանդիսանում են իրենց փաստացի բնակության վայրից (համայնքից) տարբերվող այլ բնակավայրում տեղակայված (որի հեռավորությունն իրենց բնակության վայրից ավելի է 5 կմ-ից) հաստատության ուսուցիչ 0.5 և ավելի հաստիքային դրույքով.

այն սովորողներին, որոնք իրենց փաստացի բնակության վայրում (համայնքում, բնակավայրում) հաստատության բացակայությամբ պայմանավորված կամ իրենց փաստացի բնակության վայրում (համայնքում, բնակավայրում) առկա հաստատությունում տվյալ մակարդակի ծրագրի (հաշվի առնելով նաև լեզվային առանձնահատկությունները, ինչպես նաև ավագ դպրոցներում հոսքային և ենթահոսքային կրթության առկայությունը) բացակայությամբ պայմանավորված ուսումն ստանում են այլ բնակավայրում տեղակայված հաստատությունում: Սովորողներին փոխհատուցում տրվում է նաև քննության օրերի ընթացքում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 14-ի N40-Ն հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից մարզերի պետական ուսումնական հաստատություններ համապատասխան մասնագետ գործուղելու կարգը», որն ուղղված է ՀՀ մարզերի դպրոցներում առկա մանկավարժների մեծաթիվ թափուր հաստիքների համալրմանը: Գործուղված մասնագետներին տրվում են լրացուցիչ հատկացումներ:

ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի «2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության ծրագիրը հաստատելու մասին» N1756-Լ որոշման շրջանակներում, 2023 թվականի հոկտեմբերի 16-ից գործարկվել է https://kadrer.emis.am/ հարթակը, որում առկա են ուսուցչի թափուր հաստիքները՝ ըստ ՀՀ մարզերի:

Մարզերի դպրոցների մանկավարժների թափուր հաստիքների համալրմանն է ուղղված նաև էլեկտրոնային դասավանդման հնարավորությունը: 2025 դեկտեմբեր ամսվա դրությամբ 24 մենթոր դպրոցների ուսուցիչներ հեռավար դասավանդում են իրականացրել 110 գյուղական համայնքների դպրոցներում:

- *Նպատակային ծրագրերի մշակում և իրականացում՝ Սփյուռքի ներուժը, ինչպես նաև մասնավոր ոլորտի որակյալ կադրերին, այդ թվում՝ ԲՏՃՄ ուղղությամբ, հանրակրթական հաստատություններում դասավանդման գործընթացում ընդգրկելու նպատակով*

ԲՏՃՄ ուղղությամբ հանրակրթական հաստատություններում դասավանդման գործընթացը բարելավելուն ուղղված ծրագրի հիմնական շահառուները՝ ՀՀ պետական

հանրակրթական ուսումնական հաստատությունների /«Աշխարհագրություն», «Հայաստանի աշխարհագրություն», «Բնագիտություն», «Բնություն», «Կենսաբանություն», «Քիմիա», «Ֆիզիկա», «Ինֆորմատիկա», «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն»/ դասավանդող ուսուցիչներն են (բացառությամբ մաթեմատիկական առարկաների), իսկ փոխհատուցման շրջանակը՝ ՀՀ պետական բյուջե: Այս ծրագիրն առնչվում է հանրապետության բոլոր դպրոցների բնագիտական և տեղեկատվական տեխնոլոգիաների ուղղության ուսուցիչներին, որոնց աշխատավարձը 2023 թվականի սեպտեմբերից 25 տոկոսով բարձրացել է:

ՀՀ գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող պետական դպրոցների բոլոր ուսուցիչներին հավելավճար տրամադրելու արդյունքում կանխատեսվում է, որ կհամալրվեն հատկապես արհեստ, արվեստ բնագավառների և ԲՏՃՄ ոլորտի առարկաների ուսուցիչների թափուր տեղերը, ինչպես նաև բոլոր ուսուցիչների համար կապահովվի ֆինանսական որոշակի բարելավում, որովհետև այդ դպրոցներում ուսուցիչները գրեթե 1 դրույք ծանրաբեռնվածություն չեն ունենում: Մասնավորապես, սահմանված ամսական լրավճարը տրվում է մինչև 100 սովորող ունեցող հաստատության մինչև 1,0 դրույք ծանրաբեռնվածություն ունեցող ուսուցիչներին առավելագույնը 0,5 դրույքի չափով՝ մինչև 1,0 դրույքի համար սահմանված դրույքաչափի լրանալը:

Ուսուցիչների մասնագիտական զարգացման և վարձատրության բարձրացման փոխկապակցված մեխանիզմների ներդրման արդյունքում բարձրացել է ուսուցչի աշխատանքի գրավչությունը, ինչի շնորհիվ 2024-2025թթ. շուրջ 4 000 նոր ուսուցիչ է մուտք գործել համակարգ, որոնց թվում նաև մասնավոր ոլորտից և Սփյուռքից ներգրավված ուսուցիչներ են: Սփյուռքի ներկայացուցիչներ ընդգրկվել են նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցությամբ՝ «Դասավանդիր Հայաստան» կազմակերպության հետ իրականացվող ծրագրի շրջանակում, գյուղական դպրոցներում դասավանդելու նպատակով: Մասնավոր ոլորտից դասավանդողներ ներգրավվել են նաև Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) կողմից իրականացվող՝ «Արհեստական բանականության սերունդ» ծրագրում, որի շրջանակում 26 ուսումնական հաստատություններում սովորողներն ուսումնասիրում են խորացված հանրահաշիվ («Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր» առարկայի շրջանակում) և համակարգչային գիտություն (Python ծրագրավորում):

Մասնավորի լավագույն փորձագետների հետ համագործակցությամբ է իրականացվում նաև STEP.ai գիտության և տեխնոլոգիայի կրթական ծրագիրը: Ծրագրում ընդգրկված է 15 ուսումնական հաստատություն: STEP.ai կրթական ծրագիրը ՏՀՏ գործատուների միության, «Սինոփսիս Արմենիա»-ի և ՀԲԸՄ Հայկական վիրտուալ քոլեջի համագործացության արդյունքն է: STEP.ai կրթական ծրագրի «Արհեստական բանականություն» դասընթացը մշակվել է «Սինոփսիս Արմենիա» ընկերության ուսումնական դեպարտամենտի դասախոսապրոֆեսորական անձնակազմի կողմից, իսկ ծրագրի խորհրդատուներն են Սիլիկոնյան հովտի ՀԲԸՄ մասնագետները: Դասընթացն ապահովում է ԱԲ թեմաների համապարփակ լուսաբանում՝ հարմարեցված հանրակրթության պետական չափորոշչով սահմանված պահանջներին: Դպրոցների աշակերտները միջազգային օլիմպիադաներում արժանացել են 91 մեդալների՝ 13 ոսկե, 29 արծաթե, 49 բրոնզե:

• *Մանկավարժների և վարչական աշխատողների պատրաստման մասնագիտական կրթական ծրագրերի ու որակավորումների համապատասխանեցում հանրակրթության բովանդակությանը, այդ թվում՝ վերաորակավորման ճկուն մեխանիզմների ներդրմամբ*

Տարբեր բաղադրիչների շրջանակում իրականացվել է շուրջ 8635 մանկավարժական աշխատողների վերապատրաստում:

«Թիչ» գործիքով իրականացվել է 3700 մանկավարժական աշխատողի վերապատրաստում: Գործընթացը շարունակական է:

Նպատակ 2. Հանրակրթական ծրագրերի բազմազանության և հասանելիության ապահովում՝ ծառայությունների հասցեական տեղաբաշխման և տրամադրման միջոցով

• *Պարտադիր կրթության համակարգից (ՊՀԿ) դուրս մնացած երեխաների հաշվառման համակարգի արդյունավետ գործարկում*

Պարտադիր կրթության համակարգից (ՊՀԿ) դուրս մնացած երեխաների հաշվառման գործընթացը մինչև 2025թ. հունիս իրականացվում էր համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N154-Ն որոշմամբ հաստատված՝ «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգի»:

Սակայն գործող կարգը բարելավելու նպատակով, ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 26-ի N 842-Ն որոշմամբ այն շարադրվեց որպես՝ «Պարտադիր կրթությունից դուրս մնացած, ինչպես նաև պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկում գտնվող երեխաների բացահայտման և ուղղորդման կարգ»:

Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հաշվառման էլեկտրոնային համակարգի գործարկումը սկսվել է 2024 թվականի մայիսի 1-ից: էլեկտրոնային համակարգի գործարկումից մինչև 2025թ. պարտադիր կրթության համակարգ է վերադարձվել ավելի քան 8 000 երեխա: Կրթության համակարգ վերադարձած երեխաների ընդհանուր թվաքանակի մեջ 3329-ը երբևէ կրթության մեջ չեն եղել և համատեղ իրականացված աշխատանքների արդյունքում մուտք են գործել կրթության համակարգ:

Միևնույն ժամանակ, ՀՀ բոլոր դպրոցները հանրակրթության նոր չափորոշչի ներդրման շրջանակում իրականացնում են երկարօրյա ծառայություն: Երկարօրյա ծառայությունը գործում է սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքների հիման վրա, 2025-2026 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դրությամբ ձևավորված է 5 596 երկարօրյա խմբակ, որոնցում ընդգրկված է 32 166 սովորող:

• *Հանրակրթական ուսումնական հաստատությունների ներառականության ապահովում՝ ֆիզիկական և ուսումնական միջավայրերի հարմարեցման միջոցով*

Հանրակրթական ուսումնական հաստատությունների ներառականության ապահովման ցուցանիշը հաշվարկվում է 2 բաղադրիչով՝ ֆիզիկական և ուսումնական միջավայրերի հարմարեցման միջոցով:

ՀՀ հանրակրթական դպրոցների շուրջ 19%-ում ապահովված է ֆիզիկական միջավայրի մատչելիություն: Նշված ցուցանիշի մեջ ներառված են՝ ՀՀ կառավարության 300 դպրոց ծրագրի շրջանակում կառուցված, վերակառուցված, վերանորոգված,

հիմնանորոգված և շահագործման հանձնված դպրոցները (2026 թվականի մայիսի 1-ի դրությամբ՝ 134 դպրոց):

Խելամիտ հարմարեցումների ապահովման նպատակով ՀՀ ուսումնական հաստատություններին տրամադրվել է նպատակային ֆինանսավորում՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի «Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցներն ու նորմատիվները հաստատելու մասին» N 79-Ն հրամանի և 2025 թվականի սեպտեմբերի 1-ից՝ ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 26-ի «Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը, պետական բյուջեով նախատես ված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը սահմանելու, Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցները և նորմատիվները հաստատելու մասին» N 850-Ն որոշման համաձայն:

Հանրապետության դպրոցների շուրջ 93%-ում ապահովված է խելամիտ հարմարեցումների միջոցով ուսումնական միջավայրի հարմարեցում:

- *Հանրակրթական ուսումնական հաստատություններում մանկավարժա-հոգեբանական ծառայությունների հասանելիության ապահովում*

Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրմամբ, հանրապետության բոլոր հանրակրթական ուսումնական հաստատություններում առկա են մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ: Համաձայն ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 26-ի «Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը, պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը սահմանելու, ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցները և նորմատիվները հաստատելու մասին» N 850-Ն որոշման՝ հանրապետության բոլոր դպրոցներում նախատեսված են ուսուցչի օգնականի և հոգեբանի պարտադիր հաստիքներ: Ուսուցչի օգնականների հաստիքների շուրջ 100%-ը համալրված է համապատասխան մասնագետով: Հոգեբանների հաստիքը համալրված է հանրապետության 919 հանրակրթական ուսումնական հաստատություններում (շուրջ 66%): Հոգեբանի հաստիքի համալրումը դանդաղ է ընթանում, համայքներում համապատասխան մասնագետ չլինելու պատճառով:

- *Ծնողների հետ համագործակցության գործիքակազմի մշակում և ներդրում*

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2025 թվականի մայիսի 30-ի N 1249-Ա/2 հրամանով «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի (ԿԶՆԱԿ) և Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի (ՀՄԿ) կողմից համատեղ մշակված «Ծնողավարություն» ձեռնարկը երաշխավորվել է որպես ուսումնական նյութ: Այն ուղղված է դրական ծնողավարության հմտությունների զարգացմանը, նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների և ծնողական համայնքի հետ շարունակական համագործակցության, ինչպես նաև ներառականության մշակույթի կայացմանը:

ՀՄԿ-ի կողմից իրականացվել է «Երեխայի արդյունավետ կրթության և սոցիալական ներառման երաշխիքներ», «Խաղի նշանակությունը երեխայի զարգացման գործընթացում», «Ընտանիք-դպրոց համագործակցություն», «Մանկական վախեր», «Խմբային պարապմունքի կարևորությունը», «Ինչպես խթանել երեխայի խոսքը», «Ինչպես ճանաչել երեխաների տեսողության մասին նախազգուշացնող նշանները», «Մանկության հիմնախնդիրները 21-րդ դարում», «Լսում եմ, հասկանում եմ, աջակցում եմ» թեմաներով 37 վերապատրաստում՝ 899 ծնողների համար:

«Ծնողավարություն» ձեռնարկի հիման վրա ԿՀՆԱԿ հիմնադրամի կողմից 2025 թվականի մայիս-հունիս ամիսներին իրականացվել են վերապատրաստումներ՝ 55 մենթորների, հանրակրթական ուսումնական հաստատությունների 224 դասղեկների և տնօրենի տեղակալների համար: 2025 թվականի հունիս-հուլիս ամիսներին մենթորները աշխատել են 100 խմբի հետ՝ վերապատրաստելով 2213 մասնակցի:

- *Հանրակրթական ուսումնական հաստատություններին որակյալ խորհրդատվության և աջակցության տրամադրում ռեսուրս-կենտրոնների և մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից*

ՀՀ մարզերում գործող տարածքային մանկավարժա հոգեբանական աջակցության կենտրոնները (ՏՄԱԿ) բոլոր հանրակրթական դպրոցներին տրամադրում են անհրաժեշտ խորհրդատվություն և աջակցություն: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից իրականացվում են ՏՄԱԿ-ների մասնագետների վերապատրաստումներ: ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 12-ի N 2346-Ա/2 հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնների վերակազմակերպման գործողությունների պլանը և ժամանակացույցը»: Համաձայն ժամանակացույցի՝ ՀՀ կառավարության 2025 թվականի նոյեմբերի 14-ի N 1611 – Ա որոշմամբ՝ «Հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ը վերակազմակերպվել և միացել է «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ին: Մշակվել և շրջանառվել է «Լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ը վերանվանելու և «Լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ դպրոց - ռեսուրս կենտրոն» ՊՈԱԿ ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

- *Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող մասնագետների մասնագիտական առաջխաղացման, ներառյալ ատեստավորման, հնարավորությունների ընդլայնում՝ փոխկապակցելով այն աշխատանքի արժանապատիվ վարձատրության մեխանիզմների և մասնագիտական ստանդարտների հետ*

ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 12-ի թիվ 772-Ն որոշմամբ հաստատվել է «Մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետների և մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման կարգը և կամավոր ատեստավորման արդյունքով մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետներին և մանկավարժական աշխատողներին հավելավճարի տրամադրման կարգը»:

Գործող կարգի համաձայն, 2025 թվականի 4-րդ եռամսյակում իրականացվել է ատեստավորման գործընթացը: Կամավոր ատեստավորման հայտ կարող էին ներկայացնել.

1) նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի, Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների և պետության կողմից պատվիրակված մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող կազմակերպությունների հոգեբանները,

2) ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի մարտի 27-ի N 20-Ն հրամանով և ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի N 216-Ն որոշմամբ սահմանված պահանջներին բավարարող հոգեբանները, որոնք համակարգում չեն աշխատում,

3) ոչ պետական նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանները,

4) մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող հոգեբանները:

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող մասնագետների ատեստավորմանը մասնակցել են 343 հոգեբաններ: Մասնակիցներից 30-ը գրանցել են 70-100% արդյունք և կստանան 80.600, 111.500 կամ 138.300 ՀՀ դրամ հավելավճարներ:

- *Հեռավար կրթական ծառայությունների, էլեկտրոնային բաց պաշարների, առցանց դասընթացների ներդրում սովորողների այն խմբերի և դեպքերի համար, երբ առկա ուսուցումը հնարավոր չէ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս ժամանակավորապես բնակվող անչափահասների համար*

Ասիական զարգացման բանկի կողմից «Հեռավար կրթություն հանուն դիմակայության» ծրագրի շրջանակներում մշակվել է հեռավար կրթության հարթակ՝ սովորելու ավելի լայն հնարավորություններ ընձեռելով և տեղեկատվություն տրամադրելով՝ սովորողների համար ավելի հարմար ձևաչափով: Հարթակն օգնում է անցկացնել առցանց դասընթացներ և ուսուցիչներին ու սովորողներին տրամադրում է իրական ժամանակում հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ, հանձնարարությունների տրամադրման և մոնիթորինգի ու ուսուցման աշակերտակենտրոն այլ գործիքներ: Հարթակը հնարավորություն է ընձեռում հեռավոր դպրոցների երեխաների համար ապահովել որակյալ կրթության հասանելիությունը: 2025թ. տարեվերջի դրությամբ հեռավար դասընթացների մոդուլների ընդհանուր թիվը 50 է, որոնք կիրառվում են հեռավար կրթության հարթակից օգտվող շահառուների կողմից:

2025 դեկտեմբեր ամսվա դրությամբ 24 մենթոր դպրոցների ուսուցիչներ հեռավար դասավանդում են իրականացրել 110 գյուղական համայնքների դպրոցներում:

Հեռավար դասավանդման վերաբերյալ վերապատրաստված ուսուցիչների թիվը 22 500 է:

- *Մուլտիմեդիա ձևաչափով հայրենագիտական ճանաչողական և տեղեկատվական նյութերի արտադրություն ու տարածում*

2024 թվականին ստեղծվել և տարածվել են մուլտիմեդիա ձևաչափով հետևյալ հայրենագիտական ճանաչողական և տեղեկատվական նյութերը.

1. **ճանաչողական - խաչվող հասկացություններ՝**

https://www.youtube.com/watch?v=ZIP6OLFngdY

1.1 տեսադասեր հայոց լեզվից՝

https://www.canva.com/design/DAErA1dbnho/kmvlaQqzy0rDp_ZNW5TndQ/view?utm_content=DAErA1dbnho&utm_campaign=designshare&utm_medium=link&utm_source=publishsharelink

1.2. տեսադասեր գրականությունից՝

https://kznakbnagavar.blogspot.com/p/blog-page_1.html

2. **տեղեկատվական՝**

2.1. Հայտորոշիչ գնահատման լուսաբանումը՝

https://kznakbnagavar.blogspot.com/2023/10/blog-post_18.html

2.2. Դասի պլանի և թեմատիկ պլանավորման մասին՝

https://kznakbnagavar.blogspot.com/2023/09/blog-post_22.html

2.3 երկարօրյա ուսուցման կարգի պարզաբանումներ՝

https://ncet-my.sharepoint.com/:v:/g/personal/mariam_petrosyan_emis_am/EVVcm75nyeBPk0tyYUcOKdEBXzG8zJF-fI3UdNXClqhqCA?e=vgT7nT

2.4. էսսեի ներդրման վերաբերյալ

Տեսաբացատրություն – ՄԱՍ 1 - https://www.youtube.com/watch?v=mKHNJ22kcfk

ՄԱՍ 2 - https://www.youtube.com/watch?v=Hj532jgkfDs

2.5. վերապատրաստումների համար- ՀՊՉ, ԱՉ, ԱԾ

https://kznakhimnadram.blogspot.com/2021/07/blog-post_27.html

2.6. առարկայական ծրագրերի կառուցվածք և բովանդակություն՝

https://kznakhimnadram.blogspot.com/2021/07/blog-post_27.html

Արվեստ-Արհեստ - https://kznakbnagavar.blogspot.com/2023/11/5-6.html

3. **հայրենագիտական՝**

https://kznakbnagavar.blogspot.com/2023/10/blog-post_46.html

3.1 ուսումնական նախագիծ՝

Նախագծային ուսուցում (youtube.com):

• *Ավագ դասարաններում կրեդիտային համակարգի ներդրում, ներառյալ սովորողների նախասիրությունները և կարողությունները խթանող արտադասարանական և արտադպրոցական ծառայությունների զարգացման, դպրոցի և այլ կենտրոնների համագործակցության միջոցով*

Կրեդիտային համակարգի ներդրման նպատակն է՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների և բուհերի միջև զարգացնել կրթական միասնական միջավայր, սովորողների համար հանրակրթությունից բուհական համակարգ անցումը դարձնել առավել դյուրին:

Կրեդիտային համակարգը փորձնական ներդրվել է ՀՀ Տավուշի մարզի թվով 4 ավագ դպրոցներում՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական,

Ագրարային, ճարտարապետաշինարարական, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանների հետ համագործակցությամբ: Երևանում գտնվող պետական համալսարանները կրեդիտային համակարգի ներդրումը փորձարկում են իրենց կազմում գործող ավագ դպրոցներում:

Դպրոցներն արդեն կրեդիտային համակարգով աշխատում են նաև բուհերի հետ, որպեսզի շրջանավարտները կրեդիտները կարողանան օգտագործել բուհական ուսումնառության շրջանակում:

Եռամյա փորձնական ծրագրի շրջանակում ավագ դպրոցներում՝ բուհերի հետ համագործակցությամբ ներդրվել և փորձարկվել է միջնակարգ կրթության կրեդիտային համակարգը: Այս փուլում ամփոփվել են փորձարկման արդյունքները, վեր են հանվել համակարգային խնդիրներն ու զարգացման առաջնահերթությունները: Հաջորդ փուլում նախատեսվում է ձևավորել կրեդիտային համակարգի ներդրման միասնական մոդել՝ ապահովելով իրավական կարգավորումները և բուհերի կողմից կրեդիտների ճանաչման մեխանիզմները: Համակարգի ամբողջական ներդնումը կիրականացվի մինչև 2030 թվականը:

Կարևոր բաղադրիչ է նաև արտադասարանական և արտադպրոցական ծառայությունների մատուցումը դպրոցների կողմից, որն ամրագրված է «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրությամբ:

Ինչպես նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի փետրվարի 24-ի N09-Ն հրամանով հաստատվել է հանրակրթական ուսումնական հաստատության դպրոցական և անհատական բաղադրիչով սահմանված առարկաների ծրագրերի և խմբակների (այդ թվում՝ արտադասարանական ուսումնառության և ժամանցի կազմակերպմանն ուղղված խմբակների) երաշխավորման կարգը:

Հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրման շրջանակում, բոլոր դպրոցներում ներդրվել են արտադասարանական և արտադպրոցական խմբակներ: Խմբակների ծրագրերը սահմանված ընթացակարգով հաստատվում են ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով:

Միևնույն ժամանակ արտադպրոցական կրթության ներառումը համընդհանուր հայտարարագրման շրջանակներում որպես սոցիալական կրեդիտ, էապես ընդլայնեց արտադպրոցական կրթության հասանելիությունը: Խոսքը 400-ից ավելի պետական և համայնքային արտադպրոցական հաստատություններում ավելի քան 100 000 սաների մասին է: Այս քաղաքականության արդյունքում, ծրագրից օգտվելու համար դիմել և երաշխավորվել են նաև 33 ոչ պետական արտադպրոցական կազմակերպություններ, ինչպես նաև պետական և համայնքային 85 արտադպրոցական հաստատություններ ներկայացրել են հավելյալ 478 ծրագրեր:

Արտադպրոցական տեխնոլոգիական կրթության շրջանակներում 638 դպրոցներում պետական ֆինանսավորմամբ գործում են 1 070 «Արմաթ» ինժեներական աշխատանոց-խմբակներ, որտեղ հաճախում է շուրջ 17 հազար դպրոցական: Գործում են նաև 6 Թումո կենտրոն, 31 Թումո տուփեր տեղադրված են դպրոցների հարակից տարածքներում, և շուրջ 32 հազար 12-15 տարեկան երեխաներն անվճար մասնակցում են առաջարկվող

դասընթացներին: «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի սմարթ կենտրոնները նույնպես ընդլայնվում են ՀՀ կառավարության աջակցությամբ:

- *Արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի խրախուսման մեխանիզմների մշակում՝ կամավոր ատեստավորման միջոցով*

ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N269-Ն որոշմամբ հաստատվել է «Պետական կամ համայնքային կազմակերպությունների արտադպրոցական ծրագրեր իրականացնող մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրավճարի տրամադրման կարգը»:

2025 թվականին արտադպրոցական ուսումնական հաստատությունների կամավոր ատեստավորման գործընթացն իրականացվել է 4-րդ եռամսյակում: Այն իրականացվել է ամբողջությամբ նոր՝ 11 ուղղություններով՝ նվագակցություն (դաշնամուր), փայտյա փողային գործիքներ, պղնձյա փողային գործիքներ, պարարվեստ, թատերարվեստ, շախմատ, գեղարվեստական մարմնամարզություն, սպորտային մարմնամարզություն, սպորտային ակրոբատիկա և ցատկացանց, լող, ինչը որոշակիորեն ազդել է մասնակցության մակարդակի և արդյունքների վրա: Մասնակիցների թիվը կազմել է 212, ատեստավորումը հաղթահարել է մասնակիցների 34,4%-ը:

Ընդհանուր առմամբ, 2023–2025թթ. ընթացքում կամավոր ատեստավորման համակարգը անցել է զարգացման և ընդլայնման փուլ, որի ընթացքում աճել է մասնակիցների ընդհանուր թիվը և բարելավվել են ատեստավորման արդյունքները: Մասնակիցների թիվն առավել մեծ է եղել 2024 թվականին՝ դիմել է 594 մանկավարժ, որից մասնակցել է 465-ը:

Ընդհանուր առմամբ ատեստավորումը հաղթահարել է 290 մանկավարժ, որոնցից 2023 թվականին՝ 46, 2024 թվականին՝ 171, 2025 թվականին՝ 73 մանկավարժական աշխատողներ: Ատեստավորված մանկավարժների 77.2%-ը մշակույթի ոլորտի, 22.8%-ը՝ սպորտի ոլորտի մանկավարժներ են:

2023–2025թթ. արդյունքներով 2026 թվականին լրավճար կստանա 279 մանկավարժ:

- *Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների համար առողջ սնվելու հնարավորությունների ապահովում*

Հանրակրթական ուսումնական հաստատություններում աշակերտներին կայուն դպրոցական սննդով ապահովող դպրոցների մասնաբաժինը հանրապետությունում հասցվել է 86.2%-ի: «Դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակներում անվճար սնունդ ստանում է շուրջ 107 հազար երեխա՝ ՀՀ 10 մարզերի դպրոցների 1-4-րդ դասարանների աշակերտներ և նախակրթարանների սաներ: Սնունդ ստացող երեխաների մասնաբաժինը հասցված է 70.5%-ի:

2026 թվականին ծրագիրը նախատեսվում է ներդնել նաև Երևան քաղաքի հանրակրթական ուսումնական հաստատություններում:

Ինչպես նաև ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից 60 դպրոցում ներդրվել է ինտենսիվ այգի/բարձր տեխնոլոգիական ջերմատուն: Այս դպրոցներից 48-ում գործում են «Նորարար այգի» և «Նորարար ջերմատուն» խմբակները: Ջերմոցներ են կառուցվում նաև 300 դպրոցների ծրագրում ընդգրկված բոլոր կրթահամալիրներում և մոդուլային դպրոցներում: Վայոց ձորի մարզում ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի «Կաթ դպրոցներին» փորձնական ծրագիրը փորձնական ծրագրի դրական արդյունքների վրա

հիմնվելով՝ ծրագիրն ընդլայնվել և իրականացվել է նաև Լոռու մարզի 7 դպրոցի 5-9-րդ դասարանների շրջանում: Ծրագրին մասնակցել է 1 360 աշակերտ:

Նպատակ 3. Հանրակրթական ուումնական հաստատություններում անվտանգ, հագեցած և արդիական սովորելու միջավայրի և ռեսուրսների ապահովում

• *Հանրակրթական ուսումնական հաստատությունների նպատակային քարտեզի կազմում՝ ներառյալ հաստատությունների տեղաբաշխումը և շենքային պայմանների գնահատումը՝ հիմնվելով Կապան խոշորացված համայնքի փորձնական ծրագրի արդյունքների վրա*

ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N2093-Ն որոշմամբ հաստատվել է հանրակրթական ուսումնական հաստատությունների նպատակային քարտեզ ՀՀ բոլոր մարզերի և Երևան քաղաքի համար:

• *Համաձայն գնահատված արդյունքների՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում, այդ թվում՝ սեյսմիկ անվտանգության ապահովում, փոքրաքանակ աշակերտական համակազմ ունեցող բնակավայրերում մոդուլային դպրոցական շենքերի կառուցում, ըստ անհրաժեշտության՝ հիմնանորոգման, վերակառուցման և վերանորոգման այլ աշխատանքներ*

Կառուցված/վերակառուցված, հիմնանորոգված/ վերանորոգված հանրակրթական հաստատությունների թիվը 2025 թվականի տարեվերջի դրությամբ հասցված է 102-ի:

• *Հանրակրթական ուսումնական հաստատություններում աղետների դիմակայունության և ճգնաժամային իրավիճակներին արձագանքելու պայմանների ապահովում և կարողությունների զարգացում*

Հանրակրթական ուսումնական հաստատությունների մասնաբաժինը, որոնք իրականացրել են հաստատված աղետների ռիսկերի կառավարման պլանի 100%-ը, 2025թ. դրությամբ ցուցանիշը հասցված է 95,7 %-ի:

Աղետների ռիսկի կառավարման և ճգնաժամային իրավիճակներին արձագանքելու վերապատրաստման դասընթացներին մասնակցել են հանրապետության դպրոցների աշխատակիցների շուրջ 50%–ը:

Թաքստոցներ/ապաստարան ունեցող դպրոցների մասնաբաժինը հասցված է շուրջ 30%-ի:

• *Նոր չափորոշչին և առարկայական ծրագրերին համապատասխան՝ անհրաժեշտ գույքով և սարքավորումներով հագեցվածության ապահովում*

ՀՀ կառավարության 2021-2026թթ. և «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքից բխող գործողությունների ծրագրերով նախատեսված է մինչև 2026 թվականը ՀՀ բոլոր հանրակրթական ուսումնական հաստատություններում ստեղծել ժամանակակից բնագիտական և ինժեներական լաբորատորիաներ: Գործընթացը էապես կխթանի բնագիտական առարկաների արդյունավետ ուսուցումը և հնարավորություն կտա որոշել սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին:

2025 թվականի տարեվերջի դրությամբ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների շուրջ 70%-ը /շուրջ 800 դպրոց/ ապահովված է ժամանակակից ինժեներական լաբորատոր սարքավորումներով և համապատասխան գույքով:

2026 թվականին լաբորատորիաներով հագեցման ծրագիրը կամփոփվի բոլոր դպրոցներում:

Ձևավորված նոր միջավայրն էապես փոխել է երեխաների հետաքրքրվածությունն ու սովորելու արդյունավետությունը:

Նպատակ 4. Հանրակրթական հաստատությունների ծախսարդյունավետ կառավարման և ֆինանսավորման մոդելների ներդրում

• *Հանրակրթական ուսումնական հաստատությունների բովանդակային և վարչատնտեսական կառավարման գործառույթների տարաբաժանում և առանձնացված իրականացում*

2025 թվականի տարեվերջի դրությամբ դպրոցի բովանդակային և վարչատնտեսական կառավարման տարանջատված համակարգի է անցել 593 հաստատություն կամ պետական դպրոցների 44%-ը:

ԱԺ-ի կողմից հաստատվել է բոլոր դպրոցների բովանդակային կառավարումը կրթության լիազոր մարմնին վերապահելու օրենսդրական փաթեթը: Միասնական լիազոր մարմնին դպրոցները կփոխանցվեն երկու փուլով՝ սկսած 2026 թվականի սեպտեմբերից:

• *Հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների խոշորացում*

Հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների խոշորացման գործընթացի իրականացման նպատակով, հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման նոր մոդելի ներդրման գործընթացին զուգընթաց, վերանայվել է կառավարման խորհուրդների ձևավորման կարգը:

Խոշորացվել են դպրոցական խորհուրդները: Ներկայումս նոր չափանիշներին համապատասխան ձևավորված միասնական և առանձին խորհուրդների թիվը 286 է (նախկին 904-ի փոխարեն):

• *Հանրակրթական հաստատությունների կառավարման լիազորությունների պատվիրակում տեղական ինքնակառավարման մարմիններին*

Հանրակրթական հաստատությունների կառավարման լիազորությունները տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակելու նպատակով նախաձեռնվել է համագործակցություն «Սալար Ինթերնեշնլ» կազմակերպության հետ: Հանրակրթական հաստատությունների կառավարման լիազորությունները տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակելու ուղղությամբ, ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 26-ի N790-Լ որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան խոշորացված համայնքի գյուղական բնակավայրերում կրթական որակյալ ծառայությունների հասանելության ապահովման փորձնական ծրագրի» օրինակով, «Աջակցություն ՀՀ-ում ապակենտրոնացման և տեղական ինքնակառավարման մարմինների բարեփոխումների» ծրագրի շրջանակներում հաստատվել է 10 համայնք /Վայք, Մասիս, Խոյ, Հրազդան, Ախուրյան, Տաշիր, Մարտունի, Տաթև, Վանաձոր, Վաղարշապատ/:

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունն արդյունավետ համագործակցություն է հաստատել և գործունեություն ծավալել «Աջակցություն Հայաստանում ապակենտրոնացման ու տեղական ինքնակառավարման բարեփոխումներին» (ԴեաԼՈԳ) ծրագրի հետ, որը ֆինանսավորվում է շվեդական Sida-ի (Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալություն) կողմից և իրականացվում է ՍԱԼԱՐ Ինթերնեշընլ կազմակերպության հետ (Շվեդիայի տեղական իշխանությունների և տարածաշրջանների ասոցիացիայի (SALAR) դուստր կազմակերպություն): Իրականացվում է ապակենտրոնացման վերաբերյալ փորձի ու գիտելիքի փոխանակում ինչպես հայաստանյան գործընկերների, այնպես էլ վերը նշված միջազգային գործընկերների միջև: Իրականացվում է նաև քաղաքականության շուրջ երկխոսության խթանում ՀՀ ԿԳՄՍՆ-ի, ՀՀ ՏԿԵՆ-ի, ՀՀ ֆինանսների նախարարության, ԱԺ-ի, ՀՀ փոխվարչապետի գրասենյակի մասնակցությամբ՝ համարելով, որ այս երկխոսությունն ու գիտելիքի փոխանակումները էական են ապակենտրոնացման շուրջ ճիշտ որոշումներ կայացնելու համար:

2025 թվականի փետրվարի 24-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարության, Շվեդիայի տեղական իշխանությունների և տարածաշրջանների ասոցիացիայի (ՍԱԼԱՐ) ու «ՍԱԼԱՐ Ինթերնեշնլ» ընկերության միջև կնքվել է փոխըմբռնման հուշագիր: Փաստաթուղթը Երևանում ստորագրել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանն ու «ՍԱԼԱՐ Ինթերնեշնլ» կազմակերպության գործադիր տնօրեն Ռայան Նոքսը: Շվեդիայի տեղական իշխանությունների և տարածաշրջանների ասոցիացիայի (ՍԱԼԱՐ) նախագահ Անդերշ Հենրիկսոնը հուշագրի էլեկտրոնային տարբերակը ստորագրել է Շվեդիայում:

Համաձայն ՀՀ ԿԳՄՍՆ-ի և ԴեաԼՈԳ ծրագրի միջև 2023թ. օգոստոսին համաձայնեցված աշխատանքային պլանի՝ մշակվել է նաև կրթության ոլորտում որոշումների կայացման ու գործառույթների ուսումնասիրություն իրականացնելու մեթոդաբանական ուղեցույցը, որի հիման վրա 2025 թվականի ամռանը ամփոփվել է կրթության ոլորտում դպրոցների կառավարման ապակենտրոնացման առաջարկությունների փաթեթը՝ ներառյալ կառավարման տարբեր մակարդակներում դերերի և պարտականությունների վերանայման, կարողությունների զարգացման, իրավական փոփոխությունների և ֆինանսավորման նոր մոդելների վերաբերյալ առաջարկությունները:

2025 թվականին «Աջակցություն ՀՀ-ում ապակենտրոնացման և տեղական ինքնակառավարման մարմինների բարեփոխումների» ծրագրի շրջանակներում համագործակցություն է սկսվել նաև Ախուրյան, Վայք և Տաթև համայնքների կրթահամալիրների առնչությամբ:

- *Դպրոցների ֆինանսավորման կարգի փոփոխություն՝ անցում կատարելով դասարանների թվով ֆինանսավորմանը և կրթության առանձահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նպատակային արդյունավետ ֆինանսավորմանը*

ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 26-ի N 850-Ն որոշմամբ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը վերանայվել է: Որոշումն ուժի մեջ է մտել 2025թ. սեպտեմբերի 1-ից և տարածվում է ՀՀ կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրում չներառված պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների վրա:

Նույն որոշմամբ սահմանվել են՝

հաշմանդամություն ունեցող երեխաների համար ֆիզիկական միջավայրի հարմարեցումների համար նախատեսված ծախսերը, որը հաշվարկվում է երեք տարվա կտրվածքով 3300 հազ. դրամ (սկսած 2026 թվականից) և նախատեսվում է այն հաստատությունների համար, որոնք հարմարեցված չեն ներառական կրթությանը կամ ընդգրկված չեն այդ նպատակով ֆինանսավորվող ծրագրերում, ինչպես նաև առաջիկա երեք տարիների ընթացքում չի նախատեսվում հաստատությանն ամրացված անշարժ գույքի կառուցում, վերակառուցում, հիմնանորոգում: Տվյալ ծախսի նպատակա հարմարությունը որոշում է հաստատության կառավարումն իրականացնող լիազոր մարմինը՝ հաշվի առնելով նաև այն, որ առաջիկա երեք տարիներին յուրաքանչյուր տարի հաշմանդամություն ունեցող երեխաների համար ֆիզիկական միջավայրի հարմարեցումներ պետք է իրականացվեն հաստա տության կառավարումն իրականացնող լիազոր մարմնի ենթակայությամբ գործող հաստատությունների թվի առնվազն 1/3-ում,

կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության կազմակերպման գործընթացում խելամիտ հարմարեցումներ ապահովելու նպատակով տրամադրվող նպատակային ֆինանսավորումը, որը հաշվարկվում է հաստատությունում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների միջին տարեկան թիվը բազմապատկելով 27,0 հազ. ՀՀ դրամով:

- *Դպրոցների լրացուցիչ ֆինանսավորման մեխանիզմի ներդրում բարձր և ցածր կատարողական ցուցանիշներ ունեցող դպրոցների խրախուսման և զարգացման համար*

ՀՀ կառավարության 2025 թվականի օգոստոսի 14-ի N 1150-Ն որոշմամբ սահմանվել է «Բարձր կատարողականի արդյունքով ուսումնական հաստատություններին խրախուսելու, ինչպես նաև ցածր կատարողականի արդյունքով աջակցելու նպատակով լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելու կարգը»:

ՆԱԽՆԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նպատակ 1. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության (ՆՄՄԿ) բովանդակության և մասնագիտական ներուժի արդիականացում ու հզորացում՝ աշխատաշուկայի և ժամանակից մասնագիտական պահանջներին համահունչ:

- *Նախնական և միջին մասնագիտական կրթության (ՆՄՄԿ) պետական կրթական չափորոշիչների և դրանց համապատասխան մոդուլային ծրագրերի մշակում ու վերանայում՝ երկրի և միջազգային արդի պահանջներին համապատասխան*

Վերանայվել են արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկերը: Ըստ վերանայված ցանկերի՝ նախատեսվում է 2026թ. կազմել և հաստատել մասնագիտական կրթության ոլորտային որակավորումների շրջանակը, որակավորումների ցանկերը և որակավորումների բնութագրերը:

- *Նախնական և միջին մասնագիտական կրթության (ՆՄՄԿ) պետական կրթական չափորոշիչների և դրանց համապատասխան մոդուլային ծրագրերի մշակում ու վերանայում՝ երկրի և միջազգային արդի պահանջներին համապատասխան*

Ընդունվել է «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» նոր օրենքը, որով չափորոշիչներից անցում է կատարվում որակավորումների ազգային շրջանակին, ոլորտային որակավորումների շրջանակին և դրանց բնութագրերին: Ըստ այդմ նախատեսվում է մշակել ոլորտային որակավորումների շրջանակին համապատասխան ընտրված ոլորտների ընդհանրական բնութագրերը, մեթոդաբանությունը՝ փաթեթներով: Ներկայումս քննարկման փուլում է գտնվում ՄԿՈՒ 10 ոլորտային որակավորումների շրջանակների ցանկը:

2025 թվականի տարեվերջի դրությամբ մշակված և վերանայված կրթական չափորոշիչների թիվը հասցված է 476-ի:

- *Աշխատանքի վրա հիմնված ուսումնական (ԱՀՈՒ) ծրագրերի օրենսդրական և ինստիտուցիոնալ ներդրում*

2025-2026 ուստարում հետևյալ 3 մասնագիտությունով դուալ ուսուցման ձևով ծրագրեր են ներդրվել 3 ուսումնական հաստատությունում՝

- Գյուղատնտեսության մեքենայացում - Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Անտոն Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջ,
- Պահածոների և սննդախտանյութերի տեխնոլոգիա-Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղի միջին մասնագիտական կրթական ծրագիր,
- Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա - Բերդի բազմագործառութային պետական քոլեջ:

Ընդհանուր առմամբ, ներկայում դուալ ուսուցմամբ կրթական ծրագրեր իրականացվում են 20 ՄԿՈՒ հաստատությունում 25 մասնագիտություններով:

Արդյունքում, այս մոդելով իրականացվող մասնագիտությունների մասնաբաժինը հասել է 14%-ի, իսկ ուսումնական հաստատություններինը՝ 21%-ի:

Առաջիկայում նախատեսվում է տեքստիլ արդյունաբերության ոլորտի մասնագիտությունների գծով ԱՀՈՒ մոդելով ծրագրեր իրականացնել: Ներկայումս քննարկվում են այդ ոլորտում մասնավոր հատվածի հետ համագործակցության հնարավորությունները:

- *ՆՄՄԿ որակի ապահովման համակարգի բաղադրիչների ներդրում՝ համապատասխան լիցենզավորման, ինստիտուցիոնալ հավաստագրման, ծրագրային հավատարմագրման, միջազգային ստանդարտներին և մշակված չափանիշներին*

ՀՀ կառավարության 2024 թվականի օգոստոսի 29-ի N1374-Ն որոշմամբ լրացումներ ու փոփոխություններ են կատարվել՝ «Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց կրթական ծրագրերի պետական հավատարմագրման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի N978-Ն որոշման մեջ:

2025 թվականի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացների շրջանակում իրականացվել են փորձագիտական այցեր բոլոր (15 ինստիտուցիոնալ և 5 ծրագրային) ուսումնական հաստատություններ:

Ծրագրային հավատարմագրման գործընթացների շրջանակում իրականացվել է փորձագիտական զեկույցների մշակումը: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների շրջանակում ուսումնական հաստատությունները գտնվում են հետևյալ փուլերում.

- 4 ուսումնական հաստատությունում հավատարմագրման գործընթացներն ամբողջությամբ ավարտված են, և որոշումները կայացված են,
- 3-ը գտնվում են որոշման կայացման փուլում,
- 7-ը գտնվում են փորձագիտական զեկույցի տրամադրման փուլում,
- 1-ը գտնվում է բարելավման պլանի մշակման փուլում:

ՄԿՈՒ հաստատություններում որակի ապահովման համակարգի ներդրման և ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի իրականացման ցուցանիշը հասցվել է 31.7%-ի:

- *Արագ և ճկուն որակավորում ապահովող մեխանիզմների մշակում և գործարկում, այդ թվում՝ ոչ ֆորմալ կրթության արդյունքում միկրոորակավորումների ճանաչման միջոցով*

«Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքի ընդունումից հետո, ՀՀ վարչապետի 2024 թվականի հոկտեմբերի 10-ի N 914-Ա որոշմամբ հաստատվել է օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերում փոփոխությունների և լրացումների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը, որով նախատեսվում է մշակել արագ և ճկուն որակավորում ապահովող մեխանիզմներ, դրանց մեթոդական և այլ իրավական հիմքեր: Այս ուղղությամբ աշխատանքները մեկնարկել են:

Մշակվել է «Միկրո-որակավորումներ Եվրոպայից դուրս» (BEM) նախագիծը, որը նորարարական նախաձեռնություն է, և որն իրականացվում է Erasmus+ ծրագրի շրջանակներում՝ նպատակ ունենալով միկրո-որակավորումների (միկրո-հավատարմագրեր) միջոցով զարգացնել մասնագիտական կրթության և ուսուցման համա կարգը Եվրոպական միությունից դուրս: Այն մեկնարկել է 2023 թվականին: Նախագիծը միավորում է Մոնտենեգրոյի, Սերբիայի, Հյուսիսային Մակեդոնիայի, Հայաստանի (ի դեմս «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի» (ՄԿՈՒԶԱԿ), Վրաստանի, Ուկրաինայի, Նորվեգիայի և Գերմանիայի հաստատություններին՝ մշակելու միկրո-որակավորումներ: Դրանք կարող են կիրառվել նաև շարունակական մասնագիտական կրթության և ուսուցման համա կարգում՝ որպես լրացուցիչ որակավորում կամ որպես ոչ ֆորմալ ձևով ձեռք բերված ուսումնառության արդյունք:

Նախագծի շրջանակում մշակվել և սահմանվել են ՄԿՈՒ ոլորտում միկրո-որակավորումների մեթոդաբանություն և ճկուն ձևաչափ, որը կարող է ընդունելի լինել բոլոր երկրների կրթական համակարգի համար՝ տեղական օրենսդրության կարգավորումներով տեղայնաց ման արդյունքում: Ըստ մշակված մեթոդաբանության գործատուների և այլ շահակիցների հետ քննարկումների արդյունքում մշակվել են 62 միկրո-որակավորումներ: Առաջիկայում նախատեսվում է դրանք թվայնացնել և տեղադրել Skillsbank (Սկիլսբանկ) և Europass (Եվրոպաս) էլեկտրոնային հարթակներում:

Աշխատանքային հանդիպման ընթացքում կքննարկվեն նախագծի աշխատանքային հետագա փաթեթները, որոնք ներառում են միկրո-որակավորումների հավատարմագրման

և ճանաչման գործընթացի մարտահրավերները: Կմշակվի գործընթացի իրականացման ռազմավարություն, որն ուղղված կլինի դրանց կիրառության ընդարձակմանը: Կհստակեցվեն նաև նախագծի հետագա քայլերը՝ ձևավորելու միկրո-որակավորումների ապագան, դրանք ծառայեցնելու մասնագիտական կրթության և ուսուցման կարիքներին:

«Միկրո-որակավորումներ Եվրոպայից դուրս» նախագիծը կամփոփվի 2026 թվականին:

Նախագծի շրջանակում համագործակցությունը հնարավորություն է տալիս հավատարմագրել, փաստաթղթավորել, ճանաչել կամ վավերացնել միկրո-որակա վորումները՝ ըստ յուրաքանչյուր երկրի պահանջների, այդ կերպ կամուրջ ստեղծելով ՄԿՈՒ ոլորտի և աշխատաշուկայի միջև:

- *ՆՄՄԿ ոլորտի մանկավարժների պատրաստման/վերապատրաստման, ինչպես նաև ատեստավորման համակարգերի ներդրում՝ նպաստելով կարողությունների զարգացմանը և այն փոխկապակցելով աշխատանքի վարձատրության բարձրացմանը*

Գործում է «Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների ատեստավորման հանձնաժողովների ձևավորման, դրանց գործունեության և ատեստավորման ենթակա մանկավարժական աշխատողների վերապատրաստման և ատեստավորման կարգը»:

Համաձայն կարգի, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2025թ. հունիսի 9-ի թիվ 1333-Ա/2 հրամանով հաստատվել են ՀՀ արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների 2025 թվականի վերապատրաստման դասընթացի և ատեստավորումների ուղղությունները: 2025 թվականին ատեստավորման ուղղություններն ընդլայնվել են՝ ներառելով նաև տեքստիլ ոլորտին վերաբերող մասնագիտությունները: 2025 թվականին վերապատրաստվել և ատեստավորվել են «Տեքստիլ» ուղղությամբ դասավանդող մանկավարժական աշխատողները, ինչպես նաև միայն սեփական նախաձեռնությամբ ու միջոցներով վերապատրաստում անցնելու հնարավորությամբ ատեստավորվել են նաև «Ագրարային», «ՏՏ», «Ոսկերչություն» և «Խոհարարություն» ոլորտներիի ուղղությունների մասնագիտություններ դասավանդող մանկավարժական աշխատողները:

2025 թվականին ատեստավորվել է 181 մանկավարժական աշխատող:

Մասնակիցներից 35-ը հաղթահարել է նվազագույն շեմը և ունեցել է դրույքաչափի փոփոխություն՝ 200 հազար ՀՀ դրամի չափով, իսկ 111 մասնակիցներ գրանցել են 70%-ից բարձր արդյունքներ և ստանալու են նաև լրացուցիչ 30%, 40%, 50% հավելավճար՝ ըստ հավաքած միավորների:

2025 թվականի դրությամբ արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների մասնագիտական առարկաներ դասավանդող 1208 մանկավարժական աշխատողից վերապատրաստվել է ատեստավորման ենթակա մանկավարժական աշխատողների 35,2%-ը /425 անձ/: 1208 մանկավարժական աշխատողից ատեստավորումը հաղթահարել է շուրջ 35%-ը /կամ 422 անձ/:

2025 թվականին ուսուցիչների կամավոր ատեստավորմանը մասնակցել են ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում հանրակրթական առարկաներ դասավանդող 131

մանկավարժ: Ատեստավորումը հաղթահարած 69 մանկավարժից 13-ը /կամ 18,9%-ը/ հաղթահարել են նվազագույն շեմը և կունենան դրույքաչափի փոփոխություն, իսկ 56 մանկավարժ /կամ 81,1%-ը/, որոնք գրանցել են 70%-ից բարձր արդյունքներ, կունենան և՛ դրույքաչափի փոփոխություն, և՛ կստանան հավելավճար:

2025 թվականի տարեվերջի դրությամբ ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում հանրակրթական առարկաներ դասավանդող 1866 մանկավարժից ատեստավորումը հաղթահարել և դրույքաչափի փոփոխություն ու հավելավճար են ստացել 179 մանկավարժ /կամ 9,6 %-ը/:

Ներկայումս ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների հանրակրթական առարկաներ դասավանդող 1866 մանկավարժից ատեստավորումը հաղթահարել է 248-ը /կամ 13.3%-ը/:

Տարեվերջին քոլեջների մանկավարժների համար նույնպես ներդրվել է տարակարգի մեխանիզմը:

Տեքստիլ ոլորտի ուղղությամբ վերապատրաստվել է 64 մանկավարժական աշխատող, որից 60-ը մասնակցել է ատեստավորմանը:

- *Մասնավոր ոլորտի մասնագետներին գործնական դասավանդման գործընթացում ներգրավելու ճկուն մեխանիզմների ներդրում*

Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի փետրվարի 7-ի թիվ 07-Ն հրամանով հաստատված «Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների ատեստավորման հանձնաժողովների ձևավորման, դրանց գործունեության և ատեստավորման ենթակա մանկավարժական աշխատողների վերապատրաստման և ատեստավորման կարգի» և ՀՀ կառավարության 2024թ. դեկտեմբերի 5-ի «Մասնագիտական ուսումնական հաստատությունների ատեստավորված կամ տարակարգ ստացած մանկավարժական աշխատողների դրույքաչափի փոփոխության և հավելավճարի սահմանման կարգը և չափը հաստատելու մասին» N 1912-Ն որոշման՝ մանկավարժ աշխատողները, այդ թվում՝ մասնավոր ոլորտի մասնագետները, կարող են մասնակցել վերապատրաստման դասընթացներին և ատեստավորմանը, այնուհետև ցուցաբերած արդյունքների հիման վրա ունենալ դրույքաչափի փոփոխություն և աշխատավարձի հավելավճար:

Մշակվել և ներկայումս քննարկման փուլում է գտնվում «Պետական և հանրային ՄՈՒՀ-երի՝ պետական բյուջեից ֆինանսավորման կարգը, գործակիցները և նորմատիվները, այդ թվում՝ ըստ ՄՈՒՀ-ի ֆինանսավորման արդյունքային ցուցանիշները հաստատելու մասին» կարգի նախագիծը, որով նախատեսվելու են խրախուսման մեխանիզմներ՝ մասնավոր ոլորտի մասնագետներին գործնական դասավանդման գործընթացում ներգրավելու համար:

Նպատակ 2. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության (ՆՄՄԿ) ընդլայնում և մատչելի, ներառական, անվտանգ միջավայրի զարգացում ու հասանելիության ապահովում բնակչության բոլոր խմբերի համար

- *ՆՄՄԿ ուսումնասիրության արդյունքների հիման վրա ՆՄՄԿ համակարգի բարեփոխված կառուցակարգի հայեցակարգի և բարեփոխմանը միտված գործողությունների ճանապարհային քարտեզի մշակում՝ ներառյալ ՆՄՄԿ հաստատությունների դասակարգում հանրապետական և տեղային նշանակության, ուսումնարանների և քոլեջների վերանայում՝ թողնելով միայն մեկ տիպի հաստատություն՝ քոլեջ*

ՄԿՈՒ ոլորտի բարեփոխումների արդյունքում այսուհետ գործելու է հաստատության միայն մեկ տիպ՝ քոլեջ, և բոլոր հաստատությունները հնարավորություն են ստանալու իրականացնել ինչպես արհեստագործական, այնպես էլ միջին մասնագիտական կրթական ծրագրեր: Այդ նպատակով ՀՀ վարչապետի 2024թ. հոկտեմբերի 10-ի N 914-Ա որոշման հավելվածով հաստատված ցանկի համաձայն, ընդունվել է ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության պետական մասնագիտական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 20-ի N 1009-Ն և 2004 թվականի հուլիսի 1-ի N 1210-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին« N1942-Ն որոշումը: Օրինակելի կանոնադրության հաստատումից հետո, բոլոր ուսումնական հաստատությունների կանոնադրություններում կկատարվեն համապատասխան փոփոխություններ և դրանք կհամապատասխանեցվեն օրինակելի կանոնադրությանը:

- *ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում՝ համաձայն քարտեզագրման արդյունքների և որոշված առաջնահերթության՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձանց համար սահմանված նորմերը*

2021 թվականից իրականացվել է 13 քոլեջների միավորման 7 գործընթաց, որից 2-ը՝ 2025 թվականի ընթացքում: 2021-2025թթ. ենթակառուցվածքների բարելավման աշխատանքներ են իրականացվել 16 քոլեջներում, ընդ որում՝ 2 հաստատության շենքերի վերակառուցման, 1-ի հիմնանորոգման և 9-ի մասնակի նորոգման աշխատանքներն ավարտված են:

- *ՆՄՄԿ հաստատությունների նյութատեխնիկական բազայի համալրում և արդիականացում՝ համաձայն քարտեզագրման արդյունքների և որոշված առաջնահերթության*

2024 թվականի բյուջեով նախատեսվել էր երկու ուսումնական հաստատության գույքի տրամադրում, որոնց համար մշակվել են գնման հայտերի նախագծերը և ներկայացվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով ստեղծված համապատասխան հանձնաժողովին:

7 ՄԿՈՒ հաստատություններին տրամադրվել է 7 համակազմ մասնագիտական ուսումնալաբորատոր բազա, մասնավորապես,

1. բեմի լուսաձայնային համակարգ
2. ավտովարման լաբորատորիա՝ հագեցած ավտոմեքենա վարելու սիմուլյատորներով Սիսիանի պետական քոլեջում
3. եռակցման լաբորատորիա՝ հագեցած ժամանակակից եռակցման սարքավորումներով և աքսեսուարներով եռակցման լաբորատորիայի հարակից կոնֆերանսների սրահի հետ միասին Վարդենիսի պետական քոլեջում

4. արևային էներգիայի լաբորատորիա՝ հագեցած ֆոտոգալվանային ուսուցման նստարաններով և կրթական կահույքով Աբովյան Էներջի Փաուեր պետական քոլեջում
5. ժամանակակից կարի մեքենաներով, համապատասխան այլ սարքավորումներով, պարագա ներով, ուսումնական կահույքով հագեցած կարի լաբորատորիա-Աբովյանի պետական քոլեջում:
6. ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղի համար հիմնական գույք, կահույք, մասնագիտական լաբորատորիաներ:
Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի համար հատկացվել է հիմնական գույք:

Ամբողջական գույքային և ուսումնալաբորատոր հագեցվածություն նախատեսված է ապահովել ներկայումս վերանորոգման, վերակառուցման ընթացքում գտնվող՝ թվով 6 մասնագիտական ուսումնական հաստատությունում: Այն հնարավոր կլինի ապահովել շինարարական աշխատանքների ավարտից և շենքերն ու ենթակառուցվածքները շահագործման հանձնելուց հետո:

Կազմվել է թվով 4 ուսումնական հաստատությունների համար նախատեսվող գույք-սարքավորումների հայտերը, ևս մեկը գտնվում է նախագծման փուլում՝
Վանաձորի Կ.Ղարաքեշիշյանի անվան թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան, Երևանի արհեստի պետական քոլեջ, Երևանի պարարվեստի պետական քոլեջ - պայմանագրերը կնքվել են, գույքի մի մասն արդեն մատակարարվել է,
Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ-SS լաբորատորիայի ստեղծում, Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ-ատամնատեխնիկների համար ժամանակակից լաբորատորիայի ստեղծում, սարքավորումների տրամադրում:

- *Մարզերում գործող ՆՄՄԿ հաստատությունների սովորողների և մանկավարժական աշխատողների տրանսպորտային փոխհատուցման գործիքակազմի ներդրում*

2025 թվականի 4-րդ եռամսյակի տեղեկատվության հիման վրա, տրանսպորտային փոխհատուց ստանում են՝ 7224 ուսանող, 135 մանկավարժական աշխատող:

- *ՆՄՄԿ ոլորտում ներառական կրթության փորձնական ծրագրի մշակում և իրականացում, ՆՄՄԿ ոլորտում անցում համընդհանուր ներառականության*

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի մայիսի 2-ի N 589-Ա/2 հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական կրթության ոլորտում համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանը և ժամանակացույցը»: Ինչպես նաև 2024 թվականին ընդունվել է «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքը, որում ամրագրված է ներառականության սկզբունքը: Օրենքից բխող նոր մշակվող իրավական ակտերում կներառվեն ներառական կրթությունը կարգավորող դրույթներ:

Միևնույն ժամանակ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից շարունակվել է ՄԿՈՒ հաստատություններում սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը: 2025 թվականին գնահատվել է 67 սովորող: Ընդհանուր առմամբ նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների թիվը 128 է:

- *ՆՄՄԿ նոր ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների և ձևերի ընդլայնման մեխանիզմների մշակում*

2024 թվականին ընդունված՝ «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքի 37-րդ հոդվածով սահմանվել են օրենքով չարգելված և ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ սահմանված ձեռնարկատիրական գործունեության տեսակները: Հաստատվել է ՄՈՒՀ-երի օրինակելի կանոնադրությունը, որտեղ սահմանվել են ձեռնարկատիրական գործունեության հնարավոր ձևերն ու իրականացման մեխանիզմները:

- *ՆՄՄԿ հաստատությունների՝ մասնավոր ոլորտի հետ համատեղ կառավարման ձևաչափերի ներդրում*

Պետություն-մասնավոր ոլորտի հետ համատեղ կառավարման ձևաչափերի զարգացման նպատակով «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» նոր օրենքով սահմանվել է հանրային ՄՈՒՀ հասկացությունը: Համաձայն Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի՝ հանրային ՄՈՒՀ-ը հիմնադրվում է պետության և ոչ պետական կազմակերպության միջև (այդ թվում՝ օտարերկրյա) համագործակցության պայմանագրի հիմքով: Օրենքում համապատասխան դրույթի նախատեսումը ենթադրում է ենթաօրենդրական ակտերի մշակում (օրինակ՝ օրինակելի կանոնադրություն) և հանրային ՄՈՒՀ-ի՝ որպես իրավաբանական անձի գործունեության հստակ սահմանում:

Արդեն իսկ գործում է Տավուշի Պատրիկ Ֆրանսիայում հայկական հիմնադրամի հետ համատեղ ստեղծված և կառավարվող «Տէվէճեան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամը, որտեղ իրականացվում են բովանդակային և շենքային պայմանների շարունակական բարելավման աշխատանքներև զարգացման ծրագրեր:

ՀՀ ԿԳՄՍՆ-ի և «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության միջև պետություն-մասնավոր համագործակցություն սկսելու նպատակով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2025 թվականի հունիսի 16-ի N 948-Ա հրամանով ստեղծել է աշխատանքային խումբ:

Առաջիկայում նախատեսվում է տեքստիլ արդյունաբերության ոլորտի մասնագիտությունների գծով ԱՀՈՒ մոդելով ծրագրեր իրականացնել: Մշակվել է թեթև/տեքստիլ արդյունաբերության կրթության, մասնագիտական ուսուցման և գիտելիքների տարածման բնագավառում ՀՀ ԿԳՄՍՆ-ի և «Ալեքս Տեքստիլ» ընկերության միջև համագործակցության մասին հուշագրի նախագիծը, որը նախատեսվում է կնքել 2026թ հունվարին: ՀՀ ԿԳՄՍՆ-ի և «Երեմյան Փրոջեքթս» ընկերության միջև պետություն-մասնավոր համագործակցություն սկսելու նպատակով նախատեսվում է հուշագրի կնքում: Քննարկվել են համագործակցության ձևերը, առանձնահատկությունները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

- *Ֆինանսավորման, այդ թվում՝ պետական, տարբերակված քաղաքականության գործարկում հանրապետական նշանակության ՆՄՄԿ հաստատություններում*

«Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» նոր օրենքում էականորեն տարբեր մոտեցումներ և սկզբունքներ են նախատեսվել մասնագիտական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման համար, ինչպես օրինակ՝ սահմանվել են ֆինանսավորման հիմնական տեսակները, դուալ ուսուցման կազմակերպման համար ֆինանսավորման այլ մեխանիզմ, կրթաթոշակի (տեսակների և բաղադրիչների)՝ որպես ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման գաղափարը և այլն:

Մշակվել են «Պետական և հանրային մասնագիտական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեից ֆինանսավորման կարգը, գործակիցները և նորմատիվները հաստատելու մասին», «Մասնագիտական ուսումնական հաստատություն ների ուսանողներին պետության կողմից լրիվ կամ մասնակի կրթաթոշակ տրամադրելու կարգը, այդ թվում՝ չափանիշները, հիմքերը, դեպքերը և կրթաթոշակի չափերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը, որոնք քննարկման փուլում են:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նպատակ 1. Համընդհանուր ներառական, սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծում

• *Մշակել որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) վերջնարդյունքներին համապատասխան որակավորումների ոլորտային շրջանակների (ՈՈՇ) համակարգ և, հաշվի առնելով «կանաչ կրթության» սկզբունքը, բուհերում՝ ըստ ՈՈՇ-ների վերջնարդյունքների, իրականացնել կրթական ծրագրերի արդիականացում*

«Էրազմուս+ՀԳ2» կարողությունների զարգացում բարձրագույն կրթության ոլորտում «Հայաստանում և Մոլդովայում հանուն կանաչ և կայուն զարգացման բակալավրիատի կրթական ծրագրի բարեփոխում» (RE-GRAD) ծրագրի շրջանակներում աշխատանքներ են իրականացվում վերանայելու որակավորումների ոլորտային շրջանակների բնութագրերում (մասնավորապես, Ճարտարապետություն, Երկրաբանություն, Կենսաբանություն, Կառավարում) անհրաժեշտ փոփոխություններ կատարելու կամ նոր ՈՈՇ-ներ (օրինակ՝ Գեոմատիկա) մշակելու ուղղությամբ:

Միաժամանակ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՕ-285-Ն օրենքով ամրագրվել են որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին առնչվող նոր կարգավորումներ, սահմանվել են նոր հասկացություններ ինչպիսիք են՝ «կարգավորվող մասնագիտություն», «համատեղ կրթական ծրագիր», «միկրոորակավորում», «համատեղ կամ կրկնակի որակավորում»: Բարեփոխումների շրջանակում նախատեսվում է նաև բարձրագույն կրթության մասնա գիտությունների, դրանց դասիչների ցանկերի, ներառյալ կարգավորվող մասնագիտությունների, ուսուցման ձևերի և համապատասխան տրվող որակավորումների ցանկերի հաստատում: Վերոնշյալ կարգավորումների և գործընթացների արդյունքում ըստ անհրաժեշտության կվերանայվեն և կմշակվեն ոլորտային շրջանակներ, կիրականացվեն կրթական ծրագրերի արդիականացում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամաններով հաստատված են հետևյալ 21 որակավորումների ոլորտային շրջանակ (ՈՈՇ)՝

«Շինարարություն», «Անասնաբուժություն», «Ֆարմացիա», «Գյուղատնտեսություն», «Բժշկություն», «Մանկավարժություն», «Սոցիոլոգիա», «Պատմություն», «Ճարտարապետություն», «Իրավագիտություն», «Մաթեմատիկա», «Ինֆորմատիկա», «Սոցիալական աշխատանք», «Ֆիզիկա», «Երկրաբանություն», «Փիլիսոփայություն», «Քիմիա», «Աշխարհագրություն», «Սերվիս»:

Բուհերում կրթական ծրագրերը վերանայվել և համապատասխանացվել են առկա ՈՈՇ-ներով սահմանված վերջնարդյունքներին, մասնավորապես.

Երևանի պետական համալսարան- բակալավրի բոլոր 59 և մագիստրոսի 112 կրթական ծրագրեր համապատասխանեցվել են ՀՀ համապատասխան մասնագիտությունների ՈՈՇ-ների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ՀՀ ՈԱՇ-ի մակարդակների նկարագրիչների պահանջներին: Առկա են «ՀՀ ՈՈՇ/ՈԱՇ կրթական ծրագրի ուսումնառության վերջնարդյունքներ» համապատասխանության մատրիցաները:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան - իրականացվել է «Կառավարում» մասնագիտության «Կառավարում (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի արդիականացում: Գործընթացի մեջ է «Սերվիս» կրթական ծրագրի համապատասխանեցումը ՈՈՇ-ի վերջնարդյունքներին:

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան - ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի ապրիլի 28-ի N 780-Ա/2 և N 781-Ա/2 հրամանների հիման վրա բուհը վերանայել է «Շինարարական ճարտարագիտություն» և «Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)» մասնագիտությունների կրթական ծրագրերի բովանդակությունն ու կառուցվածքը: Մյուս մասնագիտությունների ծրագրերը մշակվել են ՈԱՇ-ի հիման վրա: 2024-2025 ուստարում գործող կրթական ծրագրերի 60%-ը համապատասխանեցված են որակավորումների ազգային (ՈԱՇ) կամ որակավորումների ոլորտային շրջանակներին (ՈՈՇ):

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալասարան - 2023/2024 ուստարվանից արդիականացվել է ՀԱՊՀ-ում գործող թվով 49 կրթական ծրագիր (ԿԾ), որոնք 2024/2025 ուսումնական տարում արդեն ներդրվել են ուսումնական գործընթացներում: Արդիականացման փուլում են նաև ՀԱՊՀ-ում գործող մագիստրոսական բոլոր ԿԾ-ները, որոնք գործողության մեջ կդրվեն 2024/2025 ուսումնական տարվանից:

Հայաստանի ազգային ագրարային համալսարան – 2020 թվականից ՀԱԱՀ բոլոր կրթական ծրագրերն արդիականացվել են՝ ըստ ՈՈՇ վերջնարդյունքների և միջազգային առաջատար ԲՈՒՀերի բենչմարքի: Իրականացվել է շուրջ 150 առաջատար համալսարանների կրթական ծրագրերի վերլուծություն:

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան- արդիականացվել են բակալավրիատի բոլոր կրթական ծրագրերը և ուսումնական պլանները: Ներգրավվել են բոլոր մասնագիտական ամբիոնները, փորձագիտական խմբերը, շրջանավարտների և աշխատաշուկայի ներկայացուցիչների կարծիքի հիման վրա վերանայվել են ուսումնական պլանները և ուսուցման արդյունքները: Վերջնական հաստատումը կատարվել է Գիտխորհրդի նիստում 2025թ. ապրիլին:

Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան- ԲՊՀ մասնագիտությունների կրթական ծրագրերը (այսուհետև՝ ՄԿԾ-ներ) համապատասխանում են ՀՀ ՈԱՇ-ին, իսկ երեք մասնագիտությունների կրթական ծրագրերի դեպքում («Կառավարում», «Մասնագիտական մանկավարժություն», «Սերվիս»)՝ նաև ՈՈՇ-ին: Բոլոր ՄԿԾ-ների և դրանց դասընթացների ուսումնառության վերջնարդյունքները (այսուհետև՝ ՈՒՎ-ներ) մշակվել և վերանայվել են հաշվի առնելով ՀՀ ՈԱՇ-ի 6-րդ, 7-րդ և 8-րդ և ՀՀ ՈՈՇ-ի համապատասխան մակարդակների բնութագրիչները: ԲՊՀ-ում իրականացվող մասնագիտություններից միայն վերոնշյալ երեքի դեպքում են առկա ՀՀ ՈՈՇ-ներ:

ԲՊՀ-ն ձեռնարկել է ՄԿԾ-ների բարելավման և արդիականացման մի շարք միջոցառումներ՝ ՈՒՎ-ների վերանայման գործընթացում հիմնվելով ՀՀ ՈԱՇ-ի և ՈՈՇ-ի բնութագրիչների վրա: Այդ միջոցառումներից են՝

- ԲՊՀ նոր ռազմավարության՝ 2025-2028թթ. զարգացման ռազմավարական ծրագրում և գործողությունների պլանում ՄԿԾ-ների բարելավմանն առնչվող դրույթների վերանայումը և ամրագրումը,
- ԲՊՀ ՄԿԾ-ների ներքին փորձաքննության (ներառյալ ՄԿԾ-ների ինքնավերլուծության իրականացման) նախապատրաստական աշխատանքների մեկնարկային և ընթացիկ հանդիպումների կազմակերպումը (մեկնարկը՝ 2024թ. նոյեմբերից),
- ՄԿԾ-ների ներքին փորձաքննության պլան-ժամանակացույցի կազմումը, հաստատումը և աշխատանքային խմբերի ձևավորումը,
- ԲՊՀ ՄԿԾ-ների ինքնավերլուծության իրականացման ուղեցույցի մշակումն ու կիրառումը,
- ԲՊՀ ամբիոնների վարիչների և որակի ապահովման (այսուհետև՝ ՈԱ) պատասխանատուների վերապատրաստումների իրականացումը (29.01.2025թ, 27.02.2025թ),
- ՄԿԾ-ների ինքնավերլուծության ներբուհական առցանց և անցանց մշտադիտարկումների իրականացումը,
- ՄԿԾ-ների ուսումնական պլանների ու մասնագրերի վերանայումն ու բարելավումը, ներառյալ ՀՀ ՈԱՇ-ի և ՈՈՇ-ի բնութագրիչներին համահունչ ՈՒՎ-ների վերամշակումը:

ՀՀ պետական կառավարման ակադեմիա - ամբիոնների բոլոր կրթական ծրագրերը արդիականացված են ըստ հաստատված ՈՈՇ-ների վերջնարդյունքների:

Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան – Համալսարանի բոլոր կրթական ծրագրերում կատարվել է փոփոխություն՝ ըստ հաստատված ՈՈՇ-ների: Իրականացվել է «Բուժական գործ» կրթական ծրագրի երեք լեզուներով միջազգային ծրագրային հավատարմագրման գործընթաց՝ ծրագիրը հավատարմագրվել է 7 տարի ժամկետով: Ներկա պահին շարունակվում է նաև «Ստոմատոլոգիա» և «Ֆարմացիա» կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացի աշխատանքները:

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ – կրթական ծրագրերը մշտադիտարկման արդյունքում պարբերաբար արդիականացվում են՝ ըստ ՈԱՇ-ների վերջնարդյունքների:

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա - Արվեստի և դիզայնի ոլորտների համար չկան սահմանված ՈՈՇ-ներ, սակայն ՀԳՊԱ-ում բոլոր կրթական ծրագրերը սահմանված են ուսումնառության վերջնարդյունքներով, որոնք համապատասխանում են ՀՀ ՈԱՇ-ին:

Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան - կրթական ծրագրերի ինքնավերլուծության գործում ապահովվել է ներքին և արտաքին շահակիցների ակտիվ ներգրավվածությունը ծրագրերի վերանայման գործընթացում: ՄԿԾ-ների վերանայման արդյունքում իրականացվել է մասնագիտական վերջնարդյունքների համապատասխանեցում ՈԱՇ-ի և աշխատաշուկայի պահանջներին: ՄԿԾ-ների ինքնավերլուծության նպատակով իրականացվել է համեմատական վերլուծություն և

գնահատում /բենչմարքինգ/: Կրթական ծրագրերի արդիականացման և վերանայման գործընթացը էականորեն բարելավել է մատուցվող կրթական ծառայությունների որակը:

Գավառի պետական համալսարան - Համալսարանում կրթական ծրագրերի արդիա կանացման գործընթացը կրում է շարունակական բնույթ՝ հիմք ընդունելով ՀՀ որակավորումների ազգային (ՈԱՇ) և համապատասխան ոլորտային (ՈՈՇ) շրջանակները, հենանիշային վերլուծության (բենչմարքինգի) արդյունքները:

Գորիսի պետական համալսարան - Համալսարանի կրթական ծրագրերի մի մասն արդիականացված է ըստ ՈՈՇ-ի վերջնարդյունքների, իսկ որոշ կրթական ծրագրերի արդիականացման գործընթացն ավարտական փուլում է: Մասնագիտական ամբիոնները մանրամասն ուսումնասիրում են հանրակրթական չափորոշիչները, իրականացվում են կրթական ծրագրերի ներքին աուդիտներ՝ արտաքին փորձագետների ներգրավմամբ:

Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան - բակալավրի 22 գործող կրթական ծրագրերը համապատասխանեցված են որակավորումների ոլորտային շրջանակներին: Նախատեսվում է լրամշակել մագիստրատուրայի 19 ՄԿԾ-ները:

Հյուսիսային համալսարան - վերանայվել են բուհում գործող մագիստրոսական բոլոր կրթական և առարկայական ծրագրերը: Արդիականացվել են ՄԿԾ-ները ներառելով արդի աշխատաշուկայում առավել մեծ պահանջարկ ունեցող առարկաներ, կրճատվել է առկա և հեռակա ուսուցման ժամանակը, համապատասխանաբար 2-ի փոխարեն՝ 1,5 տարի և 2,5-ի փոխարեն՝ 2 տարի: ՄԿԾ-ների և առարկայական ծրագրերի վերջնարդյունքները համապատասխանեցվել են ՈԱՇ-ի պահանջներին: Վերանայվել են նաև բակալավրիատի հեռակա ուսուցման կրթական ծրագրերը, արդիականացվել է ուսումնական ժամանակացույցը:

«Մխիթար Գոշ» Հայ-ռուսական միջազգային համալսարան - թարմացվել են բարձրագույն մասնագիտական կրթության շարունակական և ինտեգրված կրթական ծրագրերը «091201.01.7 Ընդհանուր բժշկություն», «091101.01.7 Ստոմատոլոգիա» մասնագիտությունների գծով:

Եվրասիա միջազգային համալսարան - ԵՄՀ կրթական ծրագրերում սահմանված ուսումնառության վերջնարդյունքների մշակման համար հիմնականում որպես ուղենիշ են հանդիսացել ՈԱՇ-ի, գործող կրթական չափորոշիչները, ՀՀ զբաղմունքների դասակարգիչը, գործատուների պահանջները (աշխատանքի տեղավորման հայտա ռարությունների և բուհի հետ առկա համագործակցությունների հիման վրա), այլ կրթական հաստատությունների լավագույն փորձը, ինչպես նաև վերջին ժամանակահատվածում շրջանառված ՈՈՇ՝ «Մանկավարժու թյուն», «Իրավագիտություն», «Դեղագիտություն» մասնագիտություններին հարող կրթական ծրագրերի համար:

Միաժամանակ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» 2025 թվականի սեպտեմբերի 11-ի ՀՕ-285-Ն օրենքով ամրագրվել են որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին, համապատասխան մակարդակների կրթական ծրագրերի բնութագրիչներին և պահանջներին առնչվող նոր կարգավորումներ, նախատեսվում է նաև բարձրագույն կրթության մասնագիտությունների, դրանց դասիչների ցանկերի, ներառյալ կարգավորվող մասնագիտությունների, ուսուցման ձևերի և համապատասխան տրվող որակավորումների նոր ցանկերի հաստատում: Վերոնշյալ կարգավորումների և

գործընթացների արդյունքում կիրականացվեն կրթական ծրագրերի համապատասխանեցման գործընթացներ:

Ինչպես նաև բարձրագույն կրթական ծրագրերի մասնաբաժիններում ներառված են «Կանաչ կրթություն» բաղադրիչ հետևյալ հաստատություններում՝

Երևանի պետական համալսարան - ներգրավված է Erasmus+ ծրագրի T-GREEN, KPI4HE, RE-GRAD և T4GREEN նախագծերում, որոնց շրջանակներում մշակվում են նոր կրթական ծրագրեր, որտեղ հաշվի են առնված կանաչ ուղղվածությանը վերաբերող հիմնախնդիրները:

T-GREEN «Հետբակալավրի կրթության փոխակերպումը հանուն կանաչ և կայուն ապագայի» նախագծի շրջանակներում 3 տարբեր ֆակուլտետներ ավարտել են կանաչ բաղադրիչ ունեցող 3 նոր մագիստրոսական կրթական ծրագրերի («Կայուն քաղաքներ», «Կանաչ տնտեսություն և կառավարում», «Բլոկչեյն և թվային արժույթներ») մշակումը: Ծրագրերը հաջողությամբ անցել են փորձաքննությունը և ԵՊՀ Գիտական խորհրդի 2025թ. հունիսի 26-ի թիվ 11/4 որոշմամբ հաստատվել են: Առաջիկայում ներկայացվելու են լիցենզավորման:

Բովանդակային փոփոխություններ են իրականացվել Կենսաբանության ֆակուլտետի մի քանի կրթական ծրագրերում: Մասնավորապես. «T-GREEN» նախագծի շրջանակում վերանայվել և բարեփոխվել են «Մանրէների էկոլոգիա» (3 ECTS), «Ախտոտված տարածքների կենսավերականգ նում» (3 ECTS) և «Հողի էկոլոգիա և կառավարում» (6 ECTS) դասընթացների նկարագրիչները՝ Կանաչ կրթության հայեցակարգին ուղղված: Փոփոխությունները իրականացվել են ինչպես այլ համալսարանների հետ բենչմարքինգի, այնպես էլ դասավանդող անձնակազմի հետ իրականացված քննարկումների արդյունքում: Մասնավորապես, «Մանրէների էկոլոգիա» դասընթացը համեմատվել է Եյլի (ԱՄՆ), Հելսինկիի (Ֆինլանդիա), Զագրեբի (Խորվաթիա), ինչպես նաև Գաջա Մադա (Ինդոնեզիա) համալսարանների համապատասխան դասընթացի հետ, իսկ «Ախտոտված տարածքների կենսավերականգնում» և «Հողի էկոլոգիա և կառավարում» դասընթացները՝ Բոլոնիայի (Իտալիա), Լուլեոյի տեխնոլոգիական (Շվեդիա), Նոթինգհեմի (Մեծ Բրիտանիա), Ուորիկի (Մեծ Բրիտանիա) և Էմհերսթի Մասաչուսեթսի (ԱՄՆ) համալսարանների համանման դասընթացների հետ: Հստակ սահմանվել են դասընթացների նպատակները, ուսումնառության վերջնարդյունքները, դասընթացների հիմնական բաժինները:

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան - Համալսարանում գործող 61% բակալավրիատի կրթական ծրագրերում և 46% մագիստրոսի կրթական ծրագրերում ներառված են «Կանաչ կրթություն» բաղադրիչներ: Համալսարանը ներկայումս ներգրավված է Եվրամիության կողմից ֆինանսավորվող երկու Erasmus+ նախագծերում, որոնք ուղղված են «Կանաչ կրթության» զարգացմանը:

«Հետբակալավրի կրթության փոխակերպումը հանուն կանաչ և կայուն ապագայի» (ERASMUS+ T-GREEN project No 101083014) նախագծի հիմնական նպատակն է ազգային և ինստիտուցիոնալ վարչական կազմի, որոշումներ կայացնողների, քաղաքականություն մշակողների, մանկավարժների, հետազոտողների և ուսանողների մոտ այնպիսի կարողությունների զարգացումը, որոնց միջոցով նշված դերակատարները կկարողանան

կայուն զարգացման նպատակները և բնապահպանական խնդիրները ինտեգրել քաղաքականության և կրթական բովանդակության մեջ:

2023-2025թթ. Էրազմուս+ «Հետբակալավրի կրթության փոխակերպումը հանուն կանաչ և կայուն ապագայի» (T- GREEN) նախագծի շրջանակներում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հետ համատեղ մշակման փուլում է «Կայուն քաղաքներ» կրկնակի դիպլոմի շնորհմամբ մագիստրոսական կրթական ծրագիրը, որը հիմնված է լինելու «Կանաչ կրթության» բաղադրիչի վրա: 2024-2026թթ. Էրազմուս+ «Հայաստանում և Մոլդովայում բակալավրի կրթության բարեփոխումը հանուն կանաչ և կայուն զարգացման» (RE-GRAD) նախագծի շրջանակներում «Կանաչ կրթության» բաղադրիչի ներառվածության ուղղությամբ նախատեսվում է բարեփոխել երկու բակալավրի կրթական ծրագիր՝

ա) Ջերմագազամատակարարում և օդափոխություն,

բ) Գեոդեզիա և կադաստր:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան - բակալավրի աստիճանի բոլոր ԿԾ-ում ներդրված է բնապահպանություն մոդուլը, բացի այդ ՀԱՊՀ թվով 6 մասնաշենքի (2, 5, 9, 17, 19, 21) տանիքներին տեղադրված է արևային կայաններ, որոնք ոչ միայն զուտ էներգիայի աղբյուրներ են, այլ նաև օգտագործվում են կանաչ էներգետիկայի վերաբերյալ ուսանողներին հավելյալ գիտելիքներ հաղորդելու համար: Մասնավորապես, այդ կայանների նախագծման և հավաքման աշխատանքներին մասնակցել են տարբեր ԿԾ-ի ուսանողներ:

ՀԱՊՀ-ն մաս է կազմում Erasmus + T-GREEN «Հետբակալավրի կրթության փոխակերպումը հանուն կանաչ և կայուն ապագայի» նախագծին, որը բուհերում իրականացվող հետբակալավրի կրթության անհրաժեշտ բարեփոխումներին ուղղված նախագիծ է, որի համար առանցքային է «Կանաչ» քաղաքականությունը: Նախագծի իրականացումը բուհերին հնարավորություն կտա ավանդական կրթական ծրագրերից անցում կատարել դեպի ապագային միտված, կանաչ և միջդիսցիպլինար ուսումնական ծրագրերին: Նախագծի շրջանակներում արդեն իսկ մշակվել է «Հանուն կայուն զարգացման կրթության ազգային ճանապարհային քարտեզ», որի նպատակն է ավանդականից դեպի ապագամետ և կանաչ ուսումնական ծրագրերի զարգացման խթանումը: Հաջորդ քայլով նախատեսվում է մագիստրոսական 3 (որից երկու խումբ իրականացվելու է ՀԱՊՀ և գործընկեր բուհերի հետ համատեղ) միջդիսցիպլինար ներպետական համատեղ/կրկնակի դիպլոմի ծրագրերի մշակում, լիցենզավորում և փորձարկում, ինչպես նաև առկա մագիստրոսական կրթական ծրագրերի վերապրոֆիլավորում՝ կանաչ կրթության և տնտեսության ազգային նոր տեսլականին համահունչ:

Շվեյցարական Helvetas Swiss Intercooperation կազմակերպությունից ֆինանսավորվող RECONOMY ծրագրով ՀԱՊՀ-ի Գյումրու մասնաճյուղի կողմից իրականացվող «Mini-Industry in T&A» նախագծի շրջանակում վերանայվել է «Տեքստիլ և թեթև արդյունաբերության նյութերի և արտադրանքների տեխնոլոգիա» բակալավրի հեռակա մասնագիտության մի շարք դասընթացների առարկայական ծրագրեր՝ միտված կանաչ և անթափոն արտադրու թյանը:

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան – Համալսարանը մասնակցում է Erasmus+ KA2 (Capacity Building in Higher Education) շրջանակում իրականացվող «T4GREEN — Transforming Teacher Education for Green and Digital Transition in Armenia and Moldova» ծրագրին: Ծրագրի նպատակն է ուսուցիչների պատրաստման կրթական ծրագրերում ներդնել «կանաչ կրթություն» բաղադրիչը և ապահովել թվային և կայուն զարգացման սկզբունքների ինտեգրումը:

Ծրագրի շրջանակում բուհում վերանայվում են ուսուցիչների պատրաստման կրթական ծրագրեր, ավելացվելու են նոր մոդուլներ, որոնք ընդգրկում են բնապահպանական կրթության, կլիմայի փոփոխության, կենսաբազմազանության պահպանության և շրջակա միջավայրի կայուն կառավարման թեմաներ: Ծրագրին բուհը մասնակցում է համագործակցելով Masaryk University (Չեխիա), Universidad de Valladolid (Իսպանիա), Universidade da Beira Interior (Պորտուգալիա) և այլ եվրոպական գործընկերների հետ: ՀՀ մասով գործընկեր են նաև Երևանի պետական մանկավարժական համալսարանը, Երևանի պետական համալսարանը, Շիրակի պետական համալսարանը, ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, NCEDI և ACEP կենտրոնները:

Որպես արդյունք՝ ընտրված են ուսուցիչների նախնական կրթության 12 ծրագրեր՝ բակալավրի (5), մագիստրոսի (5) և 2 կարճ կրեդիտային ծրագրերի (առկա և նոր մշակված) STEM, օտար լեզվի և հատուկ և ներառական կրթության, ինչպես նաև գործող ստանդարտների հիման վրա ընդհանուր մանկավարժության դասընթացների համար: Հայաստանի և Մոլդովայի 5 բուհերում կվերանայվեն կանաչ և թվային անցման հետ կապված կրթական ծրագրերը:

ՀՀ պետական կառավարման ակադեմիա - Կառավարման ամբիոնի «Վիճակագրություն, համաթվեր և հետազոտության մեթոդաբանություն», Իրավագիտության ամբիոնի «Մարդու իրավունքներ» դասընթացներում ներառված են շրջակա միջավայրի պահպանության պարտականության իրացման թեմաներ:

Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան - «Հիգիենա և էկոլոգիա» առարկայի ուսումնառության շրջանակներում ներառված են էկոկրթության դասընթացներ՝ նվիրված էկոհամակարգի ազդեցությանը հանրային առողջության ցուցանիշների վրա:

Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան- «Լրագրություն» ԿԾ-ի համար մշակվել և ներդրվել է՝ ‹‹Բնապահպանական լրագրություն›› կամընտրական դասընթաց, ինչպես նաև նախատեսվում է նաև «Հասարակայնության հետ կապեր» ԿԾ-ի «PR արշավների կազմա կերպում և կառավարում» առարկայի շրջանակում ինտեգրել բնապահպանական խնդիրների թեման:

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա – Ակադեմիայի 2023-2027թթ. ռազմավարական ծրագրով սահմանված է կանաչ կրթության մոտեցումների ներառումը կրթական ծրագրերում: Ներկա դրությամբ բոլոր կրթական ծրագրերում ներառված է «Բնապահպանություն» դասընթացը, իսկ «Դիզայն» և «Ինտերիերի դիզայն» բակալավրի կրթական ծրագրերում՝ «Բնապահպանություն և կայուն դիզայն» մոդուլը, մասնավորապես 9 բակալավրի կրթական ծրագրեր ներառում են «Էկոլոգիա» դասընթացը, որը համապատասխանում է ԿԾ-երի բովանդակությանը:

Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան - «Կանաչ կրթության» սկզբունքը ներառված է հետևյալ կրթական ծրագրերում՝ 011401.01.6 «Կենսաբանություն»-բակալավր, 011401.01.7 «Կենսաբանություն»-մագիստրատուրա, 053101.02.6 «Դեղագործական քիմիա»:

ՇՊՀ-ն մասնակցում է Էրազմուս+ ծրագրի աշխատանքներին և այդ շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում լրամշակվել են մագիստրատուրայի 2 ՄԿԾ («Աշխարհագրություն», «Հատուկ մանկավարժություն»), ինչպես նաև բակալավրի 1 ՄԿԾ («Անգլերեն և գրականություն»), որոնցում ներառվել է «Կանաչ կրթություն» բաղադրիչը:

Նշված ՄԿԾ-ների փորձարկումը նախատեսված է անցկացնել 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակում:

Հայաստանի Ամերիկյան համալսարան- ՀԱՀ-ի մագիստրոսական ծրագիրն ավարտելու պահանջ է՝ ուսանողները պետք է ավարտեն բնապահպանական թեմայով դասընթացի առնվազն 1 միավոր: Որոշ ծրագրեր օգտագործում են 1 միավորի դասընթացները, որոնք մշակվել և մատուցվել են ՀԱՀ Յակոբեան Բնապահպանական կենտրոնի կողմից, և որոնց անվանումներն են՝ ENV300 Humans and the Natural Environment (Մարդիկ և բնական միջավայրը) և ENV330 Business and Environmental Sustainability (Գործարար և բնապահպանական կայունություն): ՀԱՀ Ակեան բնագիտության և ճարտարագիտության ֆակուլտետը/քոլեջը առաջարկում է Շրջակա միջավայրի և կայունության գիտությունների բակալավրի ծրագիր (cse.aua.am/ess), իսկ բակալավրիատի ընդհանուր կրթության ծրագիրն առաջարկում է մեծ թվով բնապահպանական և կայունության թեմաներով դասընթացներ: Այս դասընթացների ցանկը հասանելի է ՀԱՀ ընդհանուր կրթության դասընթացների կատալոգում՝ https://gened.aua.am/courses-and-their-clusters/GenEd :

Հայաստանի եվրոպական համալսարան – Համալսարանի կրթական ծրագրերում «Կանաչ կրթություն» բաղադրիչի ներառվածությունն ապահովված է «Կայուն զարգացում և էկոլոգիա» դասընթացով, ինչպես նաև Կառավարում, Ֆինանսներ կրթական ծրագրերում առկա՝ Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների կառավարում, Սերվիս կրթական ծրագրում՝ էկոլոգիայի հիմունքներ, էկոլոգիական զբոսաշրջություն և կենսագործունեության անվտանգություն դասընթացներով:

Ավանդական բժշկության համալսարան – Համալսարանի գործող ՄԿԾ-ների ուսպլաններում առկա է ֆիտոթերապիա (բուսաբուժություն) պարտադիր առարկայական դասընթացը:

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան – Համալսարանի կրթական ծրագրերը ներառում են պարտադիր էկոլոգիական ասպեկտ (կամ բնապահպանական բաղադրիչ)՝ որպես «Հիգիենա, էկոլոգիա» և «Էկոլոգիայի և մարդու հարմարվողականության հիմնախնդիրներ» առարկաների դասավանդման մաս, որը նպաստում է և մասնագիտական գործունեության մեջ բնապահպանական գիտելիքների, գործնական հմտությունների և վարքագծի ձևերի օգտագործմանը, «կանաչ» կոմպետեն ցիաների ձևավորմանը, զարգացմանը և կայուն խթանմանը:

Ամեն տարի անցկացվում են բնապահպանական միջոցառումներ ուսանողների և դասախոսների մասնակցությամբ:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան – ՀՊՏՀ-ն Էրազմուս+ ծրագրի «Մագիստրոսական կրթության փոխակերպումը հանուն կանաչ և կայուն ապագայի» (T-GREEN) նախագծի շրջանակում մշակել և լիցենզավորման է ներկայացրել «Կանաչ տնտեսություն և կառավարում» աստճանաշնորման մագիստրոսական ծրագիրը:

Հայաստանի ազգային ագրարային համալսարան - «T-GREEN» նախագծի շրջանակում ՀԱԱՀ-ն մշակելու և ներդնելու է երկու կրկնակի մագիստրոսական որակավորում՝

1. Double MA Degrees Green Economy and Management

(minimum credits: 60; minimum study duration: 1 year) Կանաչ տնտեսություն և կառավարում մագիստրոսական որակավորում, որն առաջարկվելու է Երևանի պետական համալսարանի հետ համատեղ,

2. Double MA Degrees in Sustainable Cities (minimum credits: 60; minimum study duration: 1 year) Կայուն քաղաքներ մագիստրոսական որակավորում. որն առաջարկվելու է Հայաստանի Ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանի հետ համատեղ: Բացի դրանից, նախագծի շրջանակում առկա Պարենամթերքի տեխնոլոգիա մագիստրոսական ծրագիրը կվերանայվի, որոշակի մոդուլներ կվերապրոֆիլավորվեն գոյություն ունեցող ուսումնական պլանը ավելի «կանաչ» դարձնելու նպատակով (4-5 առարկայական ծրագիր, ընդհանուր 20-25 կրեդիտ),

3. Ակվակուլտուրայի և ձկնային տնտեսության կրթության զարգացումը հանուն Կանաչ գործարքի Հայաստանում և Ուկրաինայում. կրթությունից դեպի էկոլոգիա» (AFISHE):

Գավառի պետական համալսարան - անդամակցում է ‹‹ERASMUS+T-GREEN» ծրագրին: ԳՊՀ-ն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 26.05.2025թ. թիվ 1217-Ա/2 հրամանով ստացել է առկա ուսուցմամբ 041301.00.7-«Կառավարում» մասնագիտությամբ՝ 041301.41.7-«Կանաչ տնտեսություն և կայուն զարգացում» մագիստրոսի կրթական ծրագրով գործունեության լիցենզիա, որի համապատասխան կիրականացնի ուսումնական պլանով նախատեսված, «Կանաչ կրթություն» բաղադրիչին վերաբերող շուրջ 12 դասընթացները: ԵՄ «Էրազմուս+T-Green» ծրագրի շրջանակներում կվերանայվեն նաև այլ կրթական ծրագրերով նախատեսված որոշ դասընթացներ՝ ներառելով «Կանաչ տնտեսությանն ու կառավարմանը» և «Կանաչ կրթությանը» վերաբերող թեմաներ:

Գորիսի պետական համալսարան - «Erasmus+ T-GREEN» ծրագրի շրջանակում ընթացքի մեջ է «Կանաչ տնտեսություն և կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրի ներդրման գործընթացը: «Կանաչ կրթության» սկզբունքը ներառվել է նաև «Բնապահպանության և էկոլոգիայի հիմունքներ» առարկայի դասավանդումով շուրջ 8 մասնագիտություններում:

Հյուսիսային համալսարան - Կանաչ կրթության բաղադրիչը ներառվելու է Հյուսիսային համալսարանի ՄԿԾ-երում «Հայաստանում ներառական, թվային և կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության կառավարման և որակի համար գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի ստեղծում» Erasmus+ դրամաշնորհային ծրագրի շրջանակում, որին մասնակցում է Հյուսիսային համալսարանը:

Եվրասիա միջազգային համալսարան - «Կանաչ կրթության» զարգացմանն է միտված ԵՄ Էրազմուս+ ֆինանսավորման արժանացած կարողությունների զարգացման «Մագիստրոսական կրթության փոխակերպումը՝ հանուն կանաչ և կայուն ապագայի» (T-GREEN) ծրագիրը, որի գլխավոր նպատակն է փոխակերպել մագիստրոսական կրթությունը

Հայաստանում՝ ԵՄ Կանաչ Գործարքի և Կայուն զարգացման նպատակներին համահունչ: Ծրագրի շրջանակներում առաջիկայում ԵՄՀ-ում կմշակվեն և կգործարկվեն հետևյալ կրկնակի դիպլոմի ծրագրերը՝ Գորիսի պետական համալսարանի հետ համատեղ մագիստրոսական կրկնակի դիպլոմի ծրագիր «Կանաչ տնտեսություն և կառավարում», Երևանի պետական համալսարանի և Պոլիտեխնիկական համալսարանի հետ համատեղ մագիստրոսական բազմակի/ կրկնակի դիպլոմի ծրագիր «Բլոկչեյն և թվային արժույթներ»: Ինչպես նաև կվերապրոֆիլավորվի՝ Դեղերի տեխնոլոգիա և կառավարում մագիստրոսական ծրագիրը:

Ընդհանուր առմամբ, վերանայված կրթական ծրագրերը 2025թ. դրությամբ կազմում են ընդհանուր կրթական ծրագրերի 5%- ը:

- *Բարձրագույն կրթության որակավորումներիի ազգային շրջանակի ինքնահավաստագրման գործընթացի իրականացում*

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2025 թվականի փետրվարի 19-ի N 07-Լ հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստագրման գործընթացը կազմակերպելու ծրագիրը», որում նկարագրված է ինքնահավաստագրման գործընթացի հիմնական փուլերի նպատակները և ակնկալվող արդյունքները, ինչպես նաև հստակ սահմանված են ժամկետները (2025-2029թթ):

Հաստատված ծրագրով բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստագրման նպատակն է՝ ՀՀ ՈԱՇ-ի բարձրագույն կրթությանը համապատասխանող 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակների և Եվրոպայի բարձրագույն կրթության ոլորտի որակավորումների շրջանակի (QF-EHEA) համապատասխանեցման միջոցով ապահովել միջազգային մակարդակում ՀՀ բարձրագույն կրթության որակա վորումների թափանցիկության մեծացումը, դյուրին դարձնել ուսանողների ակադեմիական և շրջանավարտների մասնագիտական շարժունությունն ու ապահովել ՀՀ դիպլոմների միջազգային ճանաչումը: Նշված գործընթացների մեկնարկը պայմանավորված է նոր օրենքի ընդունմամբ:

Որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստագրման զեկույցի մշակման աշխատանքներն իրականացնելու համար ձևավորվել են աշխատանքային խմբեր:

- *Պետական պատվերի ձևավորման միջնաժամկետ ու երկարաժամկետ պլանավորման ինստիտուցիոնալ մեխանիզմների սահմանում*

Պետական պատվերի մեխանիզմները սահմանված են, քանի որ 2024-2025 և 2025-2026 ուսումնական տարիների բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության տեղերը՝ պետական պատվերը ձևակերպելիս հաշվի են առնվել ինչպես աշխատաշուկայի կարիքները, այնպես էլ պետության ռազմավարական առաջնահերթությունները, ոլորտային զարգացման ուղղությունները՝ հիմք ընդունելով տարբեր ոլորտների ռազմավա րական ծրագրերը:

Ընդ որում, առավել պահանջարկ վայելող աշխատատեղերի համալրման խնդրի համաչափ կարգավորման նպատակով, դրանցով ընդունելության համար գրավիչ պայմաններ ստեղծելուն ուղղված նախատեսվել են լրացուցիչ խթանող քայլեր:

Այսպես՝ Բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական և մաթեմատիկական (ԲՏՃՄ) ուղղություններով պետության համար առաջնահերթ և կարևորություն

ներկայացնող մասնագիտություններով սովորողների համար ՀՀ կառավարության 2023 թվականի օգոստոսի 24-ի N 1430-Ն որոշմամբ սահմանվել է կրթաթոշակի նոր համակարգ: Այս որոշմամբ պետության համար առաջնահերթություն ներկայացնող մասնագիտություններով բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններով առկա ուսուցմամբ սովորողներին (մասնագիտական մանկավարժություն՝ ԲՏՃՄ ուղղություններով, ագրարային ոլորտի մասնագիտություններ) տրամադրվում է կրթաթոշակ ըստ կիսամյակների՝ առաջին կիսամյակում 70 հազ. ՀՀ դրամ կրթաթոշակ, իսկ հաջորդ կիսամյակներում՝ նախորդ կիսամյակի արդյունքներով միջին որակական գնահատականի (ՄՈԳ) առավելագույն արժեքի 90,01% և բարձր ՄՈԳ ունեցողներին 77 հազ. ՀՀ դրամ, 80,01-90,00% ՄՈԳ ունեցողներին՝ 70 հազ. ՀՀ դրամ:

Մշակվել և ներդրվել է պետության համար ռազմավարական մասնագիտությունների գծով բարձրագույն կրթության բոլոր մակարդակներում տարկետման նոր համակարգ:

ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 23-ի N 383-Ն որոշմամբ սահմանվել են բուհերի և մասնագիտությունների (բնագիտական, տեխնոլոգիական, ճարտա ռագիտական և մաթեմատիկական (ԲՏՃՄ) ուղղություններով պետության համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող) ցանկը, որոնցում առկա ուսուցմամբ ընդունվող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում է տրամադրվում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի օգոստոսի 1-ի N 46-Լ և 2025 թվականի մայիսի 19-ի NN 18-Լ և 19-Լ հրամանների համաձայն, Հայաստանի ազգային ագրարային և Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարաններում ներդրվել է ընդունելության նոր՝ փորձնական կարգ, որը հնարավորություն է տալիս արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների գյուղատնտեսության և հարակից ոլորտների մասնագիտություններով ամփոփիչ ատեստավորում անցած շրջանավարտների ուսումնառության շարունակումը առաջին կուրսից՝ հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրերով, իսկ հեռակա ուսուցում չունեցող կրթական ծրագրերի համար՝ առկա ուսուցմամբ (Հայաստանի ազգային ագրարային համալսարանում՝ 16, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում՝ 20 կրթական ծրագիր): 2025-2026 ուսումնական տարում այս փորձնական կարգով ընդունվել են համապատասխանաբար՝ 737 և 238 ուսանողներ:

«Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՕ-285-Ն օրենքով ամրագրված իրավական հենքի և լիազորող նորմերին համապատասխան կընդլայնեն պետական պատվերի ձևավորման միջնաժամկետ ու երկարաժամկետ պլանավորման ինստիտուցիոնալ մեխանիզմները: Մասնավորապես, օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով որպես լիազորություն Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին վերապահված է համապատասխան մարմինների հետ իրականացնելու աշխատաշուկայի վերլուծություն և ներկայացնելու առաջարկություններ՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում ըստ մասնագիտությունների կրթաթոշակային տեղերի բաշխման վերաբերյալ:

- *Բուհերում ռազմական ամբիոնների ստեղծման հայեցակարգի մշակում*

Ակադեմիական քաղաքի հայեցակարգով նախատեսված սպայական կլաստերը կունենա երկու բաղադրիչ (ֆակուլտետ, դպրոց կամ այլ կազմակերպական ձև)՝ արտաքին անվտանգային և ներքին անվտանգային: Սպայական համալսարանում ներդրվելու են նաև նոր և թարմացված կրթական ծրագրեր՝ համագործակցելով Ակադեմիական քաղաքում տեղակայված բուհերի հետ:

Միջոցառման շրջանակներում քննարկումներ են ընթանում, որում ներգրավված են նաև ՀՀ պաշտպանության նախարարության և այլ շահագրգիռ պետական մարմիններ, բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ հաշվի առնելով Ակադեմիական քաղաքի հայեցակարգով նախատեսված սպայական կլաստերի ստեղծումը, որը նախատեսված է միասնական տրամաբանությամբ և ծառայության վերաբերյալ որոշակի միասնական սկզբունքների շուրջ կրթական գործընթացի կազմակերպման համար:

- *Բուհերում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար անհրաժեշտ հարմարեցումներով խելամիտ միջավայրի ստեղծում՝ հաշվի առնելով օրենսդրությամբ սահմանված նորմերը*

Գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների առնվազն 25%-ն ապահովված է (հիմք ընդունելով բուհերից ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքները) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար նվազագույն անհրաժեշտ ֆիզիկական միջավայրի խելամիտ հարմարեցումներով՝ *Երևանի պետական համալսարան* - ԵՊՀ մասնաշենքերում տեղադրված են հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար հարմարեցված թեքահարթակներ, այդ թվում՝ կենտրոնական մասնաշենքում թեքահարթակները և՛ էլեկտրական են, և՛ ստատիկ: Վերելակներ ևս առկա են:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան- 6 ֆակուլտետներից 3-ում (Ֆինանսների, Կառավարման, Ինֆորմատիկայի ու Վիճակագրության ֆակուլտետներում) առկա են թեքահարթակներ: Ավելի վաղ ֆակուլտետներից երկուսի սանհանգույցներն արդեն իսկ համապատասխանեցվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար: Համալսարանի բարձրահարկ շենքում տեղակայված ֆակուլ տետը համալրված է 2 վերելակներով:

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան - ՃՇՀԱՀ-ի Տերյան 105 հասցեում գտնվող 2-րդ մասնաշենքի առաջին հարկում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար գործում է վերելակ, վերանորոգվել ու հարմարեցվել են սանհան գույցները:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալասարան – սովորում է 25 ուսանող: Համալսարանի բոլոր մասնաշենքերում (բացառությամբ մեկից) կառուցվել են թեքա հարթակներ՝ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար: Կառուցվել են թեքահարթակներ, ՀԱՊՀ-ի 4 մասնաշենքերում 10 վերելակ է գործում, որից 5-ը նոր է տեղադրվել: Վերելակները հարմարեցված են անվասայլակներ օգտագործողների համար:

Հայաստանի ազգային ագրարային համալսարան - Համալսարանի երկրորդ մասնաշենքն ամբողջությամբ հարմարեցված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար անհրաժեշտ միջավայրով, ինչպիսիք են՝ 2 վերելակ,

թեքահարթակներ յուրաքանչյուր հարկում և 4 սանհանգույց: Առաջին մասնաշենքում բոլոր գիտաարտադրական լաբորատորիաները տեղակայված են առաջին հարկում, ինչը թույլ է տալիս անխոչընդոտ մասնակցել արտադրական և հետազոտական գործընթացներին:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան - Համալսարանի երկու մասնաշենքերում առկա են թեքահարթակներ, որոշակի հարմարեցումներ ԿԱՊԿ ունեցող ուսանողների համար նվազագույն անհրաժեշտ ֆիզիկական միջավայրի ապահովման համար: Բոլոր մասնաշենքերի աստիճանները և քայլահարթակները, վտանգավոր եզրերը եզրագծված են դեղին գծով՝ թույլ տեսողության խնդիրներ ունեցողների համար: Բարձրահարկ մասնաշենքում գործում են թվով 4 վերելակներ, որոնք կահավորված են բրայլյան այբուբենով հրահանգման կոճակներով: ՀՊՄՀ-ի թանգարանը ապահովված է սուրդոթարգ մանությամբ: Բուհը տրամադրում է նաև տեսալսողական խնդիրներ ունեցող ուսանողների համար ուղեկցող օգնականներով, ովքեր ուղեկցում են ուսանողին դասախոսությունների և ուսումնառության այլ գործընթացներում:

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան - Համալսարանն ապահովված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար նվազագույն անհրաժեշտ ֆիզիկական միջավայրով (բոլոր մասնաշենքերի առաջին հարկերում առկա են թեքահարթակներ, իսկ գրադարանի մասնաշենքում առկա է նաև վերելակ):

ՀՀ պետական կառավարման ակադեմիա- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար հիմնական մասնաշենքում և գրադարանում առկա են թեքահարթակ և հարմարեցված սանհանգույց:

Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալասարան– նոր կառուցված շինություններում ամբողջապես հաշվի են առնված առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար անհրաժեշտ հարմարավետությունները, իսկ ավելի հին շինություններում, ըստ հնարավորությունների, դրանց թիվն ավելացվում են:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա- ուսումնառության ընթացքում բուհում կիրառվում են անհրաժեշտ խելամիտ հարմարեցումներ՝ ցուցաբերելով անհատական մոտեցում յուրաքանչյուրին, ելնելով հաշմանդամ ուսանողի կարիքներից ու առանձնահատկություններից: Անհրաժեշտ խելամիտ հարմարեցումները տրամադրվել են անհատական պարապմունքների, առցանց նյութերի ձևով:

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ – բուհի մուտքի աստիճանավանդակին կից առկա է թեքահարթակ: Առկա է նաև թույլ լսողություն ունեցող ուսանողների դերասանական կուրս՝ «Մնջախաղ» մասնագիտությամբ: Ուսանողները հրաժարվել են ժեստերի լեզվի թարգմանչից, քանի որ մասնագիտական առարկաների դասախոսները տիրապետում են ժեստերի լեզվին: Մյուս բոլոր դասընթացները՝ առանձնահատուկ միջավայրի ապահովմամբ և տեսողական սարքերի կիրառմամբ /համակարգիչ, գրատախտակ և այլն/, հարմարեցվել են իրենց հնարավորություններին:

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ - կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար մշակվել են նորմատիվներ: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար առկա է թեքահարթակ, հենաշարժողական խնդիրներ ունեցող ուսանողների համար հարմարեցված սանհանգույց և լսարան:

Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան – առկա են թեքահարթակներ, որոնք ապահովում են ելումուտը բոլոր ուսումնական մասնաշենքերի միայն առաջին հարկեր, ինչպես նաև գրադարանի մուտքի մոտ: Գրադարանի ընթերցասրահում առկա է համացանցի և անլար կապի մշտական հասանելիություն, որը հնարավորություն է տալիս օգտվել ազատ հասանելիություն ունեցող աուդիոգրքերից:

Գավառի պետական համալսարան - Համալսարանի բոլոր մասնաշենքերի (կենտրոնական, 2-րդ և 3-րդ ուսումնական) մուտքերը հարմարեցվել են հատուկ կարիք ունեցող անձանց համար, կառուցվել են 4 թեքահարթակներ, կենտրոնական մասնաշենքում տեղադրված է անվտանգության համակարգ: Բոլոր մասնաշենքերի առաջին հարկերում գործում են սանհանգույցներ, որոնց տեխնիկական պահանջները բավարար են հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար:

Գորիսի պետական համալսարան – Համալսարանի բոլոր մասնաշենքերի մուտքերն ունեն թեքահարթակներ, հատուկ կարիք ունեցող անձանց համար առաջին հարկերում կան սանհանգույցներ և ուսումնական լաբորատորիաներ:

Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան - կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար ՇՊՀ-ի մուտքում առկա է թեքահարթակ: ՇՊՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի դրույթների իրականացմամբ և առավել ներառականություն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ հաշվետու ժամանակահատվածում քննարկվել են բուհի մասնաշենքի ներսում թեքահարթակի պատրաստման և համապատասխան սանհանգույց ունենալու հարցերը:

Հայաստանի եվրոպական համալսարան - Համալսարանի 2 մասնաշենքերի մուտքերը հարմարեցվել են հատուկ կարիք ունեցող ուսանողների համար անհրաժեշտ թեքահարթակներով: 2025թ. նախատեսվում է 2 վերելակի ներկառուցում և մեկ սանհանգույցի կահավորում մասնաշենքերում: Թեպետ բուհում հատուկ կարիք ունեցող ուսանողներ առկա չեն, այնուամենայնիվ բուհը աստիճանաբար քայլեր է ձեռնարկում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար անհրաժեշտ հարմարեցումներով խելամիտ միջավայրի ստեղծման ուղղությամբ:

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան - կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար համալսարանն ունի մուտքի աստիճաններ՝ բազրիքներով՝ լայն բացվող դռներով: Կազմվում են արտաքին մուտքի թեքահարթակի տեղադրման նախագծային փաստաթղթեր՝ հաշվի առնելով անվտանգության և մատչելիության բոլոր պահանջները:

Հայաստանի ամերիկյան համալսարան- համալսարանի մասնաշենքերը հարմարեցված են հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար, նաև կան սահմանափակ թվով սարքավորումներ տեսողական խնդիրներ ունեցող անձանց ուսումնական պրոցեսը կազմակերպելու համար:

Ավանդական բժշկության համալսարան- նորակառույց երկու մասնաշենքերը ամբողջովին հարմարեցված են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար (թեքահարթակներ, վերելակներ, հարմարեցված սան հանգույցներ և այլն):

Եվրասիա միջազգային համալսարան– Համալսարանն ունի հարմարեցված վերելակ, թեքահարթակ, սանհանգույց և այլն: ԵՄՀ Հանրային կապերի և մարքեթինգի բաժինը մեկնարկել է նաև նոր կայքէջի ստեղծման աշխատանքները: Վերջինս նույնպես ներառական է լինելու (inclusive website)՝ հնարավորություն տալով հատուկ կարիք ներով շահակիցներին հեշտու թյամբ օգտվելու կայքից:

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա - Ակադեմիան վերանորոգվել և հարմարեցրել է սանհանգույցը հենաշարժողական խնդիրներ ունեցող անձնաց համար: Բուհը նախատեսում է բարելավել շենքային պայմանները՝ ԿԱՊԿ ունեցող ուսանողներին ապահովել անհրաժեշտ և խելամիտ հնարավոր հարմարեցումներով:

Միևնույն ժամանակ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացվել համապարփակ տեղեկատվություն՝ բուհերում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար իրականացվող ծրագրերի և ծառայությունների վերաբերյալ:

«Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքում (ՀՕ-285-Ն), ի թիվս այլ հասկացությունների, ամրագրվել են մատչելի միջավայր, ներառականություն հասկացությունները և դրանց կիրառման մեխանիզմները, մասնավորապես՝

Օրենքում ներառականությունը սահմանված է որպես յուրաքանչյուր ուսանողի և աշխատողի համար, այդ թվում՝ կրթության և աշխատանքի առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ մատչելի պայմանների և խելամիտ հարմարեցումների ապահովման միջոցով կրթական և հետազոտական գործընթացին առավելագույն մասնակցության ապահովում,

մատչելի միջավայրը մեկնաբանված է որպես կրթության և աշխատանքի ներառականության ապահովմանը միտված միջավայր, որն իր մեջ ներառում է ֆիզիկական միջավայրի (շենքային պայմաններ, փոխադրամիջոցի հարմարեցումներ, սննդի կետեր, սանհանգույցներ, հանգստի գոտիներ, այլ անհրաժեշտ հարմարեցումներ), տեղեկա տվության (տեղեկատվության միջոցներ, ուսումնական ծրագրեր և նյութեր, ներառյալ մեթոդական) և հաղորդակցության միջոցների (հաղորդակցման հարմարեցված գործիքներ ներառյալ թվային հավելվածներ կամ այլ միջոցներ) բաղադրիչները:

Միաժամանակ բարձրագույն կրթության հասանելիությունը և ներառականությունն ընդգրկված է բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում պետական քաղաքականության սկզբունքներում և հիմնական ուղղություններում:

Ներառականության ապահովման պայմանները կարևորվում են նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների լիցենզավորման և հավատարմագրման գործընթացներում: Ըստ Օրենքի (6-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետ)՝ բուհը, օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված լիազորություններին համապատասխան ներառակա նության ապահովման նպատակով մատուցում է աջակցության ծառայություններ, այդ թվում՝ մեթոդական, հոգեբանական, հավելյալ կրթական ծրագրերը, ինչպես նաև անհատական ուսուցման պլանի կազմում, որոնք ցուցաբերվում են ուսանողին և ակադեմիական կազմին: Օրենքի 36-րդ հոդվածով՝ բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում Լիազոր մարմնին լիազորություն է վերապահված բուհերի ուսումնական գործընթացի կազմակերպմանն աջակցելու նպատակով հաստատելու խորհրդատվական

բնույթի մեթոդաբանություններ, ուղեցույցներ, օրինակելի կարգեր, որոնց թվում կարող է դիտարկվել նաև բարձրագույն կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայու թյունների իրավական կառուցակարգերը:

Ընդհանուր առմամբ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար նվազագույն անհրաժեշտ ֆիզիկական միջավայրի խելամիտ հարմարեցումներով ապահովված են գործող բուհերի առնվազն 25%-ը:

- *Ազգային փոքրամասնությունների համար բարձրագույն կրթության հասանելիության շարունակական ապահովում*

ՀՀ կառավարության 2025 թվականի ապրիլի 17-ի N 449-Ն որոշմամբ 2025-2026 ուսումնական տարվա համար բարձրագույն կրթության համակարգում ազգային փոքրամասնությունների համար սահմանվել է 7 նպատակային տեղ և ևս 4 տեղ (պահուստային) հատկացվել է վճարովի համակարգ ընդունված ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ այն դիմորդներին, որոնք հաղթահարել են քննությունների ընդհանուր առավելագույն միավորի 75%-ը (առնվազն 30 միավոր): Ըստ ներկայացված տվյալների՝ այս դիմորդների թիվը 11-ն է: Վճարովի համակարգ է ընդունվել 23 ուսանող:

Միաժամանակ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՕ-285-Ն օրենքով սահմանվել են բուհերի ֆինանսավորման, ընդունելության և կրթաթոշակային քաղաքականության նոր սկզբունքներ, իսկ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով և 41-րդ հոդվածի 6-րդ մասով ամրագրված է, որ պետության կողմից տրամադրվող ուսումնառության կրթաթոշակի տրամադրման կարգը, այդ թվում դրան հավակնելու և դրանից զրկվելու պայմանները, ներառյալ կրթաթոշակների տարատեսակները, պահանջներն ու չափանիշները, թիրախային խմբերը (այդ թվում՝ միջպետական պայմանագրերով սովորող կամ որոշակի ձեռքբերումներ ունեցող օտարերկրյա ուսանողներին) սահմանվում են Կառավարության որոշմամբ: Այսպիսով, նոր կրթաթոշակային քաղաքականության համատեքստում կդիտարկվեն ազգային փոքրամասնություններին պատկանող սովորողների, որպես առանձին թիրախային խումբ, կրթությունը ուսումնական հաստատություններում խթանելու նպատակով կրթաթոշակի տրամադրման պայմանները:

- *Բարձրագույն ուսումնական հաստատությունների հեռավար կրթություն իրականացնելու ենթակառուցվածքների ընդլայնում և արդիականացում՝ ներդնելով հեռավար կրթական ծառայություններ, էլեկտրոնային բաց պաշարներ, առցանց դասընթացներ՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձանց առանձնահատկությունները*

Գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների առնվազն 10%-ում (հիմք ընդունելով բուհերից ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքները) ներդրված են հեռավար կրթական ծառայությունները, էլեկտրոնային բաց պաշարները, առցանց դասընթացները: Մասնավորապես՝

Երևանի պետական համալսարան- Համալսարանի ընդհանուր կրթաբլոկի 2 դասընթաց՝ «էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» և «Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն» /մասնակի/ դասընթացները իրականացվում են առցանց տարբերակով:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան - Համալսարանը հեռավար կրթության կազմակերպման նպատակով ձևավորել է ուսումնառության և վարչարարության 2 առանձին հարթակներ՝ moodle.asue.am, ums.asue.am: Համալսարանի 333 ակադեմիական խմբերի համար moodle հարթակում ձևավորված են 2522 ուսումնական մոդուլներ, որից 1572-ը առկա, 687-ը՝ հեռակա բակալավրիատի, 240-ը՝ առկա, 23-ը՝ հեռակա մագիստրատուրայի ակադեմիական խմբերի համար: Համակարգում ներգրավված են Համալսարանի և Գյումրու մասնաճյուղի առկա և հեռակա կրթաձևերի բոլոր կրթական ծրագրերի ակադեմիական խմբերի ուսանողներն ու դասավանդողները: moodle հարթակով են իրականացվում նաև Համալսարանի ուսանողների, վարչական և ակադեմիական կազմի հարցումները, դասընթացների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ընտրությունը: Թվով 8 լսարաններ կահավորվել են հեռավար կապի միջոցներով: Ներկայումս համալսարանը, ըստ հաստատված ռազմավարական ծրագրի, կահավորում է վիդեոդասընթացների թողարկման սեփական ենթակառուցվածք: Բացի այդ համալսարանն իր ուսանողներին ապահովում է թվով 11 բաց հասանելի 18 վճարովի թվային գրադարանների առցանց հասանելիություն:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալասարան- Համալսարանը կազմում է Erasmus + MEDIA «Առցանց կրթության որակի բարելավում Մոլդովայի և Հայաստանի բուհերում» նախագծի մաս, որի շրջանակներում մշակվել է հեռավար կրթության որակի բարելավմանն ուղղված ինչպես նաև առցանց կրթության կազմակերպման էթիկայի կանոնա կարգը և որակի ինստիտուցիոնալ ստանդարտները: Ընթացքի մեջ է «Մեդիա» կենտրոնի ստեղծումը, մինչև տարեվերջ այն պատրաստ կլինի: ՀԱՊՀ-ի վերոնշյալ ուղղու թյամբ վերապատրաստված պրոֆե սորադասախոսական անձնակազմի կողմից մշակվել և համալսարանում մեկնարկել է «Սոցիալական մեդիա և մարքեթինգ» առցանց դասընթացների առաջին շրջափուլը:

ԽԱԲովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան - Համալսարանում գործում է Google for Education հարթակը՝ իր բոլոր ծառայություններով, որի շրջանակներում բոլոր դասընթացները (առկա, հեռակա) ուղեկցվում են Google Classroom դասարանային կառավարման համակարգով: Հարթակը ներառում է Google Classroom, Google Meet, Google Drive և այլ գործիքներ, որոնք ապահովում են ժամանակակից, արդյունավետ և ճկուն հեռավար ուսուցման կազմակերպում, հաղոր դակցում և գնահատում:

Բուհում ստեղծվել են նաև էլեկտրոնային բաց պաշարներ, թեմատիկ տեսանյութեր, էլեկտրոնային ձեռնարկներ, դասախոսությունների ձայնագրություններ և առցանց լրացուցիչ դասընթացներ: Այս նյութերը հասանելի են բոլոր ուսանողների համար՝ նպաստելով շարունակական կրթությանը և ինքնուրույն ուսումնառությանը:

Հայաստանի ազգային ագրարային համալսարան– Համալսարանի գրադարանում ներդրված է Koha էլեկտրոնային հարթակը՝ հագեցած էլեկտրոնային գրքերով, որը հասանելի է բոլոր կրթական ծրագրերով ուսումնառողների համար, գործում է e-learning էլեկտրոնային համակարգը, Moodle հարթակով, որտեղ տեղադրված են բոլոր տեսական, ցուցադրական նյութերը, գործում է ֆորում հարթակ, հասանելի է գնահատման համակարգը: Համալսարանի e-learning՝ Moodle էլեկտրոնային համակարգում

տեղադրված են նաև կարճաժամկետ դասընթացներ, որոշները նաև բաց օգտագործման համար: Օրինակ՝ https://elearning.anau.am/course/index.php?categoryid=77:

Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան - Համալսարանում աշխատանքներ են տարվում թվային պահոցի և գրադարանի զարգացման ուղղությամբ: Գրադարանի համակարգչային սրահում անվճար հասանելի է Bookshare առցանց գրադարանը, որը տրամադրում է մոտ 10.000 էլեկտրոնային գրքերի անվճար հասանելիություն: Գրադարանը նաև թվայնացրել է մի շարք դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ՝ ներքին օգտագործման համար, որոնք նույնպես հասանելի են գրադարանի համակարգչային սրահում: Թվայնացվում են Բրյուսովյան գիտական կենտրոնի նյութերը. այդ գործընթացն ապահովում է նրա գրքային ֆոնդի պահպանումը, որը տեղ է գտնելու համալսարանական էլեկտրոնային պահոցում: Բուհում ներդրվել է առցանց պատվերների ծառայություն, որի շնորհիվ ընթերցողները մի քանի ժամվա ընթացքում սպասարկման բաժնից ստանում են պատասխան՝ պատվիրած գրականության առկայության մասին: Ներդրվել է գրադարանային ռեսուրսների կառավարման «ԿՈՀԱ» համակարգը: Բուհում գործում է նաև Moodle էլեկտրոնային համակարգը, որտեղ պարբերաբար ներբեռնվում են թվային ուսուցման նյութեր, ինչպես նաև Google Classroom և Meet հարթակները կիրառվում են ուսանողների հետ տարբեր ձևաչափերով տարվող աշխատանքներում: Իրականացվել է նաև բուհի համակարգչային լոկալ ցանցի արդիականացում:

ՀՀ պետական կառավարման ակադեմիա – Ակադեմիայի Կառավարում մասնագիտության «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրով, Moodle հարթակի միջոցով, հեռավար ձևաչափով իրականացնում է ուսումնառություն: Ինչպես նաև Ակադեմիայում ներդրված է բուհի էլեկտրոնային կառավարման EBUH համակարգը: Ներդրվել է DSpace թվային ծառայությունը, որը հավաքում, պահպանում և տարածում է թվային նյութեր: Բացի այդ, Ակադեմիան համագործակցում է Google Workspace for Education ծրագրի շրջանակներում Google կազմակերպության հետ: Վերջինիս Google meet, Google classroom, Gmail և Google drive գործիքները օժանդակում են Ակադեմիայի աշխատանքների կազմակերպման մատչելիությանն ու արագությանը:

Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան – Հաշվի առնելով բարձրագույն բժշկական կրթության առանձնահատկությունները՝ ամբողջական առցանց դասընթացներ նախատեսված չեն, սակայն որպես դասավանդման մեթոդ առանձին դեպքերի համար մշակվել և կիրառվում են:

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ- Էրազմուս+ ծրագրի SIN NEC նախագծի շրջանակներում արդիականացվել է մեկ (30-40 ուսանողի համար) լսարան հեռավար դասերին աջակցելու համար: Ձեռք է բերվել սարքավորումներ՝ (Logitech Meetup conferencecam, Projector Benq MW560, Computer HP ProBook 450 G10) և տեղադրվել է լսարանում, որտեղ առկա են համակարգիչներ: Առկա է էլեկտրոնային գրադարան, որը հասանելի է պաշտոնական կայքում:

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա – Հեռավար կրթություն իրակա նացնելու ենթակառուցվածքների արդիականացման նպատակով ՀԳՊԱ-ն մասնակցում է DeSIRe (Erasmus+) ծրագրին, որի նպատակն է խթանել ազգային կրթական համակարգերի զարգացումը, այդ թվում հեռավար, զարգացնել ձեռնարկատիրական և այլ հմտություններ,

այդպիսով օգնելով ուսանողներին արդյունավետորեն հաղթահարել իրենց մասնագիտական մարտահրավերները:

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան- Համալսարանում առցանց ուսուցում իրականացնելու նպատակով կիրառվում է Moodle հարթակ:

Գավառի պետական համալսարան - Համալսարանում գործում է «Learn.gsu.am» էլեկտրոնային ուսուցման համակարգ: Համալսարանն ապահով ված է հեռավար ուսուցման համար անհրաժեշտ ծրագրային և տեխնիկական ռեսուրսներով, կիրառվում են հեռավար ուսուցում ապահովող առցանց հարթակներ՝ «Google Classroom», «Moodle», թիմային աշխատանքի համար ստեղծված հարթակներ՝ «Trello.com», ինչպես նաև տեսակոնֆերանս ապահովող առցանց հարթակներ՝ ZOOM, Trueconf-trueconf.ru, Google Hangouts Meet, webinar.ru, տեսակոնֆերանսի հնարավորություն ընձեռող ծրագեր և հարթակներ: Բոլոր տիպի թվային տեխնոլոգիաներով, հեռահաղորդակցման միջոցներով անցկաց ված դասերը գրանցվում են Distance.gsu.am համակարգում: ԳՊՀ էլեկտրոնային գրադարանի՝ http://library.gsu.am/ թվային ռեսուրսները բաց հասանելիություն ունեն ոչ միայն բուհի ուսանողների, այլև արտաքին շահակիցների համար:

Գորիսի պետական համալսարան- Համալսարանի մասնաշենքերում գործում են 12 համակարգչային լսարաններ՝ հագեցված նորագույն տեխնիկայով, որոնք հնարավորու թյուն են տալիս իրականացնելու հեռավար դասընթացներ ուսանողների համար: Էլեկտրոնային բաց պաշարների ստեղծումը ընթացքի մեջ է:

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան- ներդրված է էլեկտրոնային ուսուցման հարթակը: Գրականության թվայնացման շնորհիվ ավելացել են էլեկտրոնային բաց պաշարները: Մասնավորապես հաշվետու ժամանակահատվածում ավելացել է շուրջ 30 գիրք և ամսագիր, թվայնացվել է ավելի քան 60 գիրք, քննարկվել է դասախոսությունների փաթեթների էլեկտրոնային տարբերակի հասանելիության ապահովման հարցը:

Հյուսիսային համալսարան- Հեռավար կրթության առցանց դասընթացները, էլեկտրոնային բաց պաշարները տրամադրվում են Moodle կրթական հարթակի կիրառման շրջանակում:

Հայաստանի եվրոպական համալսարան - Մարզերի մասնաճյուղերի ու հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների դեպքում առաջադրանքների լուծման համար գործում է Moodle համակարգը:

«Մխիթար Գոշ» Հայ-Ռուսական միջազգային համալսարան - Համալսարանում մշակվում է էլեկտրոնային հարթակ, որը թույլ կտա վերափոխել հիմնական և կրթության կառավարման գործընթացները՝ օգտագործելով թվային տեխնոլոգիաներ: Այս հարթակում օգտագործվելու են հեռավար կրթության ժամանակակից տեխնոլոգիաներ, էլեկտրոնային բաց ռեսուրսներ, առցանց դասընթացներ՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձանց ուսուցման առանձնա հատկությունները:

Ավանդական բժշկության համալսարան – Հաշվի առնելով բարձրագույն բժշկական կրթության առանձնահատկությունները՝ ամբողջական առցանց դասընթացներ նախատեսված չեն, սակայն որպես դասավանդման մեթոդ առանձին դեպքերի համար մշակվել և կիրառվում են հեռավար ուսուցում ապահովող առցանց հարթակ՝ Google Meet ինչպես նաև տեսակոնֆերանս ապահովող առցանց հարթակ՝ ZOOM և այլ համացանցային ծրագրեր: Բոլոր լսարանները հագեցված են անհրաժեշտ համակարգչային տեխնիկական

միջոցներով: 2025-2026 ուստարվանից նոր մասնաշենքում գործելու է ժամանակակից և արդիական կենտրոն:

Եվրասիա միջազգային համալսարան - Համալսարանում սինխրոն և ասինխրոն եղանակներով հեռավար ուսուցման կազմակերպման նպատակով կիրառվում է Microsoft Teams հարթակը, վերջինս ներառում է հեռավար ուսուցման կազմակերպման համապատասխան գործիքակազմ: Բոլոր դասընթացների կտրվածքով հարթակում ձևավորված են վիրտուալ լսարաններ:

- *Բարձրագույն ուսումնական հաստատություններում ակադեմիական կազմի պաշտոնների համալրման, մասնագիտական առաջխաղացման, ինչպես նաև ատեստավորման և վերապատրաստման արդյունավետ մեխանիզմների մշակում ու ներդրում՝ սահմանելով հստակ պահանջներ և այն փոխկապակցելով աշխատանքի վարձատրության հետ, հրավիրյալ պրոֆեսորների ընդգրկում բուհերում՝ ներառելով նաև սփյուռքահայ գիտնականներին*

Հրավիրյալ դասախոսների մասնաբաժինը ընդհանուր պրոֆեսորադասախոսական կազմի մեջ ըստ առանձին բուհերի հետևյալն է՝

Երևանի պետական համալսարանում՝ 5.3 %,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում՝ 2%,
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում՝ 40%,
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում՝ 20 %,
Հայաստանի ազգային ագրարային համալսարանում՝ 22,2%,
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում՝ 17.6 %,
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում՝ 25.87%,
ՀՀ պետական կառավարման ակադեմիայում՝ 70 %,
Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում՝ 7,8%,
Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում՝ 3.9%,
Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում՝ 17 %,
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում՝ 29,9%,
Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանում՝ 22.5 %,
Գավառի պետական համալսարանում՝ 37%,
Գորիսի պետական համալսարանում՝ 24 %,
Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանում՝ 4,35%,
Հայաստանի եվրոպական համալսարանում՝ 58%,
Հյուսիսային համալսարանում՝ 20%,
«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանում՝ 5,2%,
Ավանդական բժշկության համալսարանում՝ ՀՀ-ից՝ 48%, արտասահմանից՝ 1%,
Հայաստանի ամերիկյան համալսարանում՝ 21%,
Եվրասիա միջազգային համալսարանում՝ 30%:

Ընդհանուր առմամբ, նշված ՀՀ բուհերում հրավիրյալ դասախոսների մասնաբաժինն ընդհանուրի մեջ 2.5%-ից ավելի է:

Նպատակ 2. Բարձրագույն կրթության արդյունավետության բարձրացում

- *Բուհերի ֆինանսավորման արդիական բանաձևի մշակում և գործարկում*

2025 թվականի սեպտեմբերի 11-ի «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՕ-285-Ն օրենքի 39-րդ հոդվածով սահմանվել են իրավական հիմքեր, մասնավորապես, բուհերին պետական բյուջեից աջակցության տրամադրման նոր ֆինանսավորման ձևեր.

- ինստիտուցիոնալ ֆինանսավորում,
- կրթաթոշակների տրամադրում,
-դրամաշնորհային ֆինանսավորում,
- թիրախային ֆինանսավորում:

Միաժամանակ հիմք ընդունելով Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ, 9-րդ և 15-րդ կետերը՝ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկում համապատասխան վերջնաժամկետով ներառվել են՝ «Պետության կողմից ուսանողներին տրամադրվող կրթաթոշակների տրամադրման կարգը հաստատելու մասին» և «Հանրային բուհի ինստիտուցիոնալ ֆինանսավորման կարգը, ներառյալ կատարողականի արդյունքային ցուցանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը:

- *Բարձրագույն ուսումնական հաստատությունների առաջընթացը գնահատող կատարողականի արդյունքային ցուցանիշների (ԿԱՑ) համակարգի և դրանց արդյունքով ֆինանսավորման կշիռներ սահմանելու մեխանիզմի մշակում՝ ելնելով պետության ռազմավարական առաջնահերթություններից:*

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի նոյեմբերի 23-ի N 79-Լ հրամանով հաստատվել են բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության՝ կատարողականի արդյունքային ցուցանիշները (KPI) 7 ուղղություններով՝ (Կրթական ծրագրեր /Կրթության կազմակերպում, Գիտահետազոտական/ստեղծագործական աշխատանք, Մարդկային ռեսուրսների զարգացում և առաջխաղացում (մասնագիտական առաջընթաց), Կառավարում, ներքին միջավայր և ենթակառուցվածքներ, ԲՈՒՀ աշխատաշուկա համագործակցություն, Համագործակցություն կրթական հաստատությունների միջև, Միջազգայնացում) և ծրագրային արդյունքներով ֆինանսավորման մեխանիզմները, դրանց կիրառման մեթոդական ուղեցույցը, որը կարող է վերանայվել «Էրազմուս+» շրջանակում Երևանի պետական համալսարանի համակարգմամբ իրականացվող «Հայաստանում ներառական, թվային ու կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության պատշաճ կառավարման և որակի գործունեության առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) ազգային շրջանակի ստեղծում» (KPI4HE) ծրագրի արդյունքում: Ծրագիրը նպատակ ունի բարելավելու բարձրագույն կրթության համակարգի կառավարումն ու համալսարանների ռազմավարական պլանավորումը, որոնք նպաստելու են որակյալ ու ներառական, թվային ու կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթությանը Հայաստանում՝ բարձրագույն կրթության գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի (ԳԱՑԱՇ) մշակման և ներդրման, ինստիտուցիոնալ հետազոտությունների կառուցակարգերի զարգացման ու պլանավորման ծառայությունների գործարկման և հաստատությունների հավատարմագրման պետական չափանիշների վերանայման միջոցներով՝ համաձայն ԳԱՑԱՇ-ի:

Ծրագրում՝ բարձրագույն կրթության ինստիտուցիոնալ վարչակազմի, որոշումներ կայացնողների, դասավանդողների ու հետազոտողների կարողությունների զարգացումն է՝ ԳԱՑԱՇ-ին ինտեգրելու կայուն զարգացման նպատակներին համապատասխան՝ որպես բարձրագույն կրթության կառավարման և համալսարանական կառավարման պրակտիկայի, ռազմավարական պլանավորման, կառավարման և որակի ապահովման գործիք:

- *Բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթության կազմակերպման և կառավարման էլեկտրոնային հարթակի մշակում և ներդրում*

Երևանի պետական համալսարան - ներդրված է հետևյալ էլեկտրոնային գործիքները՝ e-request.ysu.am դիմումների ընդունման, registrar.ysu.am ուսանողների կառավարման էլեկտրոնային հարթակ, intranet.ysu.am գիտական արդյունքների հավաքագրման հարթակ, e-learning.ysu.am ուսուցման կառավարման հարթակ, SuperVision դասապրոցեսի կառավարման հարթակ:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան - ներդրված է կրթության կազմակերպման և կառավարման ամբողջությամբ թվայնացված էլեկտրոնային համակարգ՝ ums.asue.am, որն իրենից ներկայացնում է էլեկտրոնային դեկանատի հայեցակարգ, ինչը հնարավորություն է տալիս ավտոմատացնել բուհի գործունեության բոլոր ուղղությունները՝ ապահովելով տեղեկատվական միասնական բազա: Մասնավորապես, Ums համակարգում ներկայում ներառված են համալսարանի 7350 ուսանողի ամբողջական տվյալներ: Դրանով են ձևավորվում նաև դասացուցակները: Ums համակարգում են գրանցված նաև Համալսարանի և Գյումրու մասնաճյուղի ակադեմիական, ուսումնաօժանդակ ու վարչական կազմի 762 ներկայացուցիչ: Համակարգը հնարավորություն է ընձեռում վարելու և գեներացնելու ուսումնական գործընթացին, ուսանողների ուսումնառության արդյունքներին, հաճախումներին, ամփոփիչ ատեստավորմանը, միջին որակական գնահատականին (փաստացի, կիսամյակային, տարեկան և կուտակային), շարժունությանն առնչվող 31 առանձնացված վիճակագրական հաշվետվություններ: Ներդրված է նաև փաստաթղթերի և հանձնարարությունների էլեկտրոնային կառավարման Mulberry համակարգը:

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան – Կրթության կազմակերպման և կառավարման էլեկտրոնային հարթակը ներդրվել է 2023թ: Շարունակվում են հարթակի ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնման աշխատանքները:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան - Կրթության կազմակերպման համար գործում է «Ուսանող» էլեկտրոնային համակարգը, որը սակայն կատարելագործման կարիք ունի: Ներկայումս բուհում մշակվում է նոր էլեկտրոնային հարթակ, որը միտված է կրթության արդյունավետության բարձրացման խթանմանը:

Հայաստանի ազգային ագրարային համալսարան - կրթության կազմակերպման համար ներդրված է elearning.anau.am, koha.anau.am հարթակները: Ներքին և արտաքին փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է Mulberry համակարգով: Ուսումնական գործ ընթացի կառավարումը իրականացվում է https://ums.anau.am/login համակարգով, որտեղ լուսաբանվում են բոլոր միջոցառումները, հայտարարությունները և տեղեկատվությունը, որը անհրաժեշտ է հասարակությանը համալսարանի գործունեության

մասին տեղեկանալու համար: Յուրաքանչյուր օրացուցային տարվա ավարտին ռեկտորի հաշվետվությունները հրապարակվում են https://anau.am/documents/reports/ կայքում՝ հոգաբարձուների խորհրդի հաստատումից հետո:

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան – գործում է ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգ, որի շնորհիվ ավտոմատացվել են դասախոսների բեռնվածության բաշխման գործընթացները, ուսանողների ուսումնառության անհատական հետագիծը: Առկա են ուսանողների առաջադիմության գրանցման միայն էլեկտրոնային տեղեկագրերը՝ այն ուսանողների տվյալների, հետագծի ամբողջական բազա է՝ իր կառավարման բոլոր մոդուլներով:

Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան - կիրառվում են հետևյալ երկու էլեկտրոնային հարթակներ՝ elearning.brusov.am և credit.brusov.am, ինչպես նաև բուհում ներդրված է Mulberry 2.0 համակարգը:

ՀՀ պետական կառավարման ակադեմիա - ներդրված է բուհի էլեկտրոնային կառավարման EBUH համակարգը:

Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան – կրթության կազմակերպման և կառավարման էլեկտրոնային հարթակը (egov.ysmu.am) մշակվել և ներդրվել է 2023թ: Կրթական ծրագրի և կրթության կառավարման մեխանիզմների զարգացմանը զուգընթաց նախատեսվում է էլեկտրոնային համալսարանի պարբերական զարգացման ապահովում:

Համալսարանական կայքի /ysmu.am/ միջոցով ապահովվում է համալսարանի բոլոր ստորաբաժանումների գործունեության, կրթական ծրագրերի ուսումնական գործընթացի կազմակերպման, ինչպես նաև դրանց գնահատման և հաշվետվողականության վերաբերյալ տեղեկատվությունը:

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ- կրթության կազմակերպման գործընթացում կիրառվում է Google Classroom հարթակը՝ որպես ուսուցման թվայնացման գործիք: Մշակվել և ներդրվել է «Կրեդիտային համակարգ» ծրագրային փաթեթը, որը հանդիսանում է կրթական գործընթացի էլեկտրոնային կառավարման և վերահսկման հարթակ:

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա – գործում է ՀԳՊԱ ուսանողների վարման էլեկտրոնային ծրագիրը:

DeSIRe ծրագրի իրականացումից հետո կգործի նաև կրթության կազմակերպման էլեկտրոնային հարթակ:

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան - շահագործում է ուսանողների ակադեմիական տվյալների էլեկտրոնային բազա, շրջանավարտների զբաղվածության և պրոֆեսորադասախոսական կազմի վերաբերյալ տվյալների բազա:

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան –կրթության կազմակերպման և կառավարման նպատակով մշակվել և ներդրվել է էլեկտրոնային հարթակ՝ ուսումնական բազա: Բուհում առկա վերը թվարկված էլեկտրոնային համակարգերը թույլ են տալիս արդյունավետ իրականացնել կրթության կազմակերպման և կառավարման գործընթացները, որի շրջանակներում իրականացվում է բուհի ինստիտուցիոնալ տվյալների հավաքագրում, վերլուծություն, արդյունքների հրապարակում:

Գավառի պետական համալսարան - մշակվել և գործարկվել են ստուգարքների և քննություն ների էլեկտրոնային տեղեկագրերը, որոնց միջոցով դասընթացների ավարտին առկա և հեռակա բաժինների ուսանողների գնահատումն իրականացվում է էլեկտրոնային եղանակով:
Հյուսիսային համալսարան- «Ebuh.am» էլեկտրոնային կառավարման համակարգի շնորհիվ համալսարանի ուսումնական գործընթացը, փաստաթղթաշրջանառությունը, ուսումնական գործընթացի թափանցիկությունը դարձել է էլ ավելի արագ և օպերատիվ:
«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան - մշակվել և ներդրվել է էլեկտրոնային հարթակ՝ ուսանողների միջավայրից բավարարվածության և ուսուցման որակի վերաբերյալ առցանց թեստավորում և հարցումներ անցկացնելու համար: Մշակվում է էլեկտրոնային հարթակ, որը թույլ կտա վերափոխել հիմնական և կրթության կառավարման գործընթացները՝ օգտագործելով թվային տեխնոլոգիաներ:
Այս հարթակը կրթական գործընթացում կկիրառի ժամանակակից տեխնոլոգիաներ և կստեղծի նոր խելացի ուսումնական միջավայր, այն է՝ ուսումնական գործընթացի կառավարման, ուսանողների ակադեմիական արդյունքների հավաքագրման և վերլուծության, տվյալների հավաքագրման և պահպանման, մանկավարժական պրակտիկայի սպասարկման (դասընթացների, դասախոսությունների, թեստային ձևով առաջադրանքների խմբագիր, վիդեո կոնֆերանսներ կազմակերպելու ունակություն, ուսանողների և ուսուցիչների միջև երկկողմանի հաղորդակցություն և այլն), ուսանողական թվային պորտֆելիոյի, բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի առցանց դասընթացների սպասարկման ծառայություններ:
Ավանդական բժշկության համալսարան - գործում է կրթության կազմակերպման և կառավարման էլեկտրոնային միասնական համակարգ: 2019թ. ներդրված է ներհամալսարանական կրթական համակարգի կառավարման էլեկտրոնային հարթակ: 2024 թվականին ԱԲՀ-ն միացել է բուհերի կառավարման տեղեկատվական համակարգին:
Հայաստանի ամերիկյան համալսարան- գործում է կրթության կազմակերպման և կառավարման հետևյալ էլեկտրոնային համակարգերը՝
https://policies.aua.am/
https://aua.am/strategic-planning/
https://aua.am/wp-content/uploads/2025/06/AUA-Strategic-Plan_abridged_May-2025.modified.pdf
Ներքին համակարգեր՝ SONIS Jenzabar, 1C, Intranet, Moodle:
Եվրասիա միջազգային համալսարան– Համալսարանում «Ebuh.am» բուհերի ուսումնական գործընթացի էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման աշխատանքները գտնվում են ավարտական փուլում, համակարգի բազմաթիվ գործիքներ արդեն իսկ շահագործվում են:

Ընդհանուր առմամբ, կրթության կազմակերպման և կառավարման էլեկտրոնային հարթակ ներդրված են գործող բուհերի առնվազն 60%-ում:

- *Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ԿԿՏՀ) ամբողջականացում և գործարկում*

ԿԿՏՀ ամբողջականացված հարթակը գործում է: Միաժամանակ 2025 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում միջոցներ են ձեռնարկվել 2025/2026 ուսումնական տարում ՀՀ

բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների տվյալները EMIS համակարգում թարմացնելու ուղղությամբ: Մասնավորապես, բարձրագույն ուսումնական հաստատությունները մուտքագրել են 1-ին կուրս ընդունված ուսանողների տվյալները և համապատասխան փոփոխություններ են կատարել այլ կուրսերի ուսանողների կարգավիճակների և շարժունության էջերում: 2025 թվականի տարեվերջի դրությամբ հարթակում ներառված են եղել շուրջ 80 623 ուսանողների/շրջանավարտների անձնական տվյալներ: Ընթացքում է թվային ավարտական փաստաթղթերի ստեղծման գործընթացը, որով պլանավորվում է 2025/2026 ուսումնական տարվա ավարտին վերջնականացնել թվայնացման աշխատանքները:

Ներկայումս ԿԿՏՀ-ում գրանցված են ՀՀ-ում գործող նախադպրոցական, հանրակրթական, նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական և հետբուհական հիմնական կրթական ծրագրեր իրականացնող բոլոր ուսումնական հաստատությունները՝ անկախ կազմակերպական-իրավական ձևից և ենթակայությունից:

Միաժամանակ աշխատանքներ են տարվում ներկայումս գործող ԿԿՏՀ հարթակի լավարկման ուղղությամբ: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի օգոստոսի 17-ի «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի վարման կարգը սահմանելու և կրթության ոլորտի պետական վարչական ռեգիստրը ներդնելու մասին» N 65-Ն հրամանի ընդունումից առ այսօր, ԿԿՏՀ-ում հավաքագրվող և պահպանվող որոշակի ծավալով տեղեկատվություն չի ունեցել գործառնական նշանակություն ու պահանջարկ: Ելնելով վերոգրյալից, հրամանի հավելվածում կատարվել է փոփոխություն՝ ուսումնական հաստատությունների կողմից տրամադրվող տեղեկատվության ծավալը կրճատելու նպատակով: Փոփոխությունները հաստատվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2025 թվականի նոյեմբերի 4-ի N 79-Ն հրամանով:

- *Բուհերում պետական աջակցությամբ անձեռնմխելի դրամագլուխների ձևավորում՝ որպես տվյալ մշակույթի ներդրման մեկնարկ*

Այս միջոցառման նպատակն է բուհերի համար ստեղծել ֆինանսական միջոցների լրացուցիչ աղբյուրներ, ֆինանսավորման ձևերի բազմազանեցմամբ՝ հավելյալ ֆինանսավորման հնարավորություններ ստեղծել որակյալ կրթության ապահովելու համար: Միաժամանակ, անձեռնմխելի դրամագլուխը դիտարկվում է որպես ֆինանսական կայունության բարձիկ՝ անբարենպաստ ֆինանսական ժամանակահատվածներին դիմագրավելու, ինչպես նաև ազատ ֆինանսական միջոց՝ համալսարանների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման տարբեր ծրագրեր ֆինանսավորելու կարողունակությունը բարձր պահելու համար:

«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքում, որպես իրավական հենք, ամրագրված են անձեռնմխելի դրամագլուխների ձևավորմանն առնչվող դրույթները (Հոդված 38)՝ մասնավորապես.

«5. Հանրային բուհերը և հանրային գիտական կազմակերպությունները հաշվետու տարվա գործունեության արդյունքներով ստացված շահույթի առնվազն 10 տոկոսը ուղղում են անձեռնմխելի կապիտալի համալրմանը:

6. Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ բուհի կամ գիտական կազմակերպության անձեռնմխելի կապիտալի գումարները կարող են ներդրվել պետական պարտատոմսերում

կամ առևտրային բանկերում որպես ավանդ կամ համապատասխան ներդրումային ռազմավարության դեպքում՝ այլ տեղերում: Ներդրումներից ստացված եկամուտը բուհը կարող է օգտագործել իր ռազմավարական զարգացման ծրագրի իրականացման կամ կանոնադրական նպատակների համար:

7. Հանրային բուհերի ձևավորած անձեռնմխելի կապիտալի համալրմանը կարող է մասնակցություն ունենալ նաև պետությունը»:

Բարձրագույն ուսումնական հաստատությունները օրենքով և կանոնադրությամբ իրենց ֆինանսական միջոցները տնօրինելու, դրանց օգտագործման ուղղությունները ինքնուրույն որոշելու իրավասությունից ելնելով՝ հնարավորություն ունեն օրենսդրությամբ սահմանված կարգով կառավարել իրենց ֆինանսական միջոցների օգտագործումը, ստացված ժամանակավոր ազատ միջոցները, որպես անձեռնմխելի գումար, ներդնել առևտրային բանկերում (ավանդ՝ ազատ տնօրինման հնարավորությամբ) կամ պետական պարտատոմսեր ձեռք բերել՝ ստացված եկամուտներն օգտագործելով կանոնադրությամբ նախատեսված նպատակների համար:

Անհրաժեշտ ծավալով անձեռնմխելի դրամագլուխների ձևավորումը որպես տվյալ մշակույթի ներդրման մեկնարկ ամրագրվել է Օրենքով՝ որպես բուհերի լիցենզավորման պարտադիր պայման (14-րդ հոդածի 10-րդ մասի 4-րդ կետ):

- *Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (այդ թվում՝ գերատեսչական) խոշորացում՝ ըստ ուղղությունների (այդ թվում՝ գիտահետազոտական ինստիտուտների հետ միավորում), հաշվի առնելով նաև մարզերի զարգացման ուղղությունները*

Ներկայում ՀՀ-ում գործող պետական բուհերի թիվը 23-ից կրճատվել է 21-ի, քանի որ վերակազմակերպվել են ՀՀ ՆԳՆ և ՀՀ ՊՆ ենթակայության տակ գործող պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները: ՀՀ պետական բուհերի խոշորացման և գիտահետազոտական կազմակերպությունների հետ միավորման գործընթացի շրջանակներում ձևավորվել են աշխատանքային խմբեր՝ տեխնոլոգիական, կրթական, արվեստի, սպայական, դասական, բժշկական ուղղություն ներով՝ յուրաքանչյուր ուղղությամբ հայեցակարգերի մշակման նպատակով: Առանձին աշխատանքային խումբ է ձևավորվել նաև մարզային բուհերի մասնակցությամբ: Աշխատանքային խմբերում ներառվել են նաև շահառու կազմակերպությունների, ինչպես նաև ոլորտում գործունեություն ծավալող այլ կազմակերպություն ների ներկայացուցիչներին:

Աշխատանքային խմբերում քննարկվում են խոշորացման գործընթացին, ինչպես նաև կլաստերների կառուցվածքին և կառավարման մոդելին վերաբերող հարցերը՝ հաշվի առնելով շահագրգիռ բուհերի և կազմակերպությունների առաջարկները, մտահոգությունները և դիտարկումները:

Աշխատանքային խմբերի ձևավորումը նպատակ է հետապնդում համապատասխան ոլորտային մասնագետների մասնակցային ներգրավվմամբ համակարգել վերոնշյալ ուղղվածություններով ձևավորվելիք կլաստերների աշխատանքները, հավաքագրել մասնագիտական կարծիքներ, առաջարկներ պետական բուհերի խոշորացման և գիտահետազոտական կազմակերպությունների հետ ինտեգրման գործընթացի վերաբերյալ՝ դրանք հետագայում իմպլեմենտացման փուլ բերելու համար:

Աշխատանքային խմբերի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու նպատակով առավել մեծ խմբերը բաժանվել են ենթախմբերի:

Որպես խոշորացման գործընթացի բովանդակային աջակցություն՝ պայմանագրեր են կնքվում միջազգային հեղինակավոր բուհերի հետ, որոնք աջակցելու են խոշորացման գործընթացին՝ համապատասխան բովանդակությունների վերանայմամբ և կառավարման գործընթացներ ունեցող անձանց վերապատրաստմամբ, այդ նպատակով պայմանագիր է կնքվել.

Մյունխենի տեխնիկական համալսարանի կողմից մշակվել և ներկայացվել է տեխնոլոգիական կլաստերի ուղղությամբ Ակադեմիական քաղաքի կառավարման շրջանակի, նորարարությունների կառավարման մոդելի, բուհերի և հետազոտական ինստիտուտների խոշորացման հայեցակարգը,

Կրթական կլաստերի ուղղությամբ պայմանագիր է ստորագրվել Լոնդոնի համալսարանական քոլեջի կրթական ինստիտուտի (UCL IoE) դուստր կազմակերպություն «ՅուՍիԷլ Քընսալթանթս Լիմիթիդ»-ի հետ, որը սկսել է խորհրդատվական աշխատանքները Ակադեմիական քաղաքի կրթական կլաստերի ձևավորման ուղղությամբ,

Արվեստների կլաստերի ուղղությամբ վերջնականացվել է 2023 թվականի նոյեմբերին Լոնդոնի արվեստների համալսարանի հետ արդեն իսկ համագործակցության հիման վրա ձևավորված պայմանագիրը: 2025թ. մայիսին արվեստների կլաստերի ուղղությամբ աշխատանքներին հավելվել է Շոտլանդիայի թագավորական կոնսերվատորիայի հետ (որը կատարողական արվեստի ոլորտում QS World Rankings 2025 վարկանիշավորման ցանկի համաձայն աշխարհի տասը լավագույն կրթական հաստատություններից մեկն է) կնքված մտադրությունների նամակը:

Նախատեսվում է, որ 2027 թվականից պետական ֆինանսավորում և աջակցություն կտրամադրվի միայն խոշորացված բուհերին և դրանց հետ միավորված գիտական կազմակերպություններին:

- *Ակադեմիական քաղաքի ստեղծում՝ որպես որակյալ բարձրագույն կրթության և հետազոտության համար արդիական կրթական միջավայրի ապահովման կամպուսային կլաստերների համախումբ*

Մեկնարկել են Ակադեմիական քաղաքի տարածքի մաքրման աշխատանքները, որի առաջին փուլով մաքրվել է 2.7 հա տարածք՝ ազատելով տարածքը շուրջ 10 000 խմ աղբից, աշխատանքի հաջորդ փուլերը կշարունակվեն արդեն 2026թ:

Ակադեմիական քաղաքի տարածքում մեկնարկել են նաև հնագույն բնակատեղիի և դամբարանադաշտերի պեղումները, որոնց առաջին արդյունքները վկայում են, որ Ակադեմիական քաղաքում կարող է ձևավորվել նաև պատմամշակութային ժառանգության եզակի միջավայր:

2025թ. վերջնականացվել են նաև տարածքում գտնվող բարձրավոլտ էլեկտրասյուների տեղափոխության, ինչպես նաև տարածքին մոտեցող ենթակառուցվածքների նախագծման աշխատանքների տեխնիկական պահանջները, որոնց հիման վրա 2026 թվականից կմեկնարկեն դրանց նախագծման աշխատանքները:

Միաժամանակ, ներգրավված հեղինակավոր միջազգային գործընկերների, ինչպես նաև մասնագիտացված տեղական գործընկերոջ ներգրավմամբ ամբողջականացվել է Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի փաթեթը՝ ՀՀ օրենսդրության համաձայն,

որը ներկայացվել է հետագա հաստատման: Հատակագծի փաթեթի վերջնականացմանը նախորդել են տարվա ընթացքում կատարված հետևյալ աշխատանքները.

- ՋիԷմՓի գերմանական կազմակերպության և տեղական գործընկեր կազմակերպության հետ կնքված պայմանագրի շրջանակում իրականացվել է Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի սխեմատիկ նախագծումը,
- Իրականացվել է Ակադեմիական քաղաքի քաղաքաշինական զարգացման ռազմավարական շրջանակի մշակումը՝ գերմանական RSUP ընկերության հետ կնքված պայմանագրով, որը ներառում է սոցիալ-տնտեսական, քաղաքաշինական զարգացման մոդելները, գույքերի կառավարման առաջարկները, շահառուների հետ հաղորդակցման ռազմավարությունը և ծրագրի ռիսկերի կառավարման սխեման,
- Գլխավոր հատակագծի մշակման շրջանակներում իրականացվել է նաև Ակադեմիական քաղաքի տրանսպորտային շարժունակության նախագծի մշակում՝ իտալական Սիստեմատիկա ընկերության հետ կնքված պայմանագրի շրջանակում, որը ներառում է նաև Ակադեմիական քաղաքի տրանսպորտային ներքին ցանցի և արտաքին տրանսպորտային համակարգերի հետ կապակցվածության ուսումնասիրությունն ու հայեցակարգի մշակումը:

Ակադեմիական քաղաքի գիտակրթական և տեխնոլոգիական բաղադրիչի շրջանակում շարունակվել է համագործակցությունը առաջատար միջազգային բուհերի հետ, մասնավորապես, Մյունխենի տեխնիկական համալսարանի, Լոնդոնի համալսարանական քոլեջի կրթական ինստիտուտի (UCL IoE) դուստր կազմակերպություն «ՅուՍիԷլ Քընսալթանթս Լիմիթիդ»-ի հետ, Լոնդոնի արվեստների համալսարանի հետ, Շոտլանդիայի թագավորական կոնսերվատորիայի հետ (կատարողական արվեստի ոլորտում QS World Rankings 2025 վարկանիշավորման ցանկի համաձայն աշխարհի տասը լավագույն կրթական հաստատություններից մեկն է):

Այս աշխատանքների համախումբը հնարավորություն է տվել վերանայել և հստակեցնել ծրագրի իրականացման փուլայնությունն ու ռազմավարությունը: Ըստ այդմ՝ մշակվել և ՀՀ կառավարության 2026 թվականի փետրվարի 26-ի հմ. 228-Լ որոշմամբ հաստատվել է «Ակադեմիական քաղաք» ծրագրի վերանայված հայեցակարգը, որով հստակեցվում են ծրագրի նկարագիրը և սկզբունքները, ինչպես նաև իրականացման փուլերն ու ժամանակացույցը:

Հայեցակարգով Տաղանդների զարգացման ծրագիրը ներառվել է որպես Ակադեմիական քաղաք ծրագրի բաղադրիչ՝ նպատակ ունենալով հայտնաբերել, աջակցել և զարգացնել բացառիկ կարողություններով երեխաներին ու երիտասարդներին՝ ապահովելով նրանց հմտություններին, հետաքրքրություններին և կարիքներին համապատասխան անհրաժեշտ ռեսուրսների, կրթական հնարավորությունների և տեխնոլոգիական միջոցների հասանելիությունը:

Նպատակ ունենալով խթանել Ակադեմիական քաղաք ծրագրի բուն իրականացման և ենթակառուցվածքների շինարարության գնի հաշվարկման ներդրումային տարբեր ձևաչափերով՝ ծրագրի ֆինանսավորման վերաբերյալ լայնածավալ ուսումնասիրություն իրականացնելու համար, ներգրավվել է միջազգային Էրնսթ ընդ Յանգ (Ernst&Young) կազմակերպությունը:

Ակադեմիական քաղաք ծրագրի շուրջ հանրային իրազեկումը բարձրացնելու նպատակով 2025 թվականի հոկտեմբերին «Ակադեմիական քաղաք» հիմնադրամի կողմից իրականացվել է լայնածավալ տեղեկատվական արշավ Հայաստանի 10 մարզերի 14 քաղաքներում, որոնց մասնակիցների քանակը եղել է ավելի քան 17.000 մարդ, միևնույն ժամանակ տեղեկատվական արշավի նյութերն ունեցել են մոտ 1 մլն դիտում սոցիալական հարթակներում:

Երևանում 2025 թվականի հոկտեմբերի 20-21-ին տեղի է ունեցել «Ակադեմիական քաղաք Հայաստան. գիտելիքի միջազգային ֆորումը»: Այն նպատակ ուներ միավորելու բարձրագույն կրթության և հետազոտությունների ոլորտների քաղաքականություն մշակող մարմիններին, միջազգային կազմակերպություններին, ակադեմիական առաջնորդներին և փորձագետներին՝ քննարկելու բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում զարգացման գլոբալ միտումները և փոխակերպումները: Ֆորումին մասնակցել են շուրջ 1000 մասնակիցներ, իսկ դրա վերաբերյալ նյութերն ունեցել են շուրջ 1 մլն դիտում սոցիալական ցանցերում:

Ընդհանուր առմամբ, բուհական համակարգն արդեն իսկ նախապատրաստվում է դեպի Ակադեմիական քաղաք ճանապարհին՝ իրականացնելով ներքին ինստիտուցիոնալ բարեփոխումներ, ակտիվացնելով միջազգային համագործակցությունն ու ճանաչումը: Մասնավորապես, միջազգային հավատարմագրում են ստացել՝ 2025թ. 4 բուհ, 2024 և 2023թթ.՝ 1-ական բուհեր:

- *Բարձրագույն ուսումնական հաստատությունների համալրում որակյալ կրթության կազմակերպման և հասանելիության համար անհրաժեշտ ենթակառուցվածքներով*

Բարձրագույն ուսումնական հաստատությունների որակյալ կրթության կազմակերպման և հասանելիության համար անհրաժեշտ ենթակառուցվածքներով համալրման գործընթացը սերտորեն կապված է բարձրագույն ուսումնական հաստատությունների խոշորացման և «Ակադեմիական քաղաք» ծրագրի հետ:

Ակադեմիական քաղաքում լինելու են համապատասխան ենթակառուցվածքներ, մարզական, հանգստի, գրադարանային, հանրակացարանային, տարբեր մարզաձևերի համար նախատեսված դահլիճներ՝ բուհական սպորտային ակումբների գործունեության, առևտրային և սննդի կետեր և այլ միջավայրերը, որոնք մրցունակ հետազոտությունների և բարձրագույն կրթական համակարգի նախապայման են:

Ներկայումս ՀՀ բարձրագույն ուսումնական 55 հաստատություններից ընդամենը 11-ը ունեն հանրակացարաններ և «Զեյթուն» ուսանողական ավան» հիմնադրամը: Սակայն, անկախ ակադեմիական քաղաք տեղափոխվելու տեսլականից, մի շարք բարձրագույն ուսումնական հաստատություններ արդիականացնում են իրենց առկա ենթակառուցվածքները, մասնավորապես՝

Երևանի պետական համալսարանը (200 անձի համար նախատեսված հանրակացարան), Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը (55-60 տեղանոց հանրակացարան, որտեղ բնակվում են Արցախից բռնի տեղահանված ուսանողներ), Հայաստանի ազգային ագրարային համալսարան, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանը, Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը (ՀՀ և օտարերկրյա քաղաքացի ուսանողների համար), Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, Գավառի պետական

համալսարանը, Ավանդական բժշկության համալսարանը (գործընկերային պայմանագրային հիմունքներով), Եվրասիա միջազգային համալսարանը (հյուրատուն (հանրակացարան)):

Միևնույն ժամանակ՝ հաշվի առնելով խնդրի կարևորությունը, «Ակադեմիական քաղաք» ծրագրի (հաստատված է ՀՀ կառավարության 2026 թվականի փետրվարի 26-ի հմ. 228-Լ որոշմամբ) 1.1-ին փուլում նախատեսվում է Ակադեմիական քաղաքի գործարկման մեկնարկը որի շրջանակում առաջնահերթություն է տրվում ուսանողական կացարանների կառուցմանը, որը կսպասարկի գործող բոլոր բուհերին՝ տրամադրելով ուսանողական կացության համար մատչելի և արժանապատիվ պայմաններ: Այս միջոցառման արդյունքում տարածքը կսկսի աստիճանաբար բնակեցվել և ակտիվորեն օգտագործվել մինչև ակադեմիական նշանակության շինությունների լիարժեք գործարկումը, ինչը կնպաստի տարածքի կենսագործունեության ակտիվացմանը:

Ընդհանուր առմամբ, ներկայումս բուհերի 20%-ից ավելին իրենց ենթակառուցվածքում ունեն հանրակացարան:

Սպորտային համալիրների առկայությունը՝

Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ Ալեք Մանուկյան 1 հասցեում առկա է սպորտային համալիր, որն ունի ֆուտբոլի դահլիճ, բասկետբոլի և վոլեյբոլի դահլիճներ, հրաձգարան և նոր վերանորոգված մարզասրահ), Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, Հայաստանի ազգային ագրարային համալսարան (2 մարզադահլիճ, սեղանի թենիսի 1 դահլիճ, մարզասարքերով կահավորված 1 դահլիճ), Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան (սպրոտային դահլիճներ, հրաձգարան, ինչպես նաև Աղավնաձորում ուսումնամարզական բազա), ՀՀ պետական կառավարման ակադեմիան, Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը (3 մարզադահլիճ, 4-րդը գտնվում է վերանորոգման ընթացքում), Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանը (սպրոտային դահլիճ), Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտը, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը, Գավառի պետական համալսարանը (2 սպորտ դահլիճ՝ համալրված սպորտային գույքով), Գորիսի պետական համալսարանը, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանը (2 մարզադահլիճ), Հայաստանի եվրոպական համալսարանը, «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանը, Եվրասիա միջազգային համալսարանը և Հայ-ռուսական համալսարանը (չափորոշիչներին համապատասխանող մարզադահլիճ), Ավանդական բժշկության համալսարանը՝ 2 մարզադահլիճ:

Ընդհանուր առմամբ, բուհերի շուրջ 50%-ը իրենց ենթակառուցվածքում ունեն սպորտային համալիր:

Ճաշարաններ առկայությունը՝

Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ Աբովյան 52 և 52ա մասնաշենքում առկա է ճաշարան, ԵՊՀ Ալեք Մանուկյան 1 հասցեում՝ թվով 4, իսկ ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի 2 ճաշարանները 2024-25թթ. կձևափոխվեն ուսումնական-գրասենյակային: Վերջին 4 ֆակուլտետներին սպասարկող ճաշարանը կապիտալ կվերանորոգվի և շահագործման կհանձնվի մինչև 2025թ. տարեվերջ), Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը (գործում է արագ սննդի կետ),

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը (ունեն ճաշարաններ): Մի շարք բուհերում, մասնավորապես, ՀՀ պետական կառավարման ակադեմիայում, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական և Հայաստանի ազգային ագրարային համալսարան ներում առկա է, սակայն գործարկելու համար խոչընդոտ է հանդիսանում «Գնումների մասին» օրենքի դրույթներով աշխատելու անհրաժեշտությունը: Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական, Գավառի պետական, Հայաստանի եվրոպական, «Մխիթար Գոշ» Հայ-Ռուսական միջազգային, «Եվրասիա» միջազգային համալսարաններում սպասարկումն իրականացվում է «Artlunch» ընկերության կողմից, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում գործընթացն ընթացքի մեջ է:

Ավանդական բժշկության համալսարանում առկա է ճաշարան նախատեսված 100 հոգու համար, ճաշարան նախատեսվում է նաև նորակառույց մասնաշենքում:

Ընդհանուր առմամբ, բուհերի շուրջ 40%-ը իրենց ենթակառուցվածքում ունեն ճաշարան:

Բարձրագույն ուսումնական հաստատություններն իրենց ենթակառուցվածքում ունեն ուսանողների, այդ թվում՝ օտարերկրյա, սոցիալականացման հաբ, մասնավորապես.

Երևանի պետական համալսարան - սոցիալականացման գործընթացը կատարվում է տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների կողմից,

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան - կազմակերպվում են մշակութային միջոցառումներ, պարբերաբար հանդիպումներ բուհի տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ: Գործընթացը համակարգում է ՀԱՊՀ Օտարերկրյա ուսանողների բաժինը.

Հայաստանի ազգային ագրարային համալսարան - առկա են երկու նորաբաց լսարաններ՝ «Ուսանողների հաջողության կենտրոն», «Գիտելիքի նորարական հաբ»:

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան - գործում է սոցիալականացման հաբ Դասավանդիր Հայաստան (ԴՀ) հիմնադրամի հետ,

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ- գործում է Ուսանողական գիտական-ստեղծագործական ընկերություն,

Գավառի պետական համալսարան - գործում են ուսանողական տարբեր ակումբներ, որտեղ ներգրավված են նաև օտարերկրյա քաղաքացի ուսանողներ, ովքեր բազմաթիվ նախաձեռնություններ և ծրագրեր են իրականացնում): ԳՊՀ-ի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում գործում է մանկավարժահոգեբանական կենտրոն, որն իրականացնում է ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների ներառական կրթության ոլորտի մասնագետների անվճար վերապատրաստման ծրագիր, տրամադրում մասնագիտական, մեթոդական բնույթի խորհրդատվություն, ինչպես նաև ԿԱՊԿՈՒ ուսանողներին, երեխաներին ու նրանց ծնողներին մատուցում է որակյալ մանկավարժահոգեբանական ծառայություններ, համագործակցում է մարզի դպրոցների, նախակրթարանների, արտադպրոցական հաստատությունների և զարգացման կենտրոնների հետ,

Հայաստանի եվրոպական համալսարան – գործում է Դանթե Ալիգերիի կենտրոն, Երիտասարդ կառավարիչների ակումբ, Իրավաբանների և միջազգայնագետների ուսանողական ակումբ,
Ավանդական բժշկության համալսարան - առկա է ուսանողների, այդ թվում օտարերկրյա ժամանակակից, հագեցված հաբ,
Եվրասիա միջազգային համալսարան - առկա են ուսանողական հանգստի գոտիներ, կազմակերպվում են օտարերկրացիների սոցիալականացմանը նպաստող միջոցառումներ: ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակներում «ՓԻ ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության հետ համատեղ համալսարանում գործում է Քաղաքացիական կրթության կենտրոնը:
Ընդհանուր առմամբ, բուհերի շուրջ 15%-ը իրենց ենթակառուցվածքում ունեն ուսանողների, այդ թվում՝ օտարերկրյա, սոցիալականացման հաբ:
Մի շարք բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ այդ թվում՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական, Գորիսի պետական, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական, Հայաստանի Եվրոպական, «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարաններում, ՀՀ պետական կառավարման ակադեմիայում, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ենթակառուցվածքում ունեն գրադարան(ներ):

Մասնավորապես էլեկտրոնային գրադարանային հասանելիություն առկա է.

Երևանի պետական համալսարան- Համալսարանը բաժանորդագրված է մեկ տասնյակից ավելի միջազգային հեղինակավոր հրատարակչությունների էլեկտրոնային հարթակների և հավաքածուների՝ ScienceDirect, Oxford Academic, Brill Humanities & Social Sciences Collection, Cambridge Core, JSTOR, EBSCO, Research4Life և այլն:
Գրադարանը տրամադրում է բազմաթիվ էլեկտրոնային պաշարների (ավելի քան 1,000 ամսագրեր, տասնյակ հազարավոր գրքեր և հոդվածներ) հասանելիություն՝ նպաստելով ուսանողների և դասախոսների գիտահետազոտական կարողությունների բարձրացմանը:
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան- Ներդրված է KOHA գրադարանային համակարգ, որն իրականացնում է գրադարանի հիմնական ֆոնդի թվայնացման, էլեկտրոնային գրադարանի և էլեկտրոնային գրացուցակի ստեղծման աշխատանքներ, ինչպես նաև ընթերցողները հնարավորություն ունեն սպասարկվել առցանց եղանակով:
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան- Համալսարանում գործում է մեկ մասնագիտական գրադարան:
Հայաստանի ազգային ագրարային համալսարան- առկա է գրադարան, 3 ընթերցասրահ, որոնք կահավորված են տեխնիկական անհրաժեշտ միջոցներով, գործում է էլեկտրոնային գրադարանը: Այս պահի դրությամբ ՀԱԱՀ գրադարանն իր ընթերցողներին է տրամադրում 140.000 անուն և ավելի քան 550.000 միավոր մասնագիտական, հասարակական–քաղաքական, գեղարվեստական գրականություն:
Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան- Համալսարանի հիմնական մասնաշենքում գործում է գրադարան՝ իր ընթերցասրահով, որն հագեցած է համակարգչային տեխնիկայով և համացանցի հասանելիությամբ: Առկա է ավելի քան 15 հազար թվային գրականություն: Մյուս մասնաշենքերում գործում են նաև

առարկայական ընթերցասրահներ, որոնք նույնպես տեխնոլոգիապես բավարար հագեցվածություն ունեն:
Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան - Առկա է թվային գրադարան և թվային պահոց, գործում է Ավստրիական գրադարանը:
Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալասարան – Առկա է գրադարան՝ ընթերցասրահով համապատասխան կահավորմամբ և հագեցվածությամբ: Դասագրքեր՝ 38114, ուսումնամեթոդական գրականություն՝ 13584, ուսումնաօժանդակ գրականություն՝ 41990, էլեկտրոնային տեղեկատվական գրականություն՝ 272: Շուտով կսկսվեն նոր գրադարանի շինարարական աշխատանքները: Նոր գրադարանի նախագիծը մշակվել է Նիդրլանդական ճարտարապետական DVDP ընկերության կողմից, ըստ որի նախատեսվում է փակ և բացօթյա սրահներ նորա գույն տեխնոլոգիաներով հագեցած անհատական և խմբային աշխատասենյակներ և այլ արդի հարմարանքներ:
Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա - Բուհում առկա է Koha համակարգի հասանելիություն:
Գավառի պետական համալսարան - Բուհն ունի երկու գրադարաններ և ընթերցասրահ, ուսանող ներն օգտվում են էլեկտրոնային գրադարանի /Library.gsu/ ռեսուրսներից, Learn.gsu էլեկտրոնային ուսուցման համակարգում ներբեռնված ուսումնամեթոդական գրականությունից:
Հյուսիսային համալսարան - Առկա է գրադարան, որը պարբերաբար համալրվում է հայալեզու, օտարալեզու գրականությամբ: Գրադարանը «Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիայի» անդամ է: Գրադարանում առկա են նաև էլեկտրոնային գրքեր:
Ավանդական բժշկության համալսարան - Առկա է, ինչպես նաև անդամակցում ենք էլեկտրոնային գրադարանային ասոցիացիային:
Եվրասիա միջազգային համալսարան - Առկա է: Ուսանողների և հետազոտողների համար ապահովված է նաև տարբեր էլեկտրոնային շտեմարանների հասանելիություն:
Ընդհանուր առմամբ, բուհերի շուրջ 50%-ը իրենց ենթակառուցվածքում ունեն գրադարան:

- *Բարձրագույն ուսումնական հաստատությունների (այդ թվում՝ գիտակրթական կազմակերպությունների հետ համատեղ օգտագործման) լաբորատոր և նորարարական ենթակառուցվածքների ու միջբուհական, միջառարկայական փորձարարական թեմատիկ լաբորատորիաների և գիտակրթական ամբիոնների արդիականացում ու համալրում*

Բարձրագույն ուսումնական հաստատություններում ստեղծվել են նոր լաբորատոր ենթակառուցվածքներ (հիմք ընդունելով բուհերից ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքները)՝
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան - հիմնադրվել են «Միջգիտակարգային հետազոտությունների կենտրոնը», «Սոցիալական ու վարքաբանական հետազոտությունների կենտրոնը» և «Գիտաչափության և միջազգային վարկանիշավորման լաբորատորիան»:
Գորիսի պետական համալսարան-2025թ. փետրվար ամսին բացվել է Փափուկ հմտությունների լաբորատորիան (DeSIRE ծրագրի շրջանակում):
Երևանի պետական համալսարանում առկա են՝

«Գիտական խմբերի կամ լաբորատորիաների ամրապնդման աջակցություն-2023» - թվով 3 լաբորատորիա,
«Գիտական խմբերի կամ լաբորատորիաների ամրապնդման աջակցություն-2024» - թվով 5 լաբորատորիա,
«Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր -2023» -թվով 5 լաբորատորիա,
«Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր -2024» -թվով 5 լաբորատորիա,
«Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր -2025» -թվով 3 լաբորատորիա,
«Գիտահետազոտական կենտրոններ, ինստիտուտներ, լաբորատորիաներ», 2023 -թվով 9,
«Գիտահետազոտական կենտրոններ, ինստիտուտներ, լաբորատորիաներ», 2024 -թվով 9,
«Գիտահետազոտական կենտրոններ, ինստիտուտներ, լաբորատորիաներ», 2025 -թվով 9:
2025թ. առաջին կիսամյակում նորոգվել և կահավորվել է 6 ուսումնական լաբորատորիա:
ԵՊՀ-ում հիմնադրվել է նաև արհեստական բանականության կենտրոնը:
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան – 2025թ. մայիսին ՀԱՊՀ-ի, «Քեյդնս» և «Սիսկո» ընկերությունների համագործակցության արդյունքում և «Արփա» հիմնարկ բարեգործական ընկերության աջակցությամբ համալսարանի «Էլեկտրոնիկա, կենսաբժշկական և չափիչ համակարգեր» ամբիոնում ստեղծվել է ինտեգրալ սխեմաների նախագծման և մոդելավորման ուսումնական ու գիտահետազոտական լաբորատորիան: Լաբորատորիան նախատեսված է ուսումնական ու գիտահետազոտական գործընթացների շրջանակում ժամանակակից ինտեգրալ սխեմաների նախագծում և մոդելավորում իրականացնելու նպատակով:
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան – ստեղծվել են՝
Շինարարական ֆակուլտետում՝ Ջրի մաքրման լաբորատորիա,
Կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետում՝ «Սարքերի ինտերնետ (IoT) լաբորատորիա»,
Քաղաքային տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետում՝ «Տրանսպորտային էկոլոգիայի գիտահետազոտական պրոբլեմային լաբորատորիա»,
Շենքերի տեղեկատվական մոդելավորման (ՇՏՄ-BIM) կենտրոն:
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան – 2025թ. մայիսին ՀԱՊՀ-ի, «Քեյդնս» և «Սիսկո» ընկերություն ների համագործակցության արդյունքում և «Արփա» հիմնարկ բարեգործական ընկերության աջակցությամբ համալսարանի «Էլեկտրոնիկա, կենսաբժշկական և չափիչ համակարգեր» ամբիոնում ստեղծվել է ինտեգրալ սխեմաների նախագծման և մոդելավորման ուսումնական ու գիտահետազոտական լաբորատորիան: Լաբորատորիան նախատեսված է ուսումնական ու գիտահետազոտական գործընթացների շրջանակում ժամանակակից ինտեգրալ սխեմաների նախագծում և մոդելավորում իրականացնելու նպատակով:
Հայաստանի ազգային ագրարային համալսարան – 2025թ. դրությամբ համալսարանում ստեղծված են 48 գիտակրթական և ուսումնափորձնական լաբորատորիաներ, որտեղ իրականացվում են տարբեր կրթական աստիճանի կրթական ծրագրերի լաբորատոր և գործնական պարապմունքները, գործում է միջամբիոնային անասնաբուժական կլինիկա, հունվարի 14-ից Սիսիանի մասնաճյուղի Խելացի գյուղատնտեսության կենտրոնում բացվեց խելացի անասնաշենքը, ինչպես նաև նոր ուսումնական տարուց շահագործվելու է

«Գյուղատնտեսական ռոբոտաշինության և մեխատրոնիկայի ագրարային ճարտարագիտության գերազանցության կենտրոնը»:
Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան- Բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա (ԲՏՃՄ) ոլորտի գերազանցության եզակի կենտրոնի շրջանակում ստեղծված 6 լաբորատորիաները և 2 ենթակառուցվածքային կենտրոններն արդեն գործում են և ակտիվորեն կիրառվում են ուսումնական և հետազոտական գործընթացներում:
Ֆիզիկայի, կենսաբանության, քիմիայի, տեխնոլոգիայի, աշխարհագրության և ՏՏ լաբորատորիաները ամբողջությամբ հագեցած են ժամանակակից սարքավորումներով, տեխնիկայով և անհրաժեշտ ուսումնական գույքով: Կենտրոնի հնարավորությունները լիարժեք օգտագործվում են ուսանողների պրակտիկայի շրջանակում՝ հնարավորություն տալով իրականացնել հետազոտություններ, մշակել և փորձարկել նոր ուսումնամեթոդական նյութեր և առաջարկություններ:
Լաբորատորիաների և կենտրոնների տեխնիկական համալրումը և շարունակական արդիականացումը իրականացվում է «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի հետ համատեղ, Հայաստանի բարձրագույն կրթության Նորարարությունների մրցակցային հիմնադրամի ֆինանսավորմամբ:
Արդյունքում բուհը ոչ միայն ապահովում է ԲՏՃՄ ոլորտի ուսուցման միջազգային չափանիշներին համապատասխան միջավայր, այլև նպաստում է ուսանողների և մասնագետների կայուն զարգացմանը, նորարարության խթանմանը և կրթական որակի բարձրացմանը:
Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան - Համալսարանը համագործակցում է Ռուսաստանի Դաշնության, Չինաստանի, Կորեայի, Ավստրիայի, Գերմանիայի, Իսպանիայի, Իտալիայի, Բելգիայի, Մեծ Բրիտանիայի և այլ երկրների համալսարանների, բարձրագույն դպրոցների, պետական և մասնավոր կառույցների հետ: Բուհն իրականացնում է նաև համատեղ մագիստրոսական, դոկտորական ծրագրեր Ֆրանսիայում գործող 4 համալսարանների, Գերմանիայի Դաշնության Հալլե-Վիթենբերգի Մարտին Լյութերի համալսարանի, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Դալիանի օտար լեզուների համալսարանի հետ «Համեմատական գրականություն», «Քաղաքագիտություն», «Մասնագիտական մանկավարժություն (չինարեն և գրականություն)» մասնագիտություններով:
ՀՀ պետական կառավարման ակադեմիա - Միջազգային համագործակցության և զարգացման կենտրոնի աջակցությամբ SMARTI ծրագրի շրջանակում ստեղծվել ու ֆունկցիոնալ գործարկման փուլում է գտնվում EMI կենտրոնը: Նոր միջազգային ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռնարկատիրական հաբի բացում: Հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնում մշակվում են երկու գիտական թեմաների ռազմավարություններ, որոնք ենթադրում են գիտական սարքավորումների առկայություն:
Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան -Համալսարանում գործում է «ՔՈԲՐԵՅՆ» ուղեղի հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոնը, որը հիմնադրվել է 2022թ: Այն իրականացվել է Համաշխարհային բանկի «Կրթության բարելավում» վարկային ծրագրի Նորարարությունների մրցակցային հիմնադրամի երկրորդ հիմնական շրջափուլի շրջանակներում ստացված «Ուղեղի հիմնարար

հետազոտությունների գիտակրթական կենտրոն» դրամաշնորհի ֆինանսավորմամբ և ԵՄ ՀՈՐԻԶՈՆ 2020 «Քրոնիկ նեյրոդեգեներատիվ հիվանդությունների տրանսլյացիոն հետազոտությունների կենտրոն Հայաստանում. Նեյրոգիտություն՝ հանուն ուղեղի առողջ ծերացման» ՔՈԲՐԵՅՆ, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Նեյրոկենսաբանական գործընթացների վերծանումը նորմայում և ախտաբանության մեջ՝ սաղմից մինչև ծերացող ուղեղ» ծրագրերի աջակցությամբ: Համալսարանի ամբիոններում առկա են ուսումնագիտական գործընթացն ապահովող այլ լաբորատորիաներ և 2 մեծ սիմուլյացիոն կենտրոն:

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ – իրականացվում են աշխատանքներ վերստեղծվող նկարահանումների կանաչ տաղավարի նորոգման և տեխնիկական վերազինման համար, ինչպես նաև գունաշփման տաղավար ստեղծելու և այն համապատասխան տեխնիկայով ապահովելու համար:

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա - ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղում ՀԲԸՄ Հայաստանի «Կատապուլտ» ստեղծարար աքսելերացիոն ծրագրի շրջանակներում բացվել է Ֆաբ Լաբ թվային արտադրության լաբորատորիան, որը ստեղծում է արվեստի ոլորտում նորարարության և ստեղծարարության հարթակ և հիմնված է երեք կրթական ծրագրերի վրա՝

-Ֆաբ Ակադեմիա – MIT-ի (Massachusetts Institute of Technology) մշակած ծրագիր՝ ստեղծելու գրեթե ամեն ինչ թվային արտադրության գործիքներով,

-Ֆաբրիկադեմիա – հետազոտական կրթական ծրագիր՝ թվային արտադրության, տեքստիլի և կենսաբանության խաչմերուկում,

-Ֆաբ Ուսումնական Ակադեմիա – մանկավարժների վերապատրաստում՝ թվային գործիքներն ուսումնական պլանում ինտեգրելու համար:

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ – Մեդիալաբորատորիա, Կինեզիոլաբ ուսումնաառողջարարական լաբորատորիա, սպորտային տուրիզմի լաբորատորիա, Ինտերակտիվ լսարան:

«Սպորտ ԿԱԲ» գիտահետազոտական կենտրոնը իրականացնում է համատեղ հետազոտություններ մարզական ֆեդերացիաների, կլինիկաների, ՀՖԿՍՊԻ տարբեր մասնագիտական ամբիոնների, ինչպես նաև այլ բուհերի (ԵՊԲՀ, ԵԲՀ, ԵՀՀ) հետ:

Գավառի պետական համալսարան - «Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահպանություն)» կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար» եռամյա ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել և ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում տեղակայվել է միջհամալսարանական կրթական և գիտահետազոտական եզակի լաբորատորիա (ERLEP), և ծրագրի գործընկեր կազմակերպությունները, այդ թվում՝ Գավառի պետական համալսարանը կնքել են հետազոտական ենթակառուցվածքների համատեղ օգտագործման մասին համաձայնագրեր, համաձայն որոնց ԳԿՄԿ-ն իր գործընկեր բուհերին տրամադրում է իրավունք՝ կատարելու հետազոտություններ:

Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան- բուհի կողմից բազային ֆինանսավորման շրջանակում գործող «Նանո- և միկրոտեխնիկայի նյութերի և կառուցվածքների մեխանիկայի պրոբլեմային լաբորատորիա»,

ՇՊՀ-ի ներբուհական դրամաշնորհի շրջանակում գործող «Մաթեմատիկայի և ֆիզիկայի շարունակական կրթության պրոբլեմային գիտամանկավարժական լաբորատորիա»,
Արդիական սարքավորումներով կահավորված կենսատեխնոլոգիայի լաբորատորիա, որը հաշվետու ժամանակահատվածում համագործակցել է Գյումրու ուսումնական հաստատությունների, Գյումրու սելեկցիոն կայանի հետ:
Վերոնշյալ լաբորատորիաներն իրականացնում են նորարար գիտահետազոտական գործունեություն:
Գորիսի պետական համալսարան – Համալսարանում առկա են. «Քաղաքացիական կրթություն», «Կայուն ճարտարապետական ժառանգություն», «Անգլերենը որպես դասավանդման լեզու» և «Կանաչ կրթություն» կենտրոնները:
Հայաստանի եվրոպական համալսարան - բուհում գործում են 2 կլինիկաներ՝ Հոգեբանության ամբիոնին և Իրավագիտության ամբիոնին կից:
«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան - Սիմուլյացիոն ուսուցումը մասնագիտական ուսուցման, պրակտիկայի վրա հիմնված վերապատրաստման և հիվանդների հետ աշխատելու շրջանավարտների պատրաստակամության օբյեկտիվ գնահատման համակարգում ինտեգրելու նպատակով ստեղծվել է սիմուլյացիոն կենտրոն:
Ավանդական բժշկության համալսարան- գործում են համագործակցության պայմանագրեր, ընթացքի մեջ են Երևանի պետական համալսարանի և Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի հետ նոր պայմանագրերի կնքման գործընթացները, նորակառույց մասնաշենքերում նախատեսվում է 5 ուսումնագիտական լաբորատորիաներ:
Եվրասիա միջազգային համալսարան - Ֆարմացիայի ամբիոնին կից գործում են թվով 7 լաբորատորիաներ (քիմիայի, ֆիզիկայի, անատոմիայի և ֆիզիոլոգիայի, մանրէաբանության, ֆարմակոգնոզիայի և բուսաբանության, դեղերի տեխնոլոգիայի և հյուսվածքաբանության): Լրագրության ամբիոնին կից ARMDOCT նախագծի շրջանակ ներում ձևավորել է նաև մեդիա լաբորատորիա: Առաջիկայում ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ կգործարկվի «Իրավաբանական կլինիկան»:
Ներկայում բուհերում ստեղծվել և արդիականացվել են մի շարք լաբորատորիաներ, մասնավորապես ԲՏՃՄ և բարձր տեխնոլոգիաներ,գյուղատնտեսական նորարարություն, բժշկություն և առողջապահություն և այլ ուղղություններով (ընդհանուր՝ թվով 117):

- *Բարձրագույն ուսումնական հաստատությունների ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների ու ձևերի ընդլայնում (այդ թվում՝ մասնավոր հատվածի հետ համատեղ)՝ խթանելով նորարարական ստարտափ և ձեռնարկատիրական ինկուբատոր էկոհամակարգերի ստեղծումը բուհերում և դրանց հետագա առևտրայնացում*

Բարձրագույն ուսումնական հաստատություններում առկա են ձեռնարկատիրական գործունեության և մասնավոր հատվածի հետ համագործակցության մեխանիզմներ (հիմք ընդունելով բուհերից ստացված տեղեկատվու թյան վերլուծության արդյունքները):
Երևանի պետական համալսարան - 2021թ. ստեղծվել է «Բիզնես ինկուբատոր» կառուցվածքային ստորաբաժանումը, որի հիմնական նպատակը տարբեր գիտակրթական ստորաբաժանում ներում ստեղծվող արդյունքների առևտրայնացման միջավայրի ստեղծումն է, համալսարանական միջավայրում ծնվող գաղափարների գեներացումը և ակսելերացիան, այդ գաղափարները գիտակրթական, արդյունաբերական,

տեխնոլոգիական արդյունքի վերածելու, ինչպես նաև նորարարական գաղափարների հավաքագրմանն ու զարգացմանը միտված օժանդակության ապահովումը:
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան - Արտաքին կապերի դեպարտամենտում գործող Change Lab-ը, որի հիմնական առաքելությունն է հանդես գալ որպես ինկուբատոր դասական և սոցիալական ձեռնարկատիրություններ ստեղծելու աջակցման, ինչպես նաև փոփոխությունների գործակալների և խնդիր լուծողների պատրաստման համար, ակտիվ գործունեություն է ծավալում և 2023-2024թթ. իրականացրել է մի շարք նախագծեր.
Բուհում Հայկական բարեգործական ընդհանուր միության (ABBU) հետ համատեղ 2023թ. հոկտեմբերին իրականացվել է կրթական դրամաշնորհային ծրագիր՝ ՀՊՏՀ ուսանողների համար: Ծրագրին մասնակցել են 15 ՀՊՏՀ ուսանող, իսկ լավագույն 3-ը՝ ստացել են 800.000 ՀՀ դրամի չափով դրամաշնորհ իրենց սեփական բիզնեսում ներդնելու համար:
2023թ. սեպտեմբերի 14-ից մինչև դեկտեմբերի 12-ը ՀՊՏՀ 5 դասախոսներ մասնակցել են Հոլանդիայի դեսպանատան և հոլանդական «Globally Cool» կազմակերպության հետ համատեղ անցկացվող անվճար դասընթացների շարքի, որը նախատեսված է Հայաստանի ստարտափերի և ՓՄՁ-ների մոտ էլեկտրոնային առևտրի և թվային մարքեթինգի հմտությունները զարգացնելուն: Դասընթացի արդյունքում դասախոսները վերապատրաստվել են որպես մենթորներ, ովքեր հետագայում աշխատելու են ստարտ ափերի և ՓՄՁ-ների հետ՝ վերջիններիս կարողությունները զարգացնելու ուղղությամբ:
2023թ. դեկտեմբերին Հեռահաղորդակցության միջազգային միության, Հայաստանի օպերատորների միության, Startup Central Eurasia-ի հետ համատեղ անցկացվել է «Ինչպես ստեղծել ձեր սեփական ստարտափը՝ գաղափարից մինչև ներդրումներ ներգրավելը» խորագրով գաղափարատոնը, որոնց հաղթողները ստացել են դրամական մրցանակներ՝ իրենց ստարտափի մեջ ներդնելու համար:
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան - NUACA-ի նորարարության և ձեռներեցության աջակցության գործունեությունը իրականացվում է իր համեմատաբար նոր կառուցվածքով: 2018թ. մայիսին NUACA-ում բացվել է Նորարարության և ձեռներեցության աջակցության կենտրոն՝ InnoCENS Erasmus+ նախագծի շրջանակներում: Այժմ այս կառույցը կոչվում է Նորարարության և ձեռներեցության աջակցության և դրամաշնորհների բաժին՝ 3 հոգուց բաղկացած աշխատակազմով: Այս բաժինը բաց տարածք է բոլոր երիտասարդների, ուսանողների և դասախոսների համար, որոնք նպաստում են նորարարական գաղափարների ստեղծմանը և զարգացմանը: Դրա հիմնական գործունեությունը կրթության, գիտության և բիզնեսի ինտեգրմանն աջակցելն է: Բաժնի գործունեությունը ներառում է հետևյալ ուղղությունները՝ վերապատրաստումներ, խորհրդատվություն, այլ արտաքին գործընկերների հետ համագործակցություն և փորձի փոխանակում, նորարարական գաղափարների մրցույթների անցկացում և այլն:
Դրա հետ մեկտեղ համալսարանն իր կառուցվածքում ունի «Ծրագրերի իրականացման և պայմանագրային աշխատանքների համակարգման բաժին», որի միջոցով իրականացվում են կիրառական նշանակության նախագծեր պետական և մասնավոր հատվածի համար:
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալասարան - ՀԱՊՀ-ում ակտիվ աշխատանքներ են իրականացվում «Պոլիտեխնիկի ձեռնարկատիրու թյան և

նորարարության կենտրոն» ստեղծելու ուղղությամբ: Վերջինս ներառում է Պոլիտեխնիկի ինկուբացիոն և աքսելերացիոն ծրագրերը: Կենտրոնի նպատակն է ուսումնասիրել Հայաստանի ստարտափ էկոհամակարգի առավելությունները և խնդիրները, դրանց հիման վրա սահմանել ՀԱՊՀ-ում ձեռնարկատիրական կենտրոն հիմնելու անհրաժեշտությունը, նախագծել կենտրոնի հիմնական գործառույթները և կառուցվածքը, ինչպես նաև վերլուծել կենտրոնի զարգացման հնարավորությունները և սահմանել 2 տարվա կտրվածքով գործողությունների ժամանակացույց (2025-2027թթ): Սույն նախագիծը նաև ներառում է ստարտափերի ՀՀ-ում առկա ֆինանսավորման միջոցների վերլուծություն, համակարգում առկա խնդիրների երկրորդական հետազոտություններ, ինչպես նաև ՀԱՊՀ ձեռնարկատիրական կենտրոնի ֆինանսավորման հնարավոր մեխանիզմների նախագծում և ամբողջական իրականացման ռազմավարություն:

ՀԱՊՀ Շարունակական կրթության և դասախոսների վերապատրաստման կենտրոնը մասնագետների պատրաստման ԲՈՒՀ-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում իրականացրել է մի շարք կրթական ու գործնական խնդիրների նախագծման ծրագրեր մասնավոր ընկերությունների հետ:

2025 թվականին Quantori Armenia ընկերության հետ ստորագրվել է հուշագիր ժամանակակից տեխնոլոգիաների ոլորտի պահանջներին համապատասխան կրթական ծրագրերի համատեղ մշակման և իրականացման, ինչպես նաև ուսանողների պրակտիկաների, ավարտական նախագծերի և կիրառական ուսուցման հնարավորությունների ապահովման վերաբերյալ: Ներկայումս նախապատրաստվում են համապատասխան միջոցառումները:

ՇԿ և ԴՎ կենտրոնում 2024 թվականից իրականացվում են նաև մասնագիտական վերապատրաստման և վերարակավորման դասընթացներ էլեկտրաէներգետիկայի և կապի ոլորտների մասնավոր ընկերությունների աշխատակիցների շարունակական մասնագիտական զարգացման ապահովման նպատակով:

Հայաստանի ազգային ագրարային համալսարան - Ագրոտեխնոլոգիական ինկուբատոր՝ նախասաղմնային, սաղմնային և հետսաղմնային փուլերում գտնվող տեխնոլոգիական ստարտափների համար, Կենսատեխնոլոգիական ինկուբատոր, Ճշգրիտ գյուղատնտեսության կենտրոն, Դրոնների լաբորատորիա, որտեղ իրականացվում են ձեռնարկատիրական գործունեություն և մասնավոր հատվածի հետ համագործակցություն, Օրգանական գյուղատնտեսության գիտաուսումնական լաբորատորիա և LISS24 ծրագրի շրջանակներում ՀԱԱՀ-ում ներդրվելու է վաճառքի իրականացման լաբորատորիա:

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան –

Ցյուրիխի արվեստների համալսարանը /Շվեյցարիա/ և «Արտաս» հիմնադրամը Հայկական պետական մանկավարժական համալսարանի հետ համատեղ իրականացնում են հանրակրթական դպրոցների «Կերպարվեստ» և «Տեխնոլոգիա» առարկաների ուսուցիչների ամենամյա վերապատրաստումներ: 2025թ. թվով երրորդն է:

Բրիտանական խորհուրդը Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հետ համագործակցությամբ իրականացնում է IELTS քննության նախապատրաստական շարունակական դասընթացներ:

Վերը հիշատակված ԲՏՃՄ գերազանցության կենտրոնը պլանավորում է լինել կրթական նորարար գաղափարների ինկուբատոր էկոհամակարգ իր լաբորատորիա ներով

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան - համալսարանում ստեղծվել և գործում է ՍՄԱՐԹ ձեռնարկատիրության կենտրոն, որն աջակցում է ուսանողների և շրջանավարտների ձեռնարկատիրական նախաձեռնություններին, նորարար գաղափարների մշակմանը և դրանց կյանքի կոչմանը՝ ապահովելով անհրաժեշտ խորհրդատվություն և կապ մասնավոր հատվածի հետ: Կենտրոնի շրջանակում պարբերաբար իրականացվում են «ՍՄԱՐԹ զրույցներ», որոնք ուսանողներին հնարավորություն են տալիս հանդիպելու ձեռնարկատիրական ոլորտի մասնագետների, գործարարների և նորարարական ստարտափ համայնքի ներկայացուցիչների հետ:

ԲՊՀ-ում ձևավորվել է մենթորների բազա, որն ընդգրկում է արդեն իսկ գործող ձեռնարկատերեր և ոլորտի մասնագետներ: ԲՊՀ-ն համագործակցում է նաև այլ բուհերի ձեռնարկատիրական կենտրոնների, ինկուբատորների, ինչպես նաև ձեռնարկատիրության ոլորտում գործող տարբեր կազմակերպությունների և մասնավոր հատվածի գործընկերների հետ՝ ապահովելով փորձի փոխանակում և ուսանողների համար լայն ցանցային հնարավորություններ:

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ - ձեռնարկատիրական ակտիվությունն ընդլայնման փուլում է, սակայն դեռ չի հասել լիարժեք ինկուբատորային կամ ստարտափ էկոհամակարգի զարգացման մակարդակի:

«Սպորտ ԿԱԲ» լաբորատորիան ընթացիկ տարում քննարկումներ է իրականացրել և դիմել «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամին և նախատեսվում է իրականացնել նախագիծ, որը նպատակ ունի մշակել մարդու կեցվածքային հարմարավետության գնահատման սարքեր:

Համագործակցության հուշագրի շրջանակներում «Բժշկական գենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոնի» հետ համատեղ մշակվել և նախատեսվում է իրականացնել ծրագիր սպորտային գենետիկայի ոլորտում:

ՀՀ պետական կառավարման ակադեմիա- Բարձրագույն ուսումնական հաստատություն ների, ձեռնարկությունների, ինչպես նաև մասնավոր ընկերությունների հետ կապերի ընդլայնում և համագործակցության պայմանագրերի կնքում: Հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնում ընդլայնվում են մասնավոր հատվածի՝ հոգեբանական կենտրոնների, հանրային ինստիտուտների հետ համագործակցությունները: Մասնավորապես՝ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում իրականացվել է «Համայնքների ավագանիների անդամների կարողությունների զարգացում» ծրագիրը. Ընդհանուր առմամբ դասընթացներին մասնակցել է ՀՀ համայնքների 877 ավագանու անդամ:

Կազմակերպվել և անցկացվել են՝

Տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքների ղեկավարների, համայնքների ղեկավարների տեղակալների, ավագանու անդամների) վերապատրաստում,

ՀՀ մարզերի համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայողների վերապատրաստում,

Առկա և հեռավար ուսուցման մոդուլներով քաղաքացիական ծառայողների վերապատրաստում,

Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի համայնքային ծառայողների վերապատրաստում,
Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատակիցների վերապատրաստում «Էմ Էս Էքսել» («MS Excel») ծրագրով,
«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված համապատասխան մարմինների քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների վերաբերյալ վերապատրաստումներ,
ՀՀ պաշտպանության նախարարության քաղաքացիական ծառայողների վերապատրաստում,
Մշակվել և իրականացվել է հանրային ծառայության համակարգ նոր մուտք գործողների արագ ինտեգրումն ապահովելու համար ադապտիվ վերապատրաստման ծրագրով վերապատրաստում:
Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ – գործում է երիտասարդական էքսպերիմենտալ թատրոն, որը նպաստում է նաև քաղաքային միջավայրի էկո-մշակութային ակտիվացմանը: Կազմակերպվել են փիչինգներ, որի արդյունքում աջակցություն են ստացել կինո և պրոդյուսերական նախագծեր, որոնք մասնակիորեն առնչվում են նաև էկո-մշակությանին թեմաների հետ:
Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա – Բուհի կողմից մշակվել է «Մտավոր սեփականության քաղաքականություն», որում սահմանված են առևտրայնացման մոտեցումները: Այս քաղաքականությամբ հաստատությունը կիրականացնի 2023-2027թթ. ռազմավարությամբ պլանավորված գործողությունները՝ միտված բուհի առևտրայնացման գործունեության զարգացմանը: Բացի այդ, հաստատությունում ընթանում են մի շարք ձեռնարկատիրական և նորարարական նախագծեր, որոնք իրականացվել են հաստատված ուսումնական պլանների շրջանակում և առանձին փառատոներին և ցուցահանդեսներին մասնակցությամբ: ՀԳՊԱ-ն աշխատաշուկայի ներկայացուցիչների հետ հաջողությամբ իրականացնում է համագործակցային նախագծեր, որոնք հետագայում նոր համագործակցությունների և առևտրայնացման համար հիմքեր են:
Գավառի պետական համալսարան - Համալսարանում հիմնադրվել է «SMART» կենտրոնը՝ ձեռնարկատիրական գործունեության ծրագրերի մշակման, գործատուների հետ համագործակցության ընդլայնման նպատակով:
Հայաստանի եվրոպական համալսարան – Բուհում ամբիոններին կից գործում են հետևյալ ինկուբատորները՝
Հոգեբանության ամբիոն՝
1) Ցավի և սթերեսի կառավարումը VR տեխնոլոգիաների միջոցով,
2) Զարգացնող խաղերի ստեղծում:
Կառավարման ամբիոն՝ Լոգոներով պարագաների արտադրություն,
Միջազգային հարաբերությունների ամբիոն՝ Տարածաշրջանային քաղաքական գործընթացների վերլուծության և առաջարկությունների մշակման կենտրոն,
Դիզայնի ամբիոն՝ Հաշմանդամություն ունեցող անձանց համար միջավայրում հաղորդակցման և կողմնորոշման էլեմենտների գրաֆիկական նախագծում,
Զբոսաշրջության և սպասարկման ամբիոն՝

1)«Զբոսաշրջային ծառայությունների ինովացիոն կենտրոն» գիդերի գործունեություն և էքսկուրսիաների, զբոսաշրջային միջոցառումների և փառատոնների կազմակերպում,
2)Առցանց տուր-ապրանքների, այդ թվում՝ երթուղիների մշակում:
Ֆինանսների և բանկային գործի ամբիոն՝ Ֆինանսական վերլուծություն և բիզնես պլանավորում:
Մարքեթինգի ամբիոն՝
1)Մարքեթինգային հետազոտությունների լաբորատորիա,
2)Կրեատիվ մարքեթինգային կենտրոն՝ մարքեթինգային պրոմո ակցիաների մշակում և կազմակերպում:
Հայաստանի ամերիկյան համալսարան – գործում են՝
ՀԱՀ ձեռներեցության և նորարարական տեխնոլոգիաների կենտրոն,
«Ձեռներեցներ առողջապահության ոլորտում» ծրագիր,
Համագործակցության համաձայնագրեր մասնավոր սեկտորի ոլորտի ընկերությունների հետ, մասնավորապես SS ոլորտում:
Եվրասիա միջազգային համալսարան - Բուհն ուսանողների ձեռնարկատիրական հմտությունները զարգացնելու նպատակով ուսումնական ծրագրերում ներառում է ձեռնարկատիրությանն առնչվող դասընթացներ, կազմակերպում է գործնական սեմինարներ հաջողակ ձեռնարկատերերի հետ, խրախուսում է ուսանողական ստարտափների ստեղծումը: Վերջինս ակտիվորեն համագործակցում է գործատուների հետ՝ ուսանողներին պրակտիկայի հնարավորություններ տրամադրելու նպատակով:

«Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՕ-285-Ն օրենքով՝ որպես բարձրագույն կրթության և գիտության ոլորտների պետական քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը սահմանվել է՝ բուհերի և գիտական կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեությանը և ֆոնդհայթայթման միջոցառումներին աջակցումը, ինչպես նաև բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում ներդրումների խրախուսումն ու բարենպաստ ներդրումային միջավայրի ապահովումը:

Վերոնշյալով պայմանավորված՝ հետազոտական համալսարանները, իրենց կանոնադրությամբ սահմանված կարգով, կարող են զբաղվել ձեռնարկատիրական գործունեության տեսակներով: Մասնավորապես, օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բուհը, իր և իր աշխատողների մտավոր գործունեության արդյունքների իրացման նպատակով, կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն՝ ստեղծելով տնտեսական ընկերություններ կամ մասնակցելով դրանց:

Միաժամանակ բուհերում առկա են ձեռնարկատիրական գործունեության և մասնավոր հատվածի հետ հետևյալ համագործակցությունները, մասնավորապես՝
Երևանի պետական համալսարան – 2021 թվականին ստեղծվել է «Բիզնես ինկուբատոր» կառուցվածքային ստորաբաժանումը, որը նպաստում է համալսարանական գիտակրթական արդյունքների առևտրայնացմանը, գաղափարների գեներացմանն ու աքսելերացիային:
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան – Արտաքին կապերի դեպարտամենտում գործող Change Lab-ը 2023–2024 թվականներին իրականացրել է

ձեռնարկատիրական նախաձեռնություններ, այդ թվում՝ դասախոսների վերապատրաստում և ստարտափային միջոցառումներ՝ ստարտափերի և ՓՄՁ-ների զարգացման նպատակով: Մասնավորապես, 2023 թվականին 5 դասախոսներ վերապատրաստվել են որպես մենթորներ՝ էլեկտրոնային առևտրի և թվային մարքեթինգի ոլորտներում, ինչպես նաև անցկացվել է ստարտափ գաղափարատոն, որի հաղթողները ստացել են դրամական մրցանակներ իրենց նախագծերի զարգացման համար:

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան (NUACA) – համալսարանում նորարարության և ձեռներեցության աջակցության գործունեությունը իրականացվում է Նորարարության և ձեռներեցության աջակցության և դրամաշնորհների բաժնի միջոցով: 2018 թվականին ստեղծված կենտրոնը (InnoCENS Erasmus+ նախագծի շրջանակներում) այժմ գործում է 3 հոգուց բաղկացած աշխատակազմով և բաց է բոլոր երիտասարդների, ուսանողների և դասախոսների համար: Բաժնի հիմնական նպատակն է աջակցել նորարարական գաղափարների ստեղծմանը և զարգացմանը՝ կրթության, գիտության և բիզնեսի ինտեգրմամբ: Գործունեությունը ներառում է վերապատրաստումներ, խորհրդատվություն, արտաքին գործընկերների հետ համագործակցություն, փորձի փոխանակում և նորարարական գաղափարների մրցույթների:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան (ՀԱՊՀ) – Համալսարանում իրականացվում են աշխատանքներ «Պոլիտեխնիկի ձեռնարկատիրության և նորարարության կենտրոն» ստեղծման ուղղությամբ, որը ներառում է ինկուբացիոն և աքսելերացիոն ծրագրեր: Կենտրոնի նպատակն է գնահատել Հայաստանի ստարտափ էկոհամակարգի հնարավորությունները և խնդիրները, նախագծել կենտրոնի կառուցվածքը, հիմնական գործառույթները և զարգացման 2-ամյա ռազմավարությունը (2025–2027թթ.), ինչպես նաև վերլուծել ֆինանսավորման հնարավոր մեխանիզմները:

ՀԱՊՀ Շարունակական կրթության և դասախոսների վերապատրաստման կենտրոնը՝ բուհ-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում, իրականացրել է մի շարք կրթական և գործնական նախագծեր: 2025 թվականին Quantori Armenia ընկերության հետ ստորագրվել է հուշագիր՝ ժամանակակից տեխնոլոգիաների ոլորտում համատեղ կրթական ծրագրերի մշակման, ուսանողների պրակտիկաների, ավարտական նախագծերի և կիրառական ուսուցման հնարավորությունների ապահովման վերաբերյալ:

Ներկայումս նախապատրաստվում են համապատասխան միջոցառումներ, իսկ 2024 թվականից իրականացվում են մասնագիտական վերապատրաստման և վերաորակավորման դասընթացներ էլեկտրաէներգետիկայի և կապի ոլորտների մասնավոր ընկերությունների աշխատակիցների շարունակական մասնագիտական զարգացման համար:

Հայաստանի ազգային ագրարային համալսարան (ՀԱԱՀ) – Համալսարանում գործում են Ագրոտեխնոլոգիական ինկուբատոր (նախասաղմնային, սաղմնային և հետսաղմնային փուլերում գտնվող ստարտափների համար), Կենսատեխնոլոգիական ինկուբատոր, Ճշգրիտ գյուղատնտեսության կենտրոն, Դրոնների լաբորատորիա, Օրգանական գյուղատնտեսության գիտաուսումնական լաբորատորիա և LISS24 ծրագրի շրջանակներում վաճառքի իրականացման լաբորատորիա: Բոլոր կառույցները

իրականացնում են ձեռնարկատիրական գործունեություն և համագործակցություն մասնավոր հատվածի հետ:

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան – Համալսարանը համագործակցում է հետևյալ միջազգային կազմակերպությունների հետ՝

Ցյուրիխի արվեստների համալսարան/Շվեյցարիա և «Արտաս» հիմնադրամ՝ հանրակրթական դպրոցների «Կերպարվեստ» և «Տեխնոլոգիա» առարկաների ուսուցիչների ամենամյա վերապատրաստումների համար, 2025թ. երրորդ անգամ,

Բրիտանական խորհուրդ՝ IELTS քննության նախապատրաստական դասընթացների համար,

Բարձր տեխնոլոգիական կրթության կենտրոն՝ կրթական նորարար գաղափարների ինկուբատորի ստեղծման նպատակով լաբորատորիաներով:

Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան (ԲՊՀ) – Համալսարանում գործում է ՍՄԱՐԹ ձեռնարկատիրության կենտրոն, որը աջակցում է ուսանողների և շրջանավարտների ձեռնարկատիրական նախաձեռնություններին և նորարար գաղափարների կյանքի կոչմանը՝ տրամադրելով խորհրդատվություն և կապ մասնավոր հատվածի հետ: Կենտրոնում պարբերաբար կազմակերպվում են «ՍՄԱՐԹ զրույցներ»՝ ուսանողներին հնարավորություն տալով հանդիպելու ոլորտի մասնագետների, գործարարների և ստարտափ համայնքի ներկայացուցիչների հետ: ԲՊՀ-ում ձևավորված է մենթորների բազա և իրականացվում է համագործակցություն այլ բուհերի ձեռնարկատիրական կենտրոնների, ինկուբատորների և մասնավոր գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և լայն ցանցային հնարավորությունների ապահովման համար:

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ (ՀՖԿՍՊԻ) – Ուսումնական հաստատությունում ձեռնարկատիրական ակտիվությունն ընդլայնման փուլում է: «Սպորտ ԿԱԲ» լաբորատորիան դիմել է «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամին և նախատեսում է իրականացնել նախագիծ՝ մարդու կեցվածքային հարմարավետության գնահատման սարքերի մշակման նպատակով: Համագործակցության հուշագրի շրջանակներում նախատեսվում է նաև ծրագիր սպորտային գենետիկայի ոլորտում՝ «Բժշկական գենետիկայի և առողջության առաջընթացի պահպանման կենտրոնի» հետ:

ՀՀ պետական կառավարման ակադեմիա – Բուհը ընդլայնում է համագործակցությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների, ձեռնարկությունների և մասնավոր ընկերությունների հետ, ներառյալ հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնում: Մասնակցել է GIZ ծրագրի «Համայնքների ավագանիների անդամների կարողությունների զարգացում» նախաձեռնությանը՝ 877 համայնքի ավագանու անդամների մասնակցությամբ: Կազմակերպվել են համայնքային ծառայողների և քաղաքացիական ծառայողների վերապատրաստումներ՝ ներառյալ Excel հմտությունների դասընթացներ և արագ ինտեգրման ադապտիվ ծրագրեր:

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ – Գործում է երիտասարդական էքսպերիմենտալ թատրոն, կազմակերպվում են փիչինգներ՝ աջակցություն տրամադրելով կինո և պրոդյուսերական նախագծերին, մասնակիորեն միտված էկո-մշակութային թեմաների զարգացմանը:

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա – Բուհը մշակում և կիրառում է «Մտավոր սեփականության քաղաքականություն», որն ուղղված է նորարարությունների և գաղափարների առևտրայնացմանն ուսումնական պլանների և փառատոնների շրջանակում: ՀԳՊԱ-ն հաջողությամբ իրականացնում է համագործակցային նախագծեր շուկայի ներկայացուցիչների հետ, հիմք ստեղծելով հետագա նոր համագործակցությունների և առևտրայնացման համար:

- *Որակի վերահսկողության գործիքակազմի՝ ստանդարտի (լիցենզավորման, նախահավատարմագրման, հավատարմագրման նոր չափանիշներ) մշակում և ներդրում*

«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի համաձայն՝ համապատասխան լիազորող նորմերի և իրավական հենքի, ենթաօրենսդրական համապատասխան ակտերի առկայության պարագայում բուհերի լիցենզավորման և հավատարմագրման գործընթացներում կներդրվի որակի վերահսկողության նոր գործիքակազմ:

Օրենքով սահմանված են՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների լիցենզավորման կարգավորումները (Հոդված 14), համաձայն, որի ՀՀ-ում ենթակա են լիցենզավորման բարձրագույն ուսումնական հաստատությունները (ի տարբերություն գործող կարգավորումներով, երբ լիցենզիա տրվում է առանձին կրթական ծրագրերին): Լիցենզիան տրվում է անժամկետ և գրանցվում է բարձրագույն կրթության և գիտության կառավարման տեղեկատվական համակարգում:

Լիցենզավորման նպատակն է հավաստել և երաշխավորել ոլորտի համար օրենքով սահմանված պետական քաղաքականության սկզբունքների իրականացումը, բուհական համակարգում ուսանողի փորձառության համադրելիությունը և բուհի գործունեության համապատասխանությունը լիցենզավորման պայմաններին, պահանջներին և օրենսդրությանը:

Լիազոր մարմինը պետության կողմից ստեղծված լիցենզավորում և հավատարմագրում իրականացնող մասնագիտացված կառույցի (այսուհետ՝ Մասնագիտացված կառույց) որոշման հիման վրա բուհին շնորհում է կրթական գործունեություն իրականացնելու թույլտվություն՝ լիցենզիա՝ օրենքի, «Լիցենզավորման մասին» օրենքի, լիցենզավորման կարգի և այլ իրավական ակտերի դրույթներին համապատասխան:

Լիցենզիայի տրամադրելուց հետո՝ 10 տարվա պարբերականությամբ Մասնագիտացված կառույցի կողմից իրականացվում է լիցենզավորման պահանջների ստուգում, որոնց չհամապատասխանելու պարագայում բուհին տրվում է 1 տարի ժամանակահատված՝ անհամապատասխանությունները վերացնելու նպատակով: Դրա չվերացման պարագայում բուհին տրված լիցենզիան դադարեցվում է:

Լիցենզիայով սահմանվում են բուհում ուսանողների սահմանային տեղը, որը չի կարող պակաս լինել 4 000-ից:

Բուհերի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրումը (Հոդված 19), որի համաձայն հավաստվում են համապատասխանությունը բուհական գործունեության և կրթական ծրագրի իրականացման նվազագույն չափանիշներին, որակի վերահսկման ներքին կառուցվածքի և ընթացակարգերի առկայությունը, կրթական ծրագրերի կազմման

և հաստատման ներքին ընթացակարգերի առկայությունը, ուսանողակենտրոն կրթական միջավայրի առկայությունը, կրթական ծրագրերի մատուցման և ուսանողների գնահատման գործող համակարգերի համապատասխանությունը կրթական ծրագրի վերջնարդյունքներին և մակարդակին, կրթական ռեսուրսների և ուսանողների աջակցության ենթակառուցվածքների և ընթացակարգերի առկայությունը և համապատասխանությունը հավատարմագրման կարգերով նախատեսված այլ չափանիշներին և պայմաններին:

- *Բարձրագույն ուսումնական հաստատություններում մրցունակ կրթական ծրագրերի մշակման, ներդրման և մշտադիտարկման միասնական սկզբունքների և չափանիշների վերանայում*

2025 թվականին ընդունված «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքում սահմանված են կրթական ծրագրերի մշակման և ներդրման միասնական սկզբունքներն ու չափանիշները և դրանց կիրառման ուղեցույցի հաստատման իրավական հենք (36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ):

Օրենքում սահմանված են կրթական ծրագրերի մշակման և ներդրման միասնական սկզբունքներն ու չափանիշները, այդ թվում կրթական ծրագիր հասկացությունը, այն է՝ ծրագիրն այն ուսումնական և հետազոտական բաղադրիչների ամբողջությունն է, որը բուհն առաջարկում է սահմանված շրջանակին և չափանիշներին համապատասխան. այն ուղղված է ուսանողի կողմից որոշակի կրթական վերջնարդյունքների՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը, ինչպես նաև այդ վերջնարդյունքներին հասնելու ստուգմանը և ճանաչմանը, ինչի հիմքով շնորհվում է բարձրագույն կրթության համապատասխան որակավորում, մասնագիտություն և անհրաժեշտության դեպքում՝ նաև մասնագիտացում, որոնք արտացոլվում են դիպլոմում: Միաժամանակ սահմանվել է նաև ծրագրային հավատարմագրում հասկացությունը, որը որակի արտաքին գնահատման և հավաստման համակարգված գործընթաց է: Այդ գործընթացի արդյունքում հաստատվում է, որ բուհի որոշակի կրթական ծրագիրն իր ուսումնական նպատակներով, բովանդակությամբ, իրականացնող մասնագիտական կազմով, ուսանողակենտրոն մեթոդներով և մատուցումն ապահովող ռեսուրսներով համապատասխանում է սահմանված չափանիշներին և պայմաններին: Միաժամանակ հավաստվում է տվյալ կրթական ծրագրի որակը և ավարտողների որակավորման ճանաչելիությունը պետական և միջազգային մակարդակներում:Օրենքով սահմանված Կառավարության ստեղծած բարձրագույն և մասնագիտական կրթության որակի ապահովման մասնագիտացված կառույցին է վերապահված բուհերի և դրանց կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատումը և հավատարմագրումը, ինչպես նաև իրականացնում է հավատարմագրման և որակավորումներին ներկայացվող պահանջների կատարման ընթացիկ մշտադիտարկում:

Նպատակ 3. Բարձրագույն կրթության միջազգայնացում

- *Օտարերկրյա ուսանողների համար ՀՀ բուհերի և ՀՀ-ում ուսումնառության վերաբերյալ տեղեկատվական միասնական հարթակի ձևավորում և ներդրում*

Վերանայվել են ՀՀ բուհերում օտարերկրյա ուսանողների ընդունելության (կատարվել են համապատասխան փոփոխություններ ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 28 N 700-Ն որոշման մեջ), ակադեմիական շարժունության կարգերը՝ նախատեսելով նաև գործընթացի իրականացումը էլեկտրոնային միասնական հարթակի միջոցով:

Բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու համար օտարերկրյա դիմորդները, սահմանված կարգի համաձայն, պետք է գրանցվեն օտարերկրյա դիմորդների ընդունելության dev-fs.emis.am համակարգում՝ լրացնելով անձնական տվյալները, այնուհետև ընտրել ուսումնական հաստատությունը և մասնագիտությունը, լրացնել հայտը՝ կցելով պահանջվող փաստաթղթերի PDF տարբերակները:
Արդյունքում էլեկտրոնային հարթակում 2025-2026 ուսումնական տարվա ընդունելության համար գրանցվել է 2 175 հայտ, դիմորդների ընդհանուր թիվն աճել է 38%-ով: Միայն օտարազգի քաղաքացիների հայտերի քանակը 2024 թվականի համեմատ աճել է 90%-ով:

- *Բարձրագույն կրթության բոլոր մակարդակներում օտար լեզվով դասավանդման հնարավորությունների ընդլայնում և հավասար հնարավորությունների ստեղծում ինչպես հայերեն, այնպես էլ օտար լեզվով դասավանդվող կրթական ծրագրերի համար*

«Լեզվի մասին» օրենքում առկա են համապատասխան կարգավորումներ ըստ որոնց ՀՀ գործող բուհերում, այդ թվում՝ ՀՀ և օտարերկրյա պետությունների բուհերի (նաև դրանց մասնաճյուղերի) կամ կազմակերպությունների մասնակցությամբ և միջպետական համաձայնագրերով ստեղծված, հայոց լեզվի ընդունելության քննության և հայոց լեզվով ուսուցման, ինչպես նաև բարձրագույն կրթության առաջինից երրորդ մակարդակների կրթական ծրագրերով օտար լեզվով ուսուցման կազմակերպումն իրականացվում է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքին համապատասխան: Օրենքի 10-րդ հոդված 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերով սահմանվել են բարձրագույն կրթության բոլոր մակարդակներում օտար լեզվով դասավանդման հնարավորությունների և օտարալեզու կրթական ծրագրերի ընդլայնման իրավական հիմքերը:

- *Բարձրագույն կրթության որակավորումներ, կրեդիտների փոխճանաչման մեխանիզմների բարելավում, Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության որակավորումներ, կրեդիտների փոխճանաչման ապահովում*

ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների փոխճանաչման ապահովումը ներկայումս իրականացվում է Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային կենտրոնի կողմից՝ ազգային մակարդակում, իսկ բուհերը համագործակցում են ինստիտուցիոնալ մակարդակում՝ կրեդիտների փոխճանաչման ուղղությամբ՝ սահմանելով բուհական ներքին ճանաչման ընթացակարգեր:

«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքով ներդրվել է կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգ, որն ապահովում է ակադեմիական կրեդիտների համադրելիությունը և փոխանցելիությունը ինչպես հանրապետության, այնպես էլ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի կազմակերպությունների հետ ու դյուրացնում է ուսանողների շարժունությունը և ուղղված է կրթական ծրագրերի ու մոդուլների թափանցիկությանը:

ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նպատակ 1. Ոչ ֆորմալ կրթության արդյունքների ճանաչման մեխանիզմների ներդրում, մեծահասակների և երիտասարդների հարատև ուսումնառության և մարդկային կապիտալի շարունակական զարգացման միջավայրի ու պայմանների ապահովում

- *ՀՀ կրթությանն առնչվող հիմնական օրենքներում ու ենթաօրենսդրական ակտերում երիտասարդության և մեծահասակների կրթության ուսումնառությանն ու կրթության ոլորտին առնչվող տերմինաբանության (ԼՇԿ, ՄՈՒԿ, հարատև և այլն) համապատասխանեցում միջազգայնորեն ընդունված, համաձայնեցված սահմանումներին և ստանդարտներին(օր.ՅՈՒՆԵՍԿՕ, ՄԱԿ) վերլուծություն և առաջարկներ*

Միջազգայնորեն ընդունված սահմանումները և տերմիններն ուսումնասիրված են: Իրականացվել է միջազգային փաստաթղթերի ՄՈՒԿ առնչվող բանաձևերում, ուղեցույցներում և կարգավորումներում արտացոլված եզրաբանության ուսումնասիրություն: Դիտարկվել են եզրաբանություն ստեղծող և կիրառող հետևյալ դերակատարները՝ ՅՈՒՆԵՍԿՕ, Եվրոպական Միություն, առանձին պետությունների օրինակներ: Հետազոտությունը ուսումնասիրել և վերլուծել է ՄՈՒԿ/ԼՇԿ ոլորտի եզրերն ու հասկացությունները, դրանց սահմանումներն ու կիրառության դեպքերը հետևյալ տիրույթներում.

- ՄՈՒԿ/ԼՇԿ գործընթացներն անվանող և սահմանող եզրեր և հասկացություններ,
- Գործընթացում ներառված սուբյեկտներին նկարագրող եզրեր.
- կրթություն և ուսումնառություն ստացողներ,
- կրթություն և ուսումնառություն մատուցողներ,
- համատեքստային եզրեր՝ կրթության բնագավառի ընդհանրական հասկացություններ, որոնք այս կամ այն կերպ կարող են առնչվել ՄՈՒԿ/ԼՇԿ տերմիններին:

- *Ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությանն առնչվող ենթաօրենսդրական ակտերի մշակում և գործարկում*

2025 թվականի հունիսի 16-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարի N51 հրամանով հաստատվել և գործարկվել է «Լրացուցիչ կրթության մոդուլային ծրագրերի երաշխավորման կարգը»: Ներկայումս մշակման փուլում է «Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման և ճանաչման կարգի» նախագիծը:

- *Ոչ ֆորմալ, այդ թվում՝ արտադպրոցական, կրթության դերակատարների, ծառայություններ տրամադրողների հաշվեգրման, նրանց կողմից իրականացվող, այդ թվում՝ զինվորական ծառայության ընթացքում կրթական և վարժանքային ծրագրերի երաշխավորման և հավաստագրման համակարգերի, կրեդիտների շնորհման և արդյունքների ճանաչման, որակի ապահովման մեխանիզմների մշակում ու փորձարկում (պիլոտավորում)*

2025թ. ընթացքում ոչ ֆորմալ կրթական ծրագրերի որակի բարձրացման ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքում գնահատվել և ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով երաշխավորվել են 703 ոչ ֆորմալ կրթական ծրագրեր:

Ընդհանուր առմամբ 2022 թվականից մինչ օրս ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով երաշխավորվել և ՀՀ ԿԳՄՍՆ պաշտոնական կայքէջում(https://escs.am/am/category/non-formal) հրապարակվել է շուրջ 803 ոչ ֆորմալ կրթական ծրագիր, որից 703-ը միայն 2025 թվականի ընթացքում:

- *Ոչ ֆորմալ կրթության վիճակագրական քանակական և որակական տվյալների հավաքագրման իրավական հենքի ու ինստիտուցիոնալ մեխանիզմների (ներառյալ՝ գործիքակազմի, այդ թվում՝ ազգային ռեեստրի) մշակում և ներդրում*

Ոչ ֆորմալ կրթությունը կանոնակարգված իրականացնելու և չափելի տեղեկատվություն ունենալու նպատակով նախատեսված ռեեստրը ստեղծելու համար ակտիվ աշխատանքներ են իրականացվում «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ համագործակցությամբ: Աշխատանքները ավարտին կհասցվեն 2026 թվականի հունվարի 3-րդ տասնօրյակում:

- *Ոչ ֆորմալ կրթության (ներառյալ՝ երիտասարդների ու մեծահասակների ուսումնառության և կրթության) իրազեկվածության բարձրացում հասարակության շրջանում ոլորտի ջատագովության, հանրային արշավների իրականացման միջոցով*

2025թ. հուլիսի 15-ին տեղի է ունեցել «ԿրթաԲ.Ա.Ց Ստեփանավան» մեծահասակների ուսումնառության և կրթության կենտրոնի (ՄՈւԿ) բացման հանդիսավոր արարողությունը, որի շրջանակում նաև իրականացվել է մեծահասակների կրթությունը խթանող հանրային արշավ: Ստեփանավանի խոշորացված համայնքում ԴԻ-ՎԻ-ՎԻ Ինթերնեյշնալի հետ համագործակցությամբ հիմնվել է նմանատիպ կենտրոն, որի գործունեության շրջանակում ևս իրականցվել է հանրային արշավ՝ խթանելով համայնքի բնակիչների ոչ ֆորմալ կրթությամբ հետաքրքրությունը:

Սոցիալական կրեդիտների տրամադրման գործընթացում մեծ տեղ է հատկացվել քաղաքացիների շարունակական կրթությանը, այդ թվում ոչ ֆորմալ կրթական ծրագրերի միջոցով: Այս գործընթացի շրջանակում ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից իրականացվել են հանրային իրազեկման մեծածավալ աշխատանքներ, մշակվել է տեսահոլովակ, պաշտոնական կայք էջում առանձնացվել բաժին, որտեղ տեղակայված է տեղեկատվություն ոչ ֆորմալ կրթական ծրագրերի մասին:

ՍՓՅՈՒՌՔ

Նպատակ 1. Նպաստել հայոց լեզվի տարածմանը, հայկական մշակույթի հանրահռչակմանը օտար երկրներում, ներդնել Սփյուռքում կրթության զարգացմանը նպաստող մեխանիզմներ

- *Օտարերկրյա համալսարաններում և հայագիտական կենտրոններում հայոց լեզվի, հայ գրականության և հայագիտական այլ առարկաների դասավանդման խթանում*

2025 թվականին օտարերկրյա համալսարաններում հայագիտական կենտրոնների գործունեության ապահովման ծրագրի շրջանակում ներառված են 11 երկրների 14 կրթագիտական կառույցներ:

Ծրագրի շրջանակում օտարերկրյա համալսարաններում/ կրթագիտական կառույցներում կազմակերպվել են հետազոտական 5 աշխատանքներ:

• *Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների Համալսարաններում հայագիտական միջազգային գիտաժողովների և կրթամշակութային միջոցառումների կազմակերպում*

2025 թվականին կազմակերպվել են հայագիտական 2 կրթամշակութային միջոցառումներ՝ Վենետիկի Կա՛Ֆոսկարի համալսարանում և Պոտսդամի Լեփսիուսի տուն-թանգարանի ինստիտուտում:

2025 թվականի դեկտեմբերի 12-13-ին Պոզնանի Ադամ Միցկևիչի անվան համալսարանում անցկացվեց օտարերկրյա համալսարաններում գործող հայագիտական կենտրոնների մասնակցությամբ երկրորդ համաժողովը:

• *Սփյուռքի կրթօջախների տվյալների բազայի համակարգի ստեղծում և կառավարում*

2025 թվականին իրականացվել է տվյալների պարզագույն մուտքագրում էլեկտրոնային համակարգ՝ Excel ձևաչափով, և ներկայումս համակարգում գրանցված կրթօջախների թիվը կազմում է 200:

• *Հայաստանում մանկավարժական, մասնագիտական հմտությունների զարգացմանն ուղղված առկա և հեռավար վերապատրաստումների կազմակերպում*

2025 թվականին վերապատրաստման ծրագրին մասնակցել են 62 ուսուցիչներ՝ 8 երկրներից: 2025 թվականի առաջին կիսամյակում ծրագրին մասնակցելու համար ստացվել է 73 մասնակցության հայտ 14 երկրներից՝ ներառյալ 38 քաղաքներ, որոնցից 11 մասնակիցներ, աշխարհաքաղաքական իրավիճակով պայմանավորված, չեն կարողացել մասնակցել ծրագրին: Դասընթացները կազմակերպվել են ուսումնական 7 խմբերում՝ յուրաքանչյուրը 120 ժամ բեռնվածությամբ:

• *Սփյուռքի կրթօջախներում վերապատրաստումների կազմակերպում՝ Հայաստանից մասնագետների գործուղման միջոցով*

2025 թվականին օտարերկրյա համալսարաններում գործող հայագիտական կենտրոններ գործուղված 3 մասնագետներն իրականացնում են նաև վերապատրաստման դասընթացներ:

• *Սփյուռքի ուսուցիչների աշխատանքային որակի չափորոշիչների ստեղծում և դրանց համապատասխան որակի բարձրացման խթանման մեխանիզմների ներդրում*

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2024թ. հոկտեմբերի 28-ի N52-Լ հրամանով հաստատված սփյուռքի ուսուցիչների գնահատման բնութագրիչները ներդրված են/գործում են: Դրանք ուղղված են ապահովելու սփյուռքի համար ՀՀ հանրակրթության բովանդակությանը համահունչ կրթական որակյալ և արդյունավետ ծառայություններ, ինչպես նաև սփյուռքում գործող հայկական կրթօջախների հնարավորին չափ ինտեգրումը Հայաստանի կրթական համակարգին:

• *Համահայկական օլիմպիադաների կազմակերպում*

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեից այս ծրագիր-միջոցառման իրականացման համար ֆինանսական միջոցներ չեն հատկացվել: ՀՀ պետական բյուջեում այս ծրագիր-միջոցառումն ընդգրկվում է դպրոցականների համայնքային օլիմպիադաների կազմակերպման ծրագրերի շրջանակում:

• *Համահայկական մանկապատանեկան գեղագիտական դաստիարակության միջոցառումների կազմակերպում*

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեից այս ծրագիր-միջոցառման իրականացման համար ֆինանսական միջոցներ չեն հատկացվել: ՀՀ պետական բյուջեում այս ծրագիր-միջոցառումն ընդգրկվում է ՀՀ ԿԳՄՄՆ ժամանակակից արվեստի և գրահրատարակչության վարչության կողմից իրականացվող միջոցառումների շրջանակում:

- *Սփյուռքի կրթօջախներին դասագրքերի և այլ տեսակի ուսումնական ու* մեթոդական գրականության տրամադրում

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով այս միջոցառման նպատակով հատկացվել է 90.000.0 ՀՀ հազար դրամ: Սփյուռքի կրթօջախներից ստացվել է ուսումնական նյութերի ստացման 140 հայտ, որից բավարարվել է 129-ը:

2025 թվականին ձեռք է բերվել 46 224 կտոր ուսումնական գրականություն և 23 պետության 129 կրթօջախի փոխանցվել է 46153 կտոր գրականություն: Տրամադրված ուսումնական գրականության քանակը նախորդ տարվա համեմատ ավելի է շուրջ 49%-ով:

Միաժամանակ, 2025 թվականին «Հայաստանի միգրանտ ընտանիքների դպրոցականների հայոց լեզվի իմացության բարելավում» ծրագրի շրջանակում 208 աշակերտ հնարավորություն է ստացել սովորել հայոց լեզու:

- *Սփյուռքի կրթօջախների համար էլեկտրոնային պաշարների և հավելվածների ստեղծում ու դրանց տարածում*

Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կայքէջում (հղումը՝ https://lib.armedu.am/category/66) տեղադրվել են սփյուռքի կրթօջախների համար էլեկտրոնային նյութեր՝ PDF ձևաչափով: Ներկայումս կայքէջում հասանելի են 79 էլեկտրոնային նյութեր:

- *Սփյուռքի կրթօջախների համար տարբերակված ու հասցեական դասագրքերի և այլ տեսակի ուսումնական ու մեթոդական նյութերի մշակում և դրանց տարածում*

2025 թվականին մշակվել և ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորվել է 1 ուսումնամեթոդական նյութ, որը նախատեսված է ռուսախոսների համար՝ ռուսերենի հենքի վրա հայերենի ուսուցում իրականացնելու նպատակով: 2024 թվականին մշակվել էր 1 ուսումնամեթոդական նյութ, որը նախատեսված է իսպանախոսների համար՝ իսպաներենի հենքի վրա հայերենի ուսուցումը Քենեդի համալսարանում (Արգենտինա) իրականացնելու համար:

ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ

Բոլոր բնակավայրերում հասանելի կլինեն մատչելի նախադպրոցական ծառայություններ



3-5 տարեկանների առնվազն 95%-ն ընդգրկված կլինի նախադպրոցական ծառայություններում





Բոլոր դպրոցները կունենան պատշաճ կահավորված և արդիական սարքավորումներով հագեցված, սանիտարահիգիենիկ, անվտանգային ստանդարտները բավարարող և համընդհանուր մատչելի շենքեր



Բոլոր դպրոցները համալրված կլինեն որակավորված և սահմանված ստանդարտներին համապատասխան ատեստավորված մանկավարժներով, որոնք կստանան արժանապատիվ վարձատրություն

Ամեն 3-րդ ուսուցիչն ատեստավորված է:

Ոչ մի երեխա դուրս չի մնա պարտադիր կրթության համակարգից



Բնագիտության և մաթեմատիկայի միջազգային գնահատման արդյունքներով Հայաստանի դպրոցականները կցուցաբերեն շարունակական աճ՝ գրանցելով միջինից (500 միավորից) բարձր ցուցանիշներ, համապատասխանաբար՝ 575, 550:

Աշակերտների գնահատման TIMSS-2023 միջազգային ստուգատեսի արդյունքներով՝

- Մաթեմատիկայից՝ միջինից բարձր՝ 513 միավոր, 93%-ը հաղթահարել է նվազագույն շեմը.
- Բնագիտությունից՝ 82%-ը հաղթահարել է նվազագույն շեմը. 40%-ը՝ միջին շեմը:



2025 թվականին Հայաստանն առաջին անգամ մասնակցել է Սովորողների գնահատման PISA ծրագրին, որի արդյունքները կհրապարակվեն 2026 թվականի սեպտեմբերին:

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգը ձեռք կբերի միջազգային հեղինակություն, որի շնորհիվ օտարերկրյա ուսանողների թիվն առնվազն կկրկնապատկվի

ՀՀ բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող օտարերկրյա ուսանողների թվաքանակը



ՀՀ բուհեր օտարերկրյա քաղաքացիների փաստաթղթերի ընդունման և հաշվառման էլեկտրոնային հարթակի գործարկումից հետո օտարերկրյա դիմորդների թվի դինամիկան